


Getar

memory of a river

Գետառ

գետի հիշողությունը



Getar

Գետար

Getar

Memory of a River

Ed. by Tigran Amiryan

Cultural and Social Narratives Laboratory
Yerevan
2023

Գետառ

գետի հիշողությունը

Գլխավոր խմբագիր՝
Տիգրան Ամիրյան

Մշակութային և սոցիալական նարատիվների
լաբորատորիա
Երևան 2023

ՀՏԴ 94(479.25):316
ԳՄԴ 63.3(5Հ)+60.5
Գ 480

ISBN 978-9939-1-1499-6

Գետառ. գետի հիշողությունը: Խմբային մենագրություն,
խմբ. Ամիրյան Տ., Գալստյան Հ., CSN Lab, Երևան, 2023,
264 էջ:

Այս գիրքը բացահայտում է Գետառ գետի կարևոր նշանակությունը Երևան քաղաքի սոցիալական և ուրբանիստական հիշողության ձևավորման գործում: Գետն ուսումնասիրվում է տարբեր մեթոդների և գիտակարգերի միջոցով (մարդաբանություն, ուրբանիզմ, բնապահպանություն և այլն): Համագործակցելով ճարտարապետների, լուսանկարիչների և նկարազարդողների հետ՝ գրքի հեղինակները ի հայտ են բերում Գետառի գեոպոետիկան և հիդրոպոետիկան, ինչպես նաև ստեղծում գետի ուրույն վիզուալ պատկերը: Հարուստ և ինքնատիպ վիզուալ նյութերից գատ հրատարակությունը ներառում է քաղաքացիների հուշերն ու բանավոր պատմությունները, որոնցում Գետառը շարունակում է մնալ քաղաքի ինքնության կարևոր մասը:

Getar: Memory of a River. Collective monograph ed. by
Amiryan T. Galstyan H., CSN Lab, Yerevan, 2023, 264 p.

This book reveals the significance of the Getar River for the formation of Yerevan's social and urban memory. The river is studied through various methods and disciplines (anthropology, urban studies, environmentalism, etc.). Together with architects, photographers and illustrators, the authors of this book explore Getar's geopoetics and hypopoetics, as well as create a unique visual image of the river. In addition to rich and authentic visual materials, the publication includes oral stories of Yerevan's inhabitants, in whose memories Getar continues to be a vital part of the city's identity.

ISBN 978-9939-1-1499-6



9 789939 114996

Գլխավոր խմբագիր՝
Տիգրան Ամիրյան

Editor-in-chief
Tigran Amiryán

**Գրական խմբագիր և
թարգմանիչ՝**
Հովհաննես Գալստյան

**Literary translator
and editor**
Hovhannes Galstyan

Սրբագրիչ՝
Թագուհի Սուլիյան

Proofreader
Taguhi Susliyan

Գրքի և շապիկի ձևավորող՝
Կլիմ Գրեչկա

Layout&cover designer
Klim Gretchka

Պատկերագրող՝
Հարություն Թումաղյան

Illustrator
Harutyun Tumagyan

Նետազոտական թիմ՝
Արսեն Աբրահամյան
Մարիամ Եղիազարյան
Մանե Գրիգորյան
Սոնա Քաալանթարյան
Սոնա Կարապողոսյան

Research team
Arsen Abrahamyan
Mariam Yeghiazaryan
Mane Grigoryan
Sona Kalantaryan
Sona Karapoghosyan



**EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION**



**Շվեդիա
Sverige**



**CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY**

Գիրքը հրատարակվել է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» հասարակական կազմակերպության կողմից «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա»-ն: Նետազոտությունում արտահայտված տեսակետները/բովանդակությունը կարող են չհամընկնել Սիդայի տեսակետների հետ:

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ:

This book has been published by the Cultural and Social Narratives Laboratory NGO within the “Civil Society Support for Ensuring Impact on Reforms” project. This publication has been financed by the Swedish International Development Cooperation, Sida. Responsibility for the content rests entirely with the creator. Sida does not necessarily share the expressed views and interpretations.

The “Civil Society Support for Ensuring Impact on Reforms” project implemented by Eurasia Partnership Foundation with support of the Swedish International Development Cooperation Agency, Sida.

- 8—12 The Beginning
of the River
- Tigran
Amiryan
- 16—72 Getar. The River
On hydropoetics
and urban memory
of the Getar River
- aram
pachyan
- 74—80 getaromancy
- 82—90 The Year of the Flood
- Mari
Chakryan
- 92—116 Getar As an Ecosystem
- 118—194 The Unwritten Memory
of the River
- Garine
Boghossian
- 196—212 Appearance//
Disappearance//
Reappearance: Reflections
on a river
- 214—227 The Spatiality
of the River
- Andrey
Ivanov
- 228—254 Getar:
The Taste for Dériving
Vernacular Meditation
- Har
Toum
- 256—263 The Visual Memory
of the River

	9—15	Գետի սկիզբը
Տիգրան Ամիրյան	17—73	Գետառ: Գետ Գետառ գետի հիդրոպոետիկայի և քաղաքային հիշողության մասին
արամ պաշյան	75—81	գետառնոցի
	83—90	Հեղեղի տարին
Մարի Չաքրյան	93—117	Գետառը որպես էկոհամակարգ
	119—195	Գետի չգրված հիշողությունը
Կարին Պողոսեան	197—213	Հայտնվելը// Անհետանալը// Վերստին հայտնվելը. Մտորումներ գետի մասին
	215—227	Գետի Տարածականությունը
Անդրեյ Իվանով	229—255	Գետառ-դրելֆը. Վերնակույսար խոհեր
Հարություն Թումադյան	257—263	Գետի կերպավորումը

The Beginning of the River

Tigran Amiryan

Գեորգի սկիզբը

The idea for this book came along when my colleagues of the CSN Lab and I were working on a project to study the vernacular neighborhoods of Yerevan. Even then, while collecting the oral histories of almost extinct old neighborhoods such as Firdus, Krivoy, Nork and Kond, we kept hearing the name of Getar in the stream of endless stories. This river seemed to be an integral part of the invisible urban space. It belonged to the history of the city and constituted the narrative of its past; we heard the name of the river, but almost never saw the river itself. It became obvious to us that Getar belonged to an urban fabric that had been consigned to oblivion. To hear the murmur of the river and see its short stretches that have not yet vanished from sight, we have to strain not only our ears and eyes, but also our memory. Getar's memory embodies a fragment of Yerevan's urban memory that has been completely destroyed and covered with the concrete of modern gentrification. It fell victim to urban transformations which not only subordinated the river to the Soviet functionalist projects but also to the post-Soviet practices of exploiting urban space exclusively for economic gain.

The river was visible only through the veil of personal and family stories, constituting a fragment of social and architectural memory that we attended to on a daily basis to understand the identity of the city and its inhabitants – a deeply traumatized identity that has never been properly analyzed. Before we had even finished the book “Firdus: Memory of a Place” we already knew that we were to create another one – “Getar: Memory of a River.” The new book was literally written by the old city's inhabitants themselves. It encompasses their stories about the houses that once overhung the river banks, about their everyday life when they used to soak their feet in Getar's cool and gurgling waters on sweltering summer evenings as well as their memories and fragments of postmemory related to Getar's floods that occurred around the middle of the last century.

Nowadays when attitudes towards natural resources in urban space are changing dramatically, when closed rivers are being restored, thus becoming the sources and centers of newly created green neighborhoods, the need to talk about the river seems more urgent,

Այս գրքի գաղափարը ծնվեց տարիներ առաջ, երբ ես ու լաբորատորիայի գործընկերներս աշխատում էինք Երևանի վերնակույյար թաղամասերի ուսումնասիրման նախագծի վրա: Դեռևս Ֆիրդուսի, Կրիվոյի, Նորքի, Կոնդի և ուր որ է չքացող մյուս հնամենի թաղամասերի մասին բանավոր պատմությունների հավաքագրման ժամանակ անվերջ պատումների հորձանուտում շարունակ հնչում էր Գետառի անունը: Այս գետը կարծես աներևույթ քաղաքային տարածության անբաժան մասը լիներ: Գետը քաղաքի պատմության կարևոր մասնիկն էր, քաղաքի անցյալի պատումը. լսում էինք անունը, բայց ինքնին գետը գրեթե միշտ անտես էր մնում: Արդեն հասկանում էինք, որ Գետառը պատկանում է մոռացության մատնված քաղաքային մի հյուսվածքի, ու որ գետի խշռոցը լսելու ու անցորդների տեսադաշտից դեռ չանհետացած գետահունը տեսնելու համար հարկավոր է լարել ոչ միայն լսողությունն ու տեսողությունը, այլև հիշողությունը: Գետառի հիշողությունը Երևանի քաղաքային հիշողության այն հատվածն է, որ հիմնովին քանդվել է և ծածկվել արդի ջենտրիֆիկացիայի շաղախով, դարձել քաղաքային փոխակերպումների գոհ, որոնց առանցքում ոչ միայն գետը ստորադասող խորհրդային ֆունկցիոնալիստական նախագծերն էին, այլև քաղաքային տարածությունը բացառապես տնտեսական շահույթ ստանալու նպատակով օգտագործելու հետխորհրդային պրակտիկան:

Գետը տեսանելի էր միայն անձնական ու ընտանեկան հիշողությունների շղարշի միջից՝ ներկայանալով իբրև սոցիալական և ճարտարապետական հիշողության պատառիկ, որի հետ ամեն օր շփվելով փորձում էինք հասկանալ քաղաքի և այնտեղ բնակվող մարդկանց ինքնությունը, որը ենթարկվել է խորը տրավմայի, բայց այդպես էլ վերլուծության առարկա չի դարձել: «Ֆիրդուս. տեղի հիշողությունը» գիրքը դեռ չավարտած՝ արդեն գիտեինք, որ «Գետառ. գետի հիշողությունը» գրքի ստեղծման ճանապարհին ենք: Նոր գիրքը բառիս բուն իմաստով գրել են հենց հին քաղաքի բնակիչները՝ պատմելով իրենց տների մասին, որոնք ժամանակին թևածում էին գետի ափերին, իրենց առօրյա կյանքի մասին, երբ ամռան տոթ երեկոներին ոտքերը թրջում էին Գետառի սառնորակ ու խոխոջուն ջրերում և ի մի բերելով նախորդ դարի կեսերին Գետառի վարարման մասին հիշողություններն ու հետհիշողության պատառիկները: Այսօր, երբ արմատապես փոխվում են քաղաքային տարածության մեջ գտնվող

especially in the context of comprehending the identity of a hot city such as Yerevan.

In addition to its ecological and urban significance, Getar is a vital part of the city's cultural past and social memory. Since Yerevan's identity is more damaged than ever before, studying memory of the river is a high priority. Along with tracing Getar's hydropoetics, we were also documenting its memory by compiling an oral history which forms an important part of this book.

The book originated not only from the inhabitants' memories and folk narratives about the city's past, but also from fiction. In particular, the writer Aram Pachyan is one of those authors who through his own writing tried to bring back to a reader the river's memory which had been erased over the past half-century.

Throughout this comprehensive project to provide a hydropoetic study of the river we have been supported by all those who too recognized the significance of the river and its memory in shaping the identity of the city. Experts from a variety of disciplines were involved in this process: ecologists and anthropologists, urbanists and architects, writers and illustrators. Thanks to the joint efforts, we managed to bring to fruition the first book ever produced in Armenia about Getar and its memory. It adopts an interdisciplinary approach and covers a rather long period of transformations of Yerevan's urban and water spaces.

I would like to express my gratitude to my colleagues and collaborators who have been by my side during the long months of creating this publication. First of all, I am greatly indebted to my friends, experts in their field who spent many hours, days and weeks working on the written and visual narratives about the memory of the river, namely Harutyun Tumaghyan (architect and artist), Hovhannes Galstyan (editor), Klim Grechka (designer and editor), Arsen Abrahamyan (architect). I am grateful to all those who lent a helping hand to work on archival materials and collect oral histories as well as provided their input at different stages of the project, namely Mariam Yeghiazaryan, Sona Karapoghosyan, Sona Kalantaryan, Mane Grigoryan, Samson Martirosyan. I would also like to thank the entire staff of the Eurasia Partnership Foundation for realizing the importance of this research project and offering their support.

բնական ռեսուրսների նկատմամբ մոտեցումները, երբ նորից բացվում են փակ գետերը՝ դառնալով նորաստեղծ կանաչ գոտիների առանցքն ու ակունքը, գետի մասին խոսելն առաջնահերթ խնդիր է հատկապես շոգ կլիմա ունեցող Երևանի ինքնությունը հասկանալու համատեքստում:

Ուրբանիստական և էկոլոգիական նշանակություն ունենալուց բացի Գետառն ուրույն տեղ է զբաղեցնում քաղաքի մշակութային պատմության և սոցիալական հիշողության մեջ: Քանի որ այսօր Երևանի ինքնությունն աղճատված է առավել քան երբևէ, գետի հիշողությունն ուսումնասիրելն անհետաձգելի գործ է թվում: Գետի հիդրոպոետիկան ի հայտ բերելուն զուգահեռ մենք վավերագրում էինք նաև գետի հիշողությունը՝ կազմելով Գետառի բանավոր պատմությունը, որն այս գրքի կարևոր մասերից մեկն է:

Գիրքը սկիզբ է առել ոչ միայն բնակիչների հիշողություններից ու քաղաքային անցյալի ժողովրդական պատումից, այլև գեղարվեստական արձակից: Մասնավորապես, գրող Արամ Պաչյանը այն հեղինակներից է, որ իր գրի միջոցով փորձեց վերադարձնել ընթերցողին գետի՝ ավելի քան կես դար ջնջվող հիշողությունը:

Գետառի հիդրոպոետիկ ուսումնասիրման այս ընդգրկուն նախագիծն ի կատար ածելու ընթացքում մեզ աջակցել են մարդիկ, որոնք նույնպես կարևորել են քաղաքի ինքնության հարցում գետի և դրա մասին հիշողության նշանակությունը: Այս գործի մասնակից են դարձել տարբեր բնագավառների մասնագետներ՝ բնապահպաններ և մարդաբաններ, ուրբանիստներ և ճարտարապետներ, գրողներ և նկարիչներ: Համատեղ ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց ավարտի հասցնել Գետառի և գետի հիշողության մասին առաջին գիրքը Հայաստանում, որը միջգիտակարգային բնույթ ունի և ընդգրկում է Երևանի քաղաքային ու ջրային տարածության փոխակերպումների բավականին երկար ժամանակահատված:

Ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել այս հրատարակությունը գլուխ բերելու երկարուձիգ ամիսների ընթացքում օգնության ձեռք մեկնած գործընկերներիցս յուրաքանչյուրին: Առաջին հերթին շնորհակալ եմ ընկերներիս՝ իրենց գործի գիտակ մարդկանց, որոնք ժամեր, օրեր ու շաբաթներ շարունակ աշխատում էին գետի հիշողության գրավոր և վիզուալ պատումների վրա, մասնավորապես՝ ճարտարապետ և նկարիչ Հարություն Թումադյանին, գրքի խմբագիր Հովհաննես



Գալստյանին, խմբագիր և ձևավորող
Կլիմ Գրեչկային, ճարտարապետ Արսեն
Աբրահամյանին: Երախտապարտ եմ բոլոր
Նրանց, ովքեր օգնեցին արխիվային նյութերի և
գետի բանավոր պատմությունների հավաքման
հարցում, ինչպես նաև իրենց ներդրումն ունեցան
ծրագրի տարբեր փուլերում, մասնավորապես՝
Մարիամ Եղիազարյանին, Սոնա
Կարապողոսյանին, Սոնա Քալանթարյանին,
Մանե Գրիգորյանին, Սամսոն Մարտիրոսյանին:
Շնորհակալությունս եմ հայտնում նաև Եվրասիա
համակազործակցության հիմնադրամի
ամբողջ թիմին՝ այս հետազոտական նախագծի
կարևորությունը հասկանալու ու աջակցություն
ցուցաբերելու համար:

Getar. The River

On hydropoetics
and urban memory
of the Getar River

Tigran Amiryan

Գետառ: Գետ

Գետառ գետի
հիդրոպոետիկայի
և քաղաքային
հիշողության մասին

...we saw cars reduced to their roofs, streetlamps truncated till only their tops rose above the surface like water lilies, houses cut up like children's blocks, a cat treed for several days.

Roland Barthes

All the cellars were filled with muddy water and sand. Boards, household items and other material were floating down the street. A carriage trying to cross the street overturned.

*Evidence from an archive report
on the 1908 flooding of the Getar River.*

Ջրածածկ մեքենաների տանիքներն էին միայն երևում, հենասյուներից կտրված փողոցային լապտերներն ասես ջրի մակերեսին լողացող ջրաշուշաններ լինեին, տները մանկական խորանարդիկների պես բաժան-բաժան էին եղել, կատուն մի քանի օր ծառի վրա նստած էր մնացել:

Ռոյան Բարդ

Բոլոր նկուղները ողողված էին ցեխով ու ավազով: Փողոցի երկայնքով լողում էին տախտակներ, տնային կահկարասի և այլ առարկաներ: Փողոցը հատելու փորձ արած կառքը շրջվել էր:

Վկայություն 1908 թ. Գերատի վարարման մասին արխիվային զեկույցից

Getar is a river

This statement alone can trigger conflicts, contradictions and clashes between different languages describing the city. The language of memory shaped by everyday life of Yerevan's inhabitants rebels against the language of bureaucracy – a language that represents the city as seen from above, its bird-eye view^①. An administrative language has not passed through everyday urban experiences and does not mingle with the stream of urban vernaculars; it describes Getar very briefly, ending a conversation before it has begun.

Getar is a closed river. Getar is not a river but rather a watercourse polluted by sewage and industrial wastes.^② When Yerevan's inhabitants say "Getar is a river," they simply express their dissent through language; they write the river by using their own knowledge, experience and vernacular.

By ignoring experience-based writing, the language of bureaucracy aims to "make the complexity of the city readable."^③

A bureaucratic text erasing the river from the city, is no more than a fiction, a trick, which is resisted by the memory of the city and its inhabitants. Striving to represent reality more accurately and comprehensively as well as to elucidate the city's *memory space* and *writing space*, official narratives prove to be an optical illusion, an unreal and fictional matter.

^① De Certeau, M. *The Practice of Everyday Life*. University of California Press, 1984, p. 92

^③ De Certeau, p. 93.

^② For more detail see Mari Chakryan's article in this book.

Գետառը գետ է

Այս պնդումն ինքնին առիթ է, որ միմյանց հակադրվեն, հակասեն ու բախվեն քաղաքի նկարագրության տարբեր լեզուներ: Երևանցիների ամենօրյա կյանքում ձևավորված հիշողության լեզուն ընդվզում ու մերժում է մեկ այլ լեզու, որը բնորոշ է բյուրոկրատիային ու չափում է քաղաքը վերևից՝ թռչնի թռիչքի բարձրությունից^❶:

Առօրյայի բովով չանցած ու քաղաքային խոսվածքների բնականոն ընթացքին անհաղորդ վարչարարական այս լեզուն հակիրճ է նկարագրում Գետառը, ասելիքը դեռ չսկսած՝ ավարտում է:

Գետառը փակ գետ է: Գետառը ոչ թե գետ է, այլ մի ջրատար, որտեղ կեղտաջրեր են թափվում^❷: «Գետառը գետ է» ասելիս երևանցիները բառիս բուն իմաստով ընդվզում են լեզվի միջոցով՝ գրի առնելով գետը սեփական գիտելիքի, փորձի ու լեզվի հիման վրա: Բյուրոկրատիայի լեզուն, անտեսելով փորձառության վրա հիմնված գիրը, «ընթեռնելի է դարձնում քաղաքային բարդ տարածությունը»^❸: Գետը քաղաքից ջնջած վարչարարական տեքստը հորինվածք է, հնարք, որին ընդդիմանում է քաղաքի ու քաղաքացիների հիշողությունը: Ձգտելով ճշգրիտ ու համապարփակ ներկայացնել իրականությունը և պարզեցնել քաղաքի *հիշողության տարածությունն* ու *գրության տարածությունը*՝ պաշտոնական շարադրանքը ականա վերածվում է տեսողական պատրանքի, անհրական ու մտացածին տեքստի:

❶ De Certeau, M. *The Practice of Everyday Life*. University of California Press, 1984, p. 92

❷ De Certeau, p. 93.

❸ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մարի Չաքրյանի հոդվածը այս գրքում:

707

1949
№83

83

ПРЕДВАРИТЕЛЬНОЕ ЗАКЛЮЧЕНИЕ № 2
ПО СЕЛЕПРОПУСКНОМУ КАНАЛУ РСТЕДАР
В ПРЕДЕЛАХ ГОР. БРЕВАНА.



φυσ. 6

Getar is a closed river

The river does not exist.

It is invisible to the locals and tourists, unknown to Yerevan's inhabitants and not recognized by municipal authorities. This mode of non-existence intensifies and becomes unquestionable. There is no river in Yerevan, this is a city without a river. The presence of Hrazdan does not refute this argument. This river does not flow through the center, it is inconspicuous, outside the heart of the city. It is under the authority of a deep gorge, as if belonging to an ancient urban epic and prehistoric proto-language. It is hidden from the city's inhabitants and remains in the depths of the rocky historical past. Expelled from social space, it has also lost its erotic dimension; it is far away from the place of our encounter with the "other" – the place of ludic forces and ruptures.❶

Getar should be placed in this semantic center, as it is the river that once ran through urban space and thereby gave a meaning to it.

However, this semantic quality is long neglected and forgotten.

As Olivia Laing puts it in her meditative memoir – "There is a mystery about rivers that draws us to them, for they rise from hidden places and travel by routes that are not always tomorrow where they might be today."❷ In fact, even if one imagines that the river is not stifled with asphalt, few people can tell where the river rises from. Flowing from the Kotayk province which is separated from the capital by barren lands, Getar disappears several times across the mountainous terrain of Yerevan before entering the city. Getar appears in urban space as abruptly as it drops out of sight; it runs into Hrazdan, a river in the southern part of the city. On several 20th-century maps the Yerevan Lake is also marked as sea – an imaginary element epitomizing the longing of sweltering southern cities for distant shores. The name of the Tbilisi Sea emerged from the landlocked city's same desire for a missing vital element. It should be noted that both the Yerevan Sea and the Tbilisi Sea are reservoirs built in the

❶ Barthes, R. "Sémiologie et urbanisme" in "L'Architecture d'aujourd'hui." CL III, 1970

❷ Laing, O. *To the River. A Journey Beneath the Surface.* Canongate, 2011, p. 18

Գետառը փակ գետ է

Գետ չկա: Անտեսանելի է զբոսաշրջիկներին ու տեղացիներին, քաղաքացիներին անծանոթ է, իսկ քաղաքային իշխանությունները չեն ընդունում, որ գոյություն ունի: Չգոյության այս բանաձևը բազմապատկվում է, դառնում բացարձակ. Երևանը գետ չունի, առանց գետի քաղաք է: Հրազդանի ամկայությունը հակափաստարկ չէ. այդ գետը կենտրոնով չի հոսում, աննշմարելի է, քաղաքի սրտից հեռու: Հրազդանը գտնվում է խորունկ կիրճի իշխանության ներքո՝ ասես պատկանելով քաղաքի մասին հնագույն էպոսի, մինչպատմական քաղաքային նախալեզվի: Քաղաքացիների տեսադաշտից անհետացած՝ կարծես շարունակում է մնալ քարքարոտ պատմական անցյալի խորքերում: Սոցիալական տարածությունից անջատվելով՝ դուրս է մնացել ու հեռու քաշվել նաև էրոտիկ տարածությունից, որը «ուրիշի» հետ հանդիպման վայրն է, գծողությունների ու բաժանումների վայրը¹: Իմաստաբանական այս ակտիվ կենտրոնում պիտի լինի Գետառը՝ մի գետ, որ ժամանակին կատարել է տարածությունը հատելով դրան նշանակություն հաղորդելու գործառույթը: Բայց քաղաքն իմաստավորելու այս հատկանիշն անտեսվել է, մոռացության մատնվել:

«Գետերում թաքնված մի խորհուրդ կա, որով գրավում են մեզ. դրանք սկիզբ են առնում անտեսանելի ակունքներից և հոսում հուններով, որոնք վաղը կարող են չլինել այնտեղ, որտեղ այսօր են», – իր փաստագրական արձակում գրում է Օլիվիա Լենգը²: Եթե նույնիսկ պատկերացնենք, որ Գետառը քաղաքի ներսում չի պատվել ասֆալտի շերտով, երևանցիներից քչերը կարող են հստակ ասել, թե որտեղից է սկզբնավորվում գետը: Հոսելով Կոտայքի մարզից, որը մայրաքաղաքից բաժանված է ամայի հողազանգվածներով, Գետառը, դեռ Երևան չմտած, մի քանի անգամ պատսպարվում է քաղաքի լեռնային մակերևույթի տակ:

Գետառը հանկարծակի է հայտնվում քաղաքային տարածության մեջ ու նույնքան կտրուկ էլ անհետանում՝ թափվելով քաղաքի հարավային մասում գտնվող գետի՝ Հրազդանի մեջ: Անցյալ դարի որոշ քարտեզներում Երևանյան լիճն անվանվում է ծով՝

¹ Barthes, R. “Sémiologie et urbanisme” in “L’Architecture d’aujourd’hui.” CL III, 1970

² Laing, O. *To the River. A Journey Beneath the Surface.* Canongate, 2011, p. 18

1950s. However, by calling these reservoirs a sea, the inhabitants of the two capitals created an imaginary spacetime that imbues their urban identities with antiquity, grandeur and vastness.

Getar whose waters flow into Hrazdan (which in turn runs into the Yerevan Sea) seems to be an integral part of urban myths. If Getar disappears, its poetic ambience will vanish as well.

Barthes compares the pacifying view of an overflowing river with the “euphoric myth of movement” (“looking at the photographs of a flood, each spectator feels himself conveyed by proxy”) and defines the river flow as the “elementary form of all geographic perception.”^❶ The loss of a river implies “a suspension of the functions and the *names* of terrestrial topography.”^❷ Getar has been deprived of the mystery which drew us to the river. The city has been deprived of its river which would run into the sea.

“Unlike a lake or sea, a river has a destination and there is something about the certainty with which it travels that makes it very soothing, particularly for those who’ve lost faith with where they’re headed,” writes Olivia Laing about the Ouse River in her reflections on the significance and destiny of world’s natural waterways.^❸ Now that Yerevan lost the integral part of its myth which connected the land to the sea, the city has also abandoned its hope of being soothed; the immutable image of a stone city is forever imprinted on the minds of Yerevan’s inhabitants.

Getar is present in historical discourse, clearly visible on old maps of the colonial era, and often mentioned by poets and travelers. However, as soon as we move from a historical narrative into the city’s memory space, we witness an insoluble conflict. The section of the river that flows (or once flowed) through the city center, conveying meaning and creating its semantic and semiotic fabric, was eventually closed and channeled into a sewer in 2008. Municipal authorities rationalized their

❶ Barthes, R. *The Eiffel Tower and Other Mythologies*. University of California Press, 1997, p. 32

❷ Ibid

❸ Laing, O. p.18

երևակայական մի տարր, որով արտահայտվել է հեռավոր ծովեզերքի նկատմամբ հարավային տող քաղաքների կարոտը: Հենց այս բացակա, բայց կենսական տարրն ունենալու ցանկությամբ է պայմանավորված Թբիլիսյան ծով անվանումը մի քաղաքում, որը թեև ելք չունի դեպի ծով, բայց շոգ ամիսներին ջրի կարոտ է: Պետք է նշել, որ թե Երևանյան, թե Թբիլիսյան ծովերը 1950-ականներին ստեղծված ջրամբարներ են: Այս ավազանները ծով կոչելով՝ երկու մայրաքաղաքների բնակիչները ստեղծում են երևակայական մի տարածաժամանակ, որտեղ այդ քաղաքների ինքնությունը դառնում է հնամենի, վսեմ ու ծովածավալ:

Գետառը, որի ջրերը հոսում են դեպի Հրազդան (որն իր հերթին թափվում է Երևանյան ծով), ասես քաղաքային առասպելի անբաժան մաս լինի: Ահա թե ինչու գետի անհետացմամբ կչքանա նաև դրա բանաստեղծականությունը:

Բարտը վարարող գետի հանգստավետ տեսարանը համեմատում է «բերկրալի սահքի առասպելի» հետ («վարարման լուսանկարներին նայելիս թերթի ընթերցողը կարծես ինքն էլ սահի գետի վրայով»), իսկ գետի հունը համարում «տեղանքի ընկալման տարրական ձևը»¹:

Գետառի կորուստը հանգեցնում է մի վիճակի, երբ Բարտի բառերով ասած՝ «վերանում են տեղագրության գործառույթներն ու տեղանունները»²: Երևանն այլևս խորհուրդ չունի, որով հմայում է մեզ: Քաղաքն այլևս գետեր չունի, որոնք վաղ թե ուշ ծովին պիտի միախառնվեին:

«Ի տարբերություն ծովի կամ լճի, գետը վերջնակետ ունի, որի ուղղությամբ հոսելու անխախտությունն ասես սփոփանք լինի, հատկապես նրանց համար, ովքեր հուսահատ կանգ են առել կես ճանապարհին»³, – նշում է Լենգը՝ աշխարհի բնական ջրահոսքերի նշանակության ու ճակատագրի համատեքստում մտորելով Ուզ գետի մասին: Կորցնելով սեփական առասպելի հանգույցը, որով իրար էին միանում ցամաքն ու ծովը, Երևանը զրկվեց նաև սփոփանք գտնելու հույսից, իսկ քարակերտ քաղաքի անշրջելի դիմագիծը հավերժ դրոշմվեց բնակիչների գիտակցության մեջ:

Գետառը գոյություն ունի պատմական խոսույթում, հստակ երևում է գաղութային ժամանակաշրջանի

26



գութ. 18

Getar on the Koryun-Heratsi crossroad,
The National Archives of Armenia.

Գետառը Կորյուն-Հերացի խաչմերուկին,
ՀՀ Ազգային արխիվ:



фис. 19

decision with simplistic arguments (need for road expansion due to increasing number of vehicles). Funnily enough, it was also argued that the river might flood. The last serious flooding, which I will refer to later, occurred in 1946. Municipal authorities started talking about the danger of a new flood half a century after the last incident.

A whole new generation has grown up in the city since 2008. During this period the flow of people to the capital from other parts of the county has not stopped. Today, neither the young living here, nor the new inhabitants have seen the river. In their minds Yerevan is a city without a river. However, the older generation distinctly remembers the river; it is the only bearer of Getar's fading memory.

The conflict of memory arises due to the fact that different ways of inhabiting urban space coexist. Some inhabitants still live in a city that does not have a river. Meanwhile, for other groups the river is an essential part of Yerevan's identity. The status of Getar is suspended between physical body and dream. As it flows, the river fulfills its daily function, but at the same time it is dead. It is both existent and non-existent in urban space.

In his meditations on water Bachelard writes that a river constantly flows and overcomes death. "Water always flows, always falls, always ends in horizontal death."¹ Due to this immortality, the river is not subject to historical dimension. The river has no history, it is beyond historical discourse. The river belongs to those who managed to immerse themselves in its waters, who had the chance to hear the murmur of its stream and later to those who irrigated their gardens with its water. If one considers the river as a temporal concept, then it belongs exclusively to the memory of those who stayed in close contact with the river. Getar's history consists of various attempts to capture, measure, subjugate the river and close it in the bowels of the earth. These stories constitute Getar's martyrdom. As Bachelard notes in his

¹ Bachelard, G. *Water and Dreams. An Essay On the Imagination of Matter*. The Pegasus Foundation, Dallas, 1983, p. 6 .

քարտեզներում, հաճախ հիշատակվում
ճանապարհորդների ու բանաստեղծների կողմից:
Սակայն պատմական պատումից դեպի հիշողության
տարածությունն դեռ քայլ չարած՝ անլուծելի
հակամարտության ականատես ենք դառնում: Գետի
այն հատվածը, որն անցնում է (կամ ժամանակին անցել
է) քաղաքի կենտրոնով՝ նշանակություն հաղորդելով
տարածությանը և ձևավորելով դրա նշանագիտական և
իմաստաբանական հյուսվածքները, 2008 թ. քաղաքային
իշխանությունների որոշմամբ վերջնականապես փակվել
է և կցվել կոյուղուն: Այդ որոշումն արդարացնում էին
պարզամիտ պատճառաբանությամբ (տրանսպորտային
միջոցների ավելացմամբ պայմանավորված՝ փողոցների
լայնացում) կամ ավելի ծիծաղաշարժ պատրվակով՝ այն,
որ Գետառը կարող է ջրհեղեղի պատճառ հանդիսանալ:
Վերջին մեծ ջրհեղեղը, որի մասին դեռ կխոսեմ, տեղի է
վունցել 1946 թ., իսկ ահա գետը փակելուց առաջ վարարման
վտանգի մասին հիշեցին ջրհեղեղից կես դար հետո:

2008 թ.-ից հետո երևանցիների մի ամբողջ
սերունդ է մեծացել: Այս ընթացքում չի դադարել
մարդկանց հոսքը շրջաններից դեպի քաղաք:
Ու այսօր ոչ այստեղ ապրող երիտասարդները,
ոչ նորաբնակները չեն տեսել գետը, նրանց
գիտակցության մեջ Երևանը գետ չունեցող
քաղաք է: Միայն ավագ սերունդն է Գետառի
խամրող հիշողության կրողը, այդ սերնդի
մարդիկ են լավ մտապահել գետը:

Հիշողության բախումը պայմանավորված է այն
հանգամանքով, որ զուգահեռաբար գոյակցում
են քաղաքի բնակեցման տարբեր սովորույթներ.
բնակիչների մի մասը շարունակում է ապրել մի
քաղաքում, որ գետ չունի, իսկ մյուսի համար Գետառը
Երևանի ինքնության անքակտելի մասն է:

Գետառի կարգավիճակն առկախված է
ֆիզիկական մարմնի ու երազի արանքում: Գետն
իր հունով ընթանալով՝ կատարում է իր ամօրյա
գործառույթը, բայց միևնույն ժամանակ մեռած է.
կա ու չկա քաղաքային հյուսվածքում:

Գետի մասին գրելիս Բաշլյարը նշում է, որ այն
չի կարող մեռնել, քանի որ անդադար գոյատևելով
հաղթահարում է մահը. «Ջուրը միշտ հոսում է, միշտ
թափվում ու միշտ ընկնում հորիզոնական մահով»¹: Այս
անմահության շնորհիվ գետը ենթակա չէ պատմական
չափման: Գետն իր պատմությունը չունի, պատմական
խոսույթից դուրս է և պատկանում է միայն նրանց, ովքեր

❶ Bachelard, G. *Water and Dreams. An Essay On the Imagination of Matter*. The Pegasus Foundation, Dallas, 1983, p. 6 .

phenomenological study, “the pain of water is infinite.”^❶ Hence all the endeavors to subdue Getar are only pathetic efforts to reproduce what is intrinsic to water.

Thus, Getar is a river only in a physical sense; it is a stream of life which has been destroyed, erased from memory and deprived of its natural purpose. Still, Getar exists. Though the river is mostly closed in the central part of the city, in some places it is visible to passersby. It is also present in various discourses. Urban space is a crossroads of discourses that form a kind of poem, not focusing on a specific plot, but rather unfolding in urban semiotics^❷, in its polyphony of different styles, different narratives and different memories. Any attempt to understand the city cannot be successful without analyzing the main discursive flows that somehow intersect the closed riverbed.

The body of the river

The simplest but perhaps most misleading way of understanding any river is to map it and describe it in terms of space and time. Getar originates in the Kotayk province and is 24 km long. Flowing from the neighboring region through Nork and the central part of the city, it runs into Hrazdan near Shengavit. According to various sources, the course of the river has changed several times. Some maps and descriptions of the underground water channels south of the center indicate that many tributaries and streams that branched off from Getar and once irrigated gardens in the city, disappeared. A concise factual description will also note that the river was mentioned or described by several 19th century authors, or that it flooded and was eventually channeled into sewer pipes.

The river is no longer a river. This will be a short account of its birth, adventures and demise, a summary of all descriptions of its body, a documentation of its physical length and age, as well as a testimony to the

❶ Ibid

❷ Barthes, R. “Semiologie et urbanisme”

հասցրել են սուզվել նրա ջրերում, լսել ալիքների ծփանքը, իսկ ավելի ուշ՝ նաև նրանց, ովքեր Գետառի ջրով են ոռոգել իրենց այգիները: Եթե գետը դիտարկենք որպես ժամանակային հասկացություն, ապա այն պատկանում է բացառապես այն մարդկանց հիշողությանը, որոնք հաղորդակից են եղել գետի կյանքին: Գետառի պատմությունը կազմված է գետը զավթելու, չափելու, հպատակելու, գետնի տակ փակելու փորձերից: Սրանք Գետառի նահատակության պատմություններն են: Ինչպես Բաշլյարն է ձևակերպում ջրի հնագիտության մասին իր աշխատության մեջ, «ջրի տառապանքը սահման չունի»^❶: շեռնապես Գետառը նվաճելու ձգտումը նման է խղճուկ մի փորձի, որով կրկնում ես այն ամենը, ինչ ի սկզբանե ներհատուկ է ջրին:

Այսպիսով Գետառը միայն ֆիզիկապես է գետ, ավելի ճիշտ՝ կենսահոսք, որը ոչնչացրել ու ջնջել են հիշողությունից, շեղել իր բուն նպատակից: Այսուամենայնիվ Գետառը գոյություն ունի: Քաղաքի կենտրոնում գետը մեծ մասամբ փակ է, բայց տեղ-տեղ դեռ տեսանելի է անցորդներին ու դեռ հայտնվում է տարբեր խոսույթներում: Հենց քաղաքային տարածության մեջ են խաչվում այս խոսույթները՝ յուրատեսակ մի պոեմ շարադրելով, որը կենտրոնանում է ոչ թե ինչ-որ սյուժեի շուրջ, այլ ծավալվում քաղաքի նշանագիտական համակարգում^❷՝ միահյուսվելով այնտեղ ամփոփված հիշողությունների, ասելիքների ու ոճերի բազմաձայնությանը: Քաղաքը հասկանալու ցանկացած փորձ չի կարող պսակվել հաջողությամբ առանց վերլուծելու հիմնական խոսույթները, որոնք այսպես թե այնպես ինչ-որ կետում հատում են փակ գետահունը:

Գետի մարմինը

Գետը հասկանալու ամենապարզ ու թերևս ամենախաբուսիկ միջոցն այն քարտեզագրելն է, տարածության և ժամանակի մեջ նկարագրելը: Գետառը սկիզբ է առնում Կոտայքի մարզից, երկարությունը 24 կմ է, հարևան շրջանից հոսելով՝ անցնում է Նորքով, ապա՝ Երևանի կենտրոնական հատվածով ու Շենգավիթի մոտակայքում թափվում Հրազդան գետը: Տարբեր աղբյուրներից իմանում ենք, որ գետի հունը մի քանի անգամ փոխվել է: Բացի այդ,

view that the efforts of public authorities and scientists to accurately characterize its ever-changing body are always futile. This endeavor to erase the river by means of a descriptive and unreal narrative is not the invention of the recent past (when the river vanished from sight and moved into the city's memory space); it dates back almost a century.

In one of the archival documents, titled "Report on the expeditionary study of mudflow formations in basins of the Gedar and Jrvezh Rivers" and prepared by the Water-Energy Research Institute of the Academy of Sciences of the Armenian SSR in 1949, the river is described both in terms of the Soviet *nomenklatura* and the prevailing functionalist approach to urban space and its natural resources. After a brief overview of the concept of mudflow, the author of this document sets about denying the existence of the river.

"The Gedar River, a left bank tributary of the Zangu River, is not a river in the strictest sense. It is a kind of gully through which spring meltwater and stormwater runoffs flow."^❶

Subjected to a peculiar inventory and alienated through language, the river lost its identity in this document. The sole purpose of this ever-changing and eternal body was articulated in a verdict.

The author of the document writes: "The word '*сель*' [mud] is of Arabic origin and literally means turbulent flow." He also lists other names for this phenomenon: sil (Central Asia), Ruffi (Switzerland), Mure (Tyrol).

Thus, this study begins with the description of a phenomenon that causes serious harm to the environment. After it makes its point that Getar is not a river and lists other names for mudflows, the report proceeds to its main conclusion: mudflows cause damage by "impeding the economic use of urban lands."^❷

❶ Academy of Sciences of the Armenian SSR, Water-Energy Research Institute. "Report on the expeditionary study of mudflow formations in basins of the Gedar and Jrvezh Rivers," RA National Archives, File Number-710, Yerevan, 1949, p. 31 [in Russian].

❷ Ibid, p.11

պատմական քարտեզներից և Փոքր կենտրոնից հարավ ընկած մի քանի ստորգետնյա ջրատարների նկարագրությունից դատելով՝ Գետառից ճյուղավորված և ժամանակին քաղաքի այգիները ոռոգած բազմաթիվ առուներ ու վտակներ անցել են գետնի տակ: Փաստագրական համառոտ ակնարկում անդրադարձ կլինի նաև այն մասին, որ գետը նկարագրել ու հիշատակել են 19-րդ դարի տարբեր հեղինակներ կամ որ վարարել է ու ի վերջո փակվել կոյուղու խողովակների մեջ: Գետն ալյուս գետ չէ: Սա կլինի գետի ծննդյան, արկածների ու մահվան համառոտ շարադրությունը, գետի մարմնի բոլոր նկարագրությունների ամփոփումը, վավերագրումն այն բանի, թե ինչպես է ձգվել գետը տարածության ու ժամանակի մեջ և վկայություն այն մասին, որ բոլոր ժամանակներում էլ իշխանության կամ գիտության ներկայացուցիչների՝ գետի հարափոփոխ մարմինը ճշգրիտ բնութագրելու ջանքերն ապարդյուն են: Գետը քաղաքից ջնջող փաստագրական անիրական պատումը միայն ոչ վաղ անցյալին բնորոշ չէ (երբ գետը անհետացավ կենտրոնի բնակիչների տեսադաշտից և մուտք գործեց հիշողության տարածություն), նախորդ դարում է ծագել:

Արխիվային փաստաթղթերից մեկում, մասնավորապես՝ 1949 թ. Խորհրդային Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ջրաէներգետիկ ինստիտուտի պատրաստած «Գեդառ և Զրվեժ գետերի ավազաններում սելավների առաջացման գիտարշավային ուսումնասիրության մասին» զեկույցում գետը նկարագրված է ոչ միայն խորհրդային Նոմենկլատուրայի լեզվով, այլև քաղաքի և քաղաքային տարածության բնական ռեսուրսների նկատմամբ խորհրդային ֆունկցիոնալիստական մոտեցման տեսանկյունից: «Սելավային հոսքեր» հասկացության մասին համառոտ ակնարկից հետո փաստաթղթի հեղինակը լծվում է գետի գոյությունը ժխտելու գործին: «Գեդառը Զանգու գետի ձախակողմյան վտակն է և լիարժեք գետ չէ, այլ հեղեղատային գետահուն, որով հոսում են գարնանային ձնհալի ժամանակ առաջացած ջրերը և հորդառատ անձրևների ժամանակ առաջացած սելավը»¹:

¹ Академия Наук Армянской ССР, Водно-Энергетический Институт, Отчет об экспедиционному изучению селеобразования в бассейнах рек Гедар Джрвеж, г. Ереван-1949 г. с. 31 [գրիծ համար 710, ՀՀ ազգային արխիվ].

Most studies on Getar were carried out following flooding events; the body of the river exists only where it is running a high fever. In Soviet archives the river is a sick body. The river was defined or articulated only after it had caused serious damage to the city; its history consists of destruction. Getar's story amounts to madness. It's not surprising that the language of Soviet functionalism literally diagnoses this disorder, removing the sick body from the healthy and useful city. It is no coincidence that in his analysis of Bachelard's "Water and Dreams," Foucault noted that in the Western imagination, reason belongs to terra firma, while unreason is an infinite and uncertain oceanic space. "Madness," writes Foucault, "is the flowing liquid exterior of rocky reason."^❶

Historical knowledge about Getar began to accumulate at the end of the 19th century, when a river, like any other urban element, was viewed as a separate spatial unit and studied properly. Rainfall events caused flooding in 1873 (on August 27), 1908 (in early March), 1923 (in the summer months), 1924 (in July), 1925 (on July 25), 1928 (in June). The largest flood, when the water depth reached three meters, occurred on 25 May 1946. It caused "53 million rubles worth of damage, 800 houses were destroyed and another 610 were damaged. Several dozen inhabitants were killed."^❷

In 1950 the same research institute revisited the issue of flooding as the latter occurred repeatedly (although since 1946 no flood had caused severe damage to the city).

"Gedar flows across the entire city of Yerevan from north to south. Jrvezh, another small river or rather a dry ravine, passes across the southern part of the city from east to west. A downpour is enough to turn these brooks into devastating torrents. Gedar in particular may cause massive destruction to the city, which occurred on May 26, 1946 as a result of a two-hour rainstorm."

❶ Foucault, M. "L'eau et la folie." In *Dits et Ecrits*, vol. I., Paris: Gallimard, 1994, p. 268.

❷ Academy of Sciences of the Armenian SSR, Water-Energy Research Institute. "Estimation of flood discharge of the rivers of Gedar and Zangu," RA National Archives, File Number-82, Yerevan, 1950 [in Russian].

Այս փաստաթղթի առաջին իսկ էջերում որպես գույք գրանցվելով՝ Գետառն ասես օտարովեց լեզվի միջոցով, կորցրեց դիմագիծը: Գետառնի գործով վճիռ կայացվեց, որում ձևակերպվել էր այս հարափոփոխ ու հարատև մարմնի գոյության միակ նպատակը:

«Սելավը, – գրում է գեկույցի հեղինակը, – արաբերենից փոխառված բառեզր է, որը նշանակում է հորդ հոսանք»: Հեղինակը թվարկում է նաև այդ երևույթի այլ անվանումներ՝ *carr* (Միջին Ասիա), *Ruffi* (Շվեյցարիա), *Mure* (Տիրոլ):

Այսպիսով, գետի բացատրությունը սկսվում է շրջակա միջավայրին լուրջ վնաս հասցնող երևույթի նկարագրությամբ: Այնուհետև ընդգծվում է, որ Գետառը գետ չէ, իսկ ջրահոսքի այլ անվանումների թվարկումից հետո ներկայացվում է գետին հարակից իմաստ հաղորդող գլխավոր եզրակացությունը՝ սելավային հոսքերը վնաս են պատճառում՝ «խոչընդոտելով հողերի ժողովրդատնտեսական օգտագործումը»¹:

Գետառի մասին բոլոր հետազոտություններն արվել են ջրհեղեղից հետո. գետի մարմինը գոյություն ունի բացառապես այնտեղ, որտեղ դողերոցքի մեջ է: Խորհրդային արխիվի գիտական նկարագրության մեջ գետի մարմինը ներկայացվում է իբրև հիվանդ մարմին: Գետի մասին խոսվում է միայն այն բանից հետո, երբ վնաս է հասցվել քաղաքին, այսինքն՝ գետի պատմությունը շարադրվել է որպես ավերածությունների պատմություն: Գետառի պատմությունը գետի խելագարության մասին է, ու զարմանալի չէ, որ խորհրդային ֆունկցիոնալիզմի լեզուն հստակ ախտորոշում է այս խանգարումը՝ հիվանդ մարմինը հեռացնելով առողջ ու պիտանի քաղաքից: Պատահական չէ, որ մեկնելով Բաշլյարի «Ջուրը և երազները» աշխատությունը՝ Ֆուկոն նշում է, որ արևմտյան երևակայության մեջ ողջախոհությունը ցամաքամասի առանձնահատկությունն է, մինչդեռ ջուրը անորոշության անծայրածիր օվկիանոս է: «Խելագարությունը, – գրում է Ֆուկոն, – քարակոպ բանականության հոսուն ջրածածկույթն է»²:

Գետառի մասին պատմական գիտելիքը սկսել է ձևավորվել XIX դարի վերջին, երբ գետը քաղաքային մյուս տարրերի հետ մեկտեղ համարվեց առանձին տարածական միավոր և դարձավ ուսումնասիրության առարկա: Անձրևների ժամանակ Գետառը վարարել է 1873 թ. օգոստոսի 27-ին, 1908 թ. մարտի սկզբին,

The flood of 1946 terrified the city which was utterly exhausted and impoverished after the war. This natural disaster, which damaged the urban infrastructure, was not only a research subject but also became deeply embedded in social memory. The city's oral history preserves the memory of this catastrophic event by combining the accounts of several floods into a single narrative. During the interviews, conducted between 2019 and 2022, people living in different parts of Yerevan, reminisced about the flood, mainly talking about the damage inflicted on the city and its inhabitants.

Popular stories about the flood abound, recounting how the river flooded the KGB basements, why the Soviet government decided to close the river (although this happened much later), how the flood washed away corpses from the morgue, how the water flooded into houses and carried away children from their cradles. This is an endless chain of stories; over the years each of them became a basis of urban legends in its own right.

There is a contrast between the disaster depicted in the accounts of Yerevan's inhabitants and the 'disastrous situation' described in archival documents. For Yerevan's inhabitants, the flood is part of their history, an integral part of their lives and that of the river, whereas from a scientific perspective natural disasters are just an opportunity to subdue the river in search of its effective use.

Almost all accounts contain two emotional moments: the flood and the river closure. While the flood constitutes an almost faded and washed-out narrative belonging to postmemory, ❶ the river closure is distinctly remembered by many. Getar was closed under one of the most corrupt mayors of Yerevan. People are happy that it happened. Although nobody trusts the official version, which stated that the river was closed to expand the road, Yerevan's inhabitants seem to think that the closure was an absolute necessity at the time. Over time the river was polluted and no clean-up activities were organized by municipal

❶ Hirsch, M. "The Generation of Postmemory." *Poetics today*, 29(1), 2008, 103-128.

1923 թ. ամռան ամիսներին, 1924 թ. հուլիսին, 1925 թ. հունիսի 25-ին, 1928 թ. հունիսին, իսկ 1946 թ. մայիսի 25-ին տեղի է ունեցել ամենաուժգին վարարումը, երբ ջրի խորությունը հասել է երեք մետրի: Ջրհեղեղը պատճառել է «53 մլն ռուբլու վնաս, 800 տուն քանդվել են, իսկ 610-ը՝ վնասվել: Մի քանի տասնյակ մարդ է զոհվել»¹: 1950 թ. նույն գիտական ինստիտուտը կրկին անդրադառնում է Գետառի խնդրին, քանի որ վարարումները դեռ շարունակվում էին (թեև 1946-ի ջրհեղեղին հաջորդած ոչ մի վարարում քաղաքին լուրջ վնաս չի հասցրել):

«Գեղառ գետակի հունը ձգվում է հյուսիսից հարավ Երևանի ամբողջ երկայնքով: Քաղաքի հարավում գտնվող նմանատիպ մեկ այլ գետակ՝ Ջրվեժը, որը համարյա չորացած մի գետահուն է, ձգվում է արևելքից արևմուտք: Կարճատև հորդառատ անձրևը հերիք է, որ այս երկու գետակները վերածվեն ավերիչ հեղեղային հոսանքների: Քաղաքում մեծ ավերածությունների պատճառ կարող է դառնալ հատկապես Գեղառը, ինչը տեղի ունեցավ 1946 թ. մայիսի 25-ին երկու ժամ տևած տեղատարափ անձրևից հետո»:

1946 թ. ջրհեղեղը սարսափահար արեց սաստիկ հյուծված և հետպատերազմյան աղքատության մեջ ապրող քաղաքը:

Քաղաքային ենթակառուցվածքներին վնաս պատճառած տարերային աղետը ոչ միայն գիտական հետազոտությունների նյութ դարձավ, այլև թափանցեց սոցիալական հիշողության խորքը: Քաղաքի բանավոր պատմությունը պահպանել է այս աղետալի իրադարձության մասին հիշողությունը՝ մի քանի ջրհեղեղների պատճառած ավերածությունները մի պատումի մեջ զուգարդելով: 2019-2022 թթ. անցկացված հարցազրույցների ժամանակ քաղաքի տարբեր շրջանների բնակիչները վերհիշում էին ջրհեղեղը՝ հիմնականում պատմելով քաղաքին ու բնակիչներին հասցված վնասների մասին:

Ջրհեղեղի մասին հայտնի պատմությունները շատ են, այդ թվում՝ այն մասին, թե ինչպես գետը հեղեղեց ՊԱԿ-ի (ԿԳԲ) նկուղները, թե ինչպես խորհրդային իշխանությունները որոշեցին փակել գետը (ինչն ավելի ուշ տեղի ունեցավ), թե ինչպես ջրհեղեղի այիքները դիտարկվեցին դուրս հանեցին անշունչ մարմինները,

¹ Определение расхода паводков р.р. Гедар-Джрвеж. - 1950. / Академия Наук Армянской ССР Водно-энергетический институт // Национальный архив Армении, Фонд 263, опись (список) 2, дело 85.

authorities. Hence, the scene of a stinky river littered with trash was distressing for people living in central areas. However, they talk about this with great regret as if sympathizing with the river. As an elderly inhabitant of Yerevan put it during the interview – “...the construction work took a long time, there was dirt and dust everywhere, we hoped it would end soon, it was some kind of long funeral.”

This sympathy for a river that has lost its purity reminds us of the “literary” rivers explored by Bachelard. Their pollution fills us with repugnance and rancor as “we sympathize obscurely with the drama of the purity and impurity of water.”^❶ The body of the river that Yerevan’s inhabitants were unable to clean up, has been shrouded in darkness like the pages of history from the early 1990s to 2008 – economically, socially and culturally, the gloomiest period of the country’s independence. Getar’s paradox pertains to this ambivalence of memory; it is a topos of fear and disgust, and at the same time – a topos of desire and longing.

The name of the river

The name “Getar” already contains “river” (in Armenian *get* means river), so for Yerevan’s inhabitants its closure implied not only a suspension of a specific river, but also an elimination of a natural phenomenon. The name gives the impression of something unremarkable and unobtrusive as if we deal with a domestic animal that has no nickname.^❷ On the other

❶ Bachelard, G., p. 193.

❷ Besides creating an image of an abandoned and useless river, or a ‘non-river,’ this name also implies that it originates from folk tales. Not attached to any historical event or era, it belongs to all, by speaking a single language. This namelessness is reminiscent of a river described in Sokolov’s “A School for Fools,” where it was so natural for an urban language not to give the river a particular name: “And maybe there simply was no river? Maybe. But what was it called? The river was called.”

թե ինչպես ջուրը լցվեց տուն ու օրորոցից քշեց-տարավ երեխաներին: Ահա այդ պատմությունների անվերջ շղթան, որոնցից յուրաքանչյուրը տարիների ընթացքում քաղաքային առասպելների հիմք է դարձել: Երևանի բնակիչների պատմություններում պատկերված աղետը ու արխիվային փաստաթղթերում նկարագրված «աղետալի վիճակը» տարբերվում են նրանով, որ երևանցիների համար ջրհեղեղը քաղաքի պատմության մի մասն է, իրենց և գետի կենսագրության անբաժան մասը, մինչդեռ հետազոտական աշխատանքի մեջ բնական աղետն ուղղակի մի առիթ է՝ գետը զավթելու և այն արդյունավետ օգտագործելու ուղիներ գտնելու համար: Գրեթե բոլոր քաղաքացիների պատմածներում երկու հուզական պահ կա՝ ջրհեղեղն ու գետի փակումը: Եթե ջրհեղեղը վերածվել է հետհիշողության՝ ժամանակի ընթացքում դժգունացած ու ջնջված պատումի¹, ապա գետի փակումը բոլորովին չի մոռացվել: Գետը փակվել է Երևանի ամենակոռումպացված քաղաքապետներից մեկի օրոք: Երևանցիներն ուրախ են, որ Գետառը փակեցին: Թեև ոչ ոք չի հավատում պաշտոնական վարկածին, թե գետը փակվել է մայրուղին ընդլայնելու նպատակով, այսուամենայնիվ, քաղաքացիների կարծիքով, Գետառի փակումն անփուսափելի էր, այդ օրերին անհրաժեշտություն էր դարձել: Տարիների ընթացքում գետն աղտոտվել էր, իսկ քաղաքային իշխանությունները մաքրման աշխատանքներ չէին իրականացնում, ուստի կենտրոնի բնակիչների համար տհաճ էր դարձել աղբով լի ու գարշահոտ գետին նայելը: Այդուհանդերձ, քաղաքացիներն այս մասին պատմում են մեծ ափսոսանքով՝ ասես գետին կարեկցելով: Մի տարեց երևանցի գրույցի ժամանակ ասում էր. «...դանդաղ էին փակում, չորս կողմը շինարարական աղբ ու փոշի էր, մտածում էինք՝ երբ պիտի ավարտվի այս ամենը, ոնց որ երկար թաղում լիներ»:

Մաքրությունը կորցրած գետի հանդեպ այս գթասրտությունը նորից հիշեցնում է Բաշլյարի վկայակոչած գրական գետերը, որոնց աղտոտվածությունը զգվանք ու սրտխառնոց է առաջացնում, քանի որ «կարեկցում ենք ջրին, երբ այն դառնում է մաքրության ու անմաքրության միջև ծավալվող դրամայի թատերաբեմ»²: Գետի մարմինը, որը երևանցիներն ի վիճակի չեղան մաքրելու, փակվեց այնպես, ինչպես փակվեցին 1990-ականներից մինչև 2008 թ. ընկած շրջանի պատմության էջերը, որոնք սոցիալական, տնտեսական և մշակութային առումներով

hand, its universality endows the river with uniqueness – it is called Getar because it is one of a kind, the one and only. It is the city river.

In spoken language, Getar is pronounced “Gedar.” In literature, the dual meaning of water is more condensed – the river is called Getar-chai (in Turkish *chai* or *çay* means river). Armenian and Islamic roots coexist in this name, in the memory of this twofold statement. In recollections of Yerevan’s inhabitants the Muslims lived on the other side of the river. Getar’s bridges are like hyphens, ensuring that the two sides live together rather than erase each other. Getar – Chai. The latter seems to resolve the conflict between the two ethnic or religious groups. The name itself is part of social history in which the water morphs into a place of compromise and coexistence. During endless disagreements about the ownership over a territory, the flowing stream reconciles the conflicting parties by abandoning its specific name and assenting to be simply called “river” in both languages.

Between two frames

Getar has such an important place in Yerevan’s identity and memory that despite multiple pressures exerted on it, it resurfaces in the city’s visual and auditory memory. Everything – whether it is a report on Getar, or a government decree – that tries to confine the discourse on river to monosyllabic expressions such as “it’s a closed river,” or “it’s not a river at all,” does not withstand the fluidity and mobility of cultural memory. As we know, “the stream is more durable than marble.”^❶ Getar’s images speak of its significance for the city. On the other hand, they are peculiar artifacts of a lost cultural landscape as well as signs of the past.

The two photographs, taken almost half a century apart, in 1946 and 1986, are perhaps the most famous visual reminders of the river once existing in the city.

The first photograph was taken after the flood. It depicts a small bridge covered with uneven wooden planks. The riverbed is barely visible,

❶ Barthes, R. Oeuvres complètes, Vol. 1, Paris, Seuil, p. 25.

ամենածանրն էին երկրի համար: Գետի անունը միշտ կմնա որպես քաղաքի հիշողության հակաուտոպիա: Գետառի պարադոքսը պայմանավորված է իր մասին հիշողության հակասականությամբ. այն միաժամանակ թե վախի ու հակակրանքի տարածություն է, թե ցանկության ու կարոտի:

Գետի անունը

«Գետառ» անունն արդեն «գետ» է պարունակում, այդ պատճառով երևանցիների համար գետի փակմամբ փականքի տակ է դրվում ոչ միայն կոնկրետ գետը, այլև գետը՝ որպես երևույթ: Այս անվանումը սկզբից անտերունչ ու աննշմարելի բան է հիշեցնում, ասես գործ ունենանք մի ընտանի կենդանու հետ, որին մականունն չեն տվել^❶, բայց հետո այդ ունիվերսալությունը գետն օժտում է բացառիկությամբ՝ Գետառ, նմանը չկա, միակն է: Քաղաքի գետն է:

Բանավոր խոսքում Գետառը Գեդառ են արտասանում, իսկ գրականության մեջ ջրի այս երկիմաստությունն ավելի խտացած է՝ Գեդառ-չայ: Իսլամականն ու հայկականը համագոյակցում են այս անվանման մեջ, այս կրկնօրինակության հիշողության մեջ: Բնակիչների հիշողության մեջ մահմեդականներն ապրում էին գետից անդին: Գետառի կամուրջները գծիկներ են, որոնց միջոցով երկու կողմերը ոչ թե ջնջում են իրար, այլ ապրում միասին՝ Գեդառ – Չայ: Գետի այս անվանումն ասես վերացնի երկու եթնիկական կամ կրոնական խմբերի միջև հակամարտությունը: Անվանումն ինքնին սոցիալական պատմության մաս է, որում ջուրը փոխգիջման ու համակեցության վայր է: Հողը մեկին կամ մյուսին պատկանելու մասին անվերջ խոսակցությունների ու անհամաձայնությունների ժամանակ գետը հոսելով լուծում է գտնում ու հաշտեցնում հակամարտող կողմերին՝ հրաժարվելով կոնկրետ անվանումից ու երկու լեզվով էլ կոչվելով ուղղակի «գետ»:

❶ Այս անվանումը ստեղծում է նաև լքված ու անպիտան գետի կերպար, մի «չգետ» միևնույն ժամանակ ապացուցելով, որ գետի անունը ժողովրդական ավանդազրույցից է սերում ու պատկանում է ոչ թե ինչ-որ պատմական իրադարձության կամ դարաշրջանի, այլ բոլորին միաժամանակ՝ խոսելով

մի ընդհանուր լեզվով: Այս անանունությունը հիշեցնում է Ս. Սոկոլովի գետը «Հիմարների դպրոցում», որտեղ քաղաքային լեզվի կամ քաղաքի լեզվի համար այնքան բնական էր գետին ինչ-որ անուն չտալը. «Գուցե ոչ մի գետ էլ չկա՝ ր: Գուցե: Բայց ի՞նչ էր կոչվում: Հենց գետ էլ կոչվում էր»:

we see only the empty space underneath the bridge. Almost all photographs of Getar, taken in the first half of the 20th century, show heaps of stones driven ashore by a mudflow. Historical archives preserve only this image of Getar; it is a stonestream rather than a waterstream. The most dramatic picture of this series is shot at the entrance to the city morgue (called “anatomicum” on old maps), littered with huge stones. In black-and-white images, Getar is a stone river belonging to the Stone Age of the Soviet past, to the Ice Age of photographic memory. The bleak scene of erratically scattered stones is in contrast to the image of a young woman almost halfway across the bridge. The woman wearing a light-colored dress and high heels and maintaining a strict posture walks across the bridge over the river which has brought large quantities of stones and mud to the shore. On closer inspection we see two more women; one walks behind the main character as if copying her gestures, while the other, sitting on the opposite bank, waits for these two. Behind the walking women there is a one-storey building with a stone barrier fencing off the house from the watercourse. There are tree-covered hills in the distance and dense trees near the building. Nowadays you will never see such a panorama in Yerevan. This scene takes us back to the past not only due to the quality of the medium – the yellowed paper – or due to the signs of time – the main character’s white shirt and light-colored skirt, the small and compact handbag she holds in her hand – but also thanks to the landscape that has long disappeared from view. This photo depicts a “non-place.” It performs the function of shooting twice; it stops the flow of reality (by capturing the moment ^❶) in which the young woman crosses the bridge and at the same time confirms the loss of this urban space by consigning it to the archives of the city’s history museum.

❶ A term used by André Rouillé, a theorist of photography. See-Rouillé, A. *La photographie: entre document et art contemporain*. Paris: Gallimard. 2005, p. 500

Երկու կադրերի արանքում

Գետառը Երևանի ինքնության և հիշողության մեջ այնքան կարևոր տեղ է զբաղեցնում, որ չնայած իր վրա գործադրված բազմաթիվ ճնշումներին՝ շարունակ հայտնվում է քաղաքի թե տեսողական, թե լսողական հիշողության մեջ: Այն ամենը, Գետառի մասին փաստագրական պատում լինի, թե քաղաքային իշխանության որոշում, որով փորձ է արվում գետի մասին խոսույթը սահմանափակել «փակ գետ է» կամ «գետ չէ» համառոտաբանությամբ, չի դիմանում մշակութային հիշողության հոսունությանն ու շարժունությանը: Ինչպես հայտնի է՝ «գետը մարմարից էլ ամուր է»^❶: Գետառի պատկերները, լինելով կորուայալ մշակութային լանդշաֆտի ձեռակերտ նմուշներ ու անցյալի նշանագրեր, պատմում են մեզ քաղաքի կյանքում գետի ունեցած կարևորության մասին:

1946 թ. և 1986 թ. արված երկու լուսանկարները, որոնք միջև կես դարի տարբերություն կա, համարվում են քաղաքում ապրած գետի մասին հիշեցնող թերևս ամենահայտնի կադրերը:

Առաջին լուսանկարն արվել է ջրհեղեղից հետո: Այնտեղ անհամաչափ փայտե տախտակներով ծածկված փոքր կամուրջ է, որի տակ գետի հունը գրեթե չի երևում, տեսնում ենք միայն կամրջի տակ գոյացած քարե խոռոչը: Գետառի գրեթե բոլոր լուսանկարներում, որոնք արվել են մինչև նախորդ դարի կեսերը, գետափին սելավների կուտակած քարաբեկորներ են պատկերված: Արխիվում պահպանվել է միայն գետի այդ կերպարը. Գետառն ավելի շուտ քարի, քան ջրի հուն է: Այս շարքի ամենադրամատիկ լուսանկարն արված է քաղաքային դիահերձարանի (հին քարտեզներում անվանվում է անատոմիկում) մուտքի մոտ, որտեղ մեծ-մեծ քարեր են թափված: Սևուսպիտակ լուսանկարների Գետառը քարերի գետ է՝ մնացած խորհրդային անցյալի քարի դարից, լուսանկարչական հիշողության սառցադաշտային ժամանակաշրջանից: Ցաքուցրիվ քարերի այս կոշտ ու կոպիտ տեսարանին հակադրվում է կամրջի համարյա կեսը հասած երիտասարդ կնոջ պատկերը: Բաց գույնի հագուստով, ձիգ կեցվածքով ու բարձրակրունկներով կինը կամրջի վրայով անցնում է գետը, որը մեծ քանակությամբ

The second famous photograph was taken in the mid-1980s. There are no traces of disaster in this color image; it depicts the urban idyll of a Soviet city equipped with modern infrastructure. This idyll will soon be swept away by another disaster. We see a red tram passing along Khanjyan Street. The steep walls along the river are paved with smooth and durable stones (according to urban legends, these walls and other similar structures were built by German prisoners of war). The Youth Palace (also known as “Kukuruznik”) and the statue of Mother Armenia loom in the distance. In a few years’ time the age of disasters will begin, and as in the previous photograph, taken half a century ago, the cityscape will change dramatically. Almost the entire architectural heritage of Soviet modernism will be mutilated, Kukuruznik will disappear, the two- or three-storey buildings with red and dark gray façades will be destroyed or disfigured beyond all recognition. This shot fulfills the most important function of photography – it captures the moment and stops the flow of life, i.e. of urban life. In a few years’ time when the Soviet Union collapses and the country plunges into a series of disasters (earthquake, economic blockade, war, emigration), everything will come to a halt. Trams will no longer pass through the city, Getar will be channeled into a sewer and forever hidden from passersby. Sontagian juxtapositions^❶ between taking a photo and killing multiply in this picture; the latter becomes the last portrait of the city before its death.

Following the river closure, the urban landscape has changed. Many practices of everyday life, preserved only in social memory, gradually fade away. An inhabitant of Moskovyan Street recounted how young athletes used to go jogging along the riverbank, while his neighbor reminisced about her youth when she used to cross the bridge over Getar on her way back from the university. For her, that moment was like a magic passage from one reality to another; leaving the university milieu, she entered a territory which was associated with adulthood in her mind: “we lived a carefree life across the

❶ “Just as the camera is a sublimation of the gun, to photograph someone is a sublimated murder – a soft murder, appropriate to a sad,

frightened time.” (See-Sontag, S. *On Photography*. RosettaBooks, Farrar, Straus and Giroux. New York, 2005, p. 10).

քար ու ցեխ է կուտակել ափին: Ավելի ուշադիր նայելիս երկու կին էլ են նշմարվում, որոնցից մեկը, ասես նկարի գլխավոր հերոսուհուն կրկնօրինակելով, քայլում է նրա հետևից, իսկ մյուսը, հանդիպակաց ափին նստած, սպասում է այս երկուսին: Քայլող կանանց թիկունքում քարե միհարկանի շինություն է՝ բնակելի հատվածը ջրի հոսանքից պաշտպանող քարապատնեշով, հեռվում ծառապատ սարալանջ է երևում, իսկ տան մտո՝ խիտ ծառեր: Այսպիսի համայնապատկեր երևանում էլ չես տեսնի: Այս տեսարանը մեզ դեպի անցյալ է տանում ոչ միայն դեղնամած թղթի միջոցով, որի վրա տպվել է լուսանկարը, կամ ժամանակի նշանների օգնությամբ, որոնցից են, օրինակ՝ քայլող կնոջ սպիտակ վերնաշապիկն ու բաց գույնի կիսաշրջագգեստը, ձեռքի փոքր ու հարմար պայուսակը, այլև այն լանդշաֆտի շնորհիվ, որը վաղուց անհետացել է երևանցիների տեսադաշտից: Սա «չտեղի» լուսանկար է, սպանելու գործառույթը կրկնակի կատարող լուսանկար. կանգնեցնում է իրականության հոսքը (ֆիքսելով պահը¹), որտեղ երիտասարդ կինն անցնում է կամրջի վրայով ու միևնույն ժամանակ մեկընդմիջտ հաստատում այս քաղաքային տարածության կորուստը՝ հանձնելով այն քաղաքի պատմության թանգարանի արխիվ:

Գետառի երկրորդ հայտնի լուսանկարն արվել է 1980-ականների կեսերին: Գունավոր կադրում աղետի հետքերի փոխարեն արդի ենթակառուցվածքներով հագեցած խորհրդային քաղաքի հովվերգություն է: Հանգստավետ մի վիճակ, որը մի քանի տարի անց քշել-տանելու է մի ուրիշ աղետ: Երևում է Խանջյան փողոցով անցնող կարմիր տրամվայը, ափի երկայնքով կառուցված պատվարներն արդեն սալապատված են հարթ և դիմացկուն որմնաքարերով (քաղաքային առասպելների համաձայն՝ այս պատնեշները, ինչպես նաև այս տիպի բոլոր պարիսպները կառուցել են Երիտասարդության պալատը (Կուկուրուզնիկ) և Մայր Հայաստանի արձանը: Ընդամենը մի քանի տարի հետո կսկսի աղետների դարաշրջանը, ու ինչպես կես դար առաջ արված լուսանկարում, այնպես էլ այստեղ

¹ Լուսանկարչության տեսաբան Անդրե Ռույլեի օգտագործած եզրաբանությունը: Sté u' Rouillé, A. *La photographie: entre document et art contemporain*. Paris: Gallimard. 2005, p. 500.

river. There were many young people around.” We were also told that the Muslims lived “on the other side,” but these are hyperbolized and localized forms of memory. In fact, the Armenians and Muslims lived on both sides of the river. During the Soviet years the city was multiethnic and multireligious – a phenomenon that vanished like the river.

Apart from being a watershed or a borderline between different social and psychogeographical fragments of the city, the river also serves as a liaison between different parts of the urban imaginary. The oral history of Getar seems to set the past in motion, pointing to its aptitude for bringing together what is left out of citizens’ everyday life. Most of the stories about Getar mention what can be regarded as its imaginary starting point, or its source. Since the course of the river changed several times before it was closed, Getar is described through different locations, but in the popular imagination its invisible source is always “where the Zoo is located.” There are also countless stories about the university area. Flowing through this fragment of the city, the river entered into the active life of students who often spent their leisure time on its banks. Students used to walk to the university along the river. They met each other near the river. They crossed the river. The river was always present in the daily lives and memories of former students. As the river ceased to exist in this area, their stories would go in the historical archives as well. These recollections bear no relation to reality, they inhabit another urban space and belong to it. We walked from the university area towards Tigran Mets Avenue and collected the stories of those who used to live along the banks of Getar. In these accounts, recollections of youth and student life are interwoven with childhood memories in which the miniscule river transforms into a loud and treacherous giant capable of flooding houses, killing neighbors, destroying vegetable gardens and tearing down walls. In these childhood memories Getar embodies the eerie and supernatural water of vaguely remembered fairy tales. We used to swim in the river during hot summer days, we used to fish there, keeping in mind that it was not allowed to watch the waterstream for too long, otherwise it would wash us away. Getar lives not only in vernacular memory of the riverside Yerevan, but also in memories of the old districts neighboring

քաղաքային լանդշաֆտը կտրուկ կփոխվի: Խորհրդային մոդեռնիզմի գրեթե ամբողջ ժառանգությունը կաղավաղվի, կչքանա Կուկուրուզնիկը, կարմրագույն և մուգ մոխրագույն ճակատամասերով երկիարկ կամ եռահարկ հին շենքերը կոչնչացվեն կամ կդառնան անճանաչելի: Այս փաստագրական կադրը կատարում է լուսանկարչական ամենակարևոր գործառույթը՝ ֆիքսում է պահը, կանգնեցնում կյանքը, այս դեպքում՝ քաղաքային կյանքը: Մի քանի տարի անց, երբ փլուզվի խորհրդային պետությունը, իսկ Հայաստանը բազմաթիվ փորձություններ տեսնի (երկրաշարժ, տնտեսական շրջափակում, պատերազմ, արտագաղթ), ամեն ինչ իսկապես կանգ է առնելու: Քաղաքի մայրուղիներով տրամվայներ չեն անցնելու, իսկ Գետառի հունը փակվելու է կոյուղու մեջ ու ընդմիջտ թաքնվելու քաղաքացիներից: Լուսանկարելով սպանելու կամ լուսանկարելով կրակելու զոնթագյան զուգադրություններն¹ այստեղ բազմապատկվում են. կադրը դառնում է քաղաքի՝ մահից առաջ արված դիմանկարը:

Գետառի փակմամբ փոխվեց քաղաքի կերպարը, իսկ քաղաքացիների առօրեականության բազմաթիվ բաղադրիչներ պահպանվեցին միայն օրըստօրե աղոտացող սոցիալական հիշողության մեջ: Մոսկովյան փողոցի մի բնակիչ պատմում էր, թե ինչպես էին երիտասարդ մարզիկները վազքի պարապմունքներ անցկացնում գետափի երկայնքով: Այդ բնակչի հարևանուհին էլ ասում էր, որ համալսարանից վերադառնալիս Գետառն անցնում էր կամրջի վրայով, ու որ այդ պահին իր համար կարծես կախարդական անցում լիներ մի իրականությունից դեպի մյուսը: Համալսարանական միջավայրից հայտնվում էր քաղաքի այն մասում, որն իր համար զուգորդվում էր հասուն կյանքի հետ. «Գետի մյուս կողմում անհոգ էինք ապրում, երիտասարդներն էլ շատ էին»: Ուրիշներից էլ լսում էինք, որ «այն կողմում մահմեդականներն էին ապրում», սակայն սրանք հիշողության չափազանցված և խիստ տեղայնացված ձևեր էին: Իրականում գետի երկու կողմում էլ թե հայեր, թե մահմեդականներ կային. խորհրդային տարիներին Երևանը բազմաէթնիկ ու բազմակրոն քաղաք էր, մի երևույթ, որ գետի պես վերացավ:

¹ «Եթե տեսախցիկը հրազենի սուբլիմացիան է, ապա լուսանկարելը սուբլիմացված սպանություն է՝ հանդարտ սպանություն, թախծոտ ու

վախվորած ժամանակների բնորոշ» (տե՛ս՝ Sontag, S. *On Photography*. RosettaBooks, Farrar, Straus and Giroux. New York, 2005, p. 10):

the river. While recalling the former structure of their quarters, the inhabitants of Krivoy (curved street) and Firdus (neighborhood)^❶ describe Getar as a boundary that marks the edge of their quarters. Then family or childhood narratives about the river pause for a moment. It takes place where Getar descends underground, giving way to one of the main avenues and a large cinema building. Tigran Mets Avenue, switching names several times in the Soviet years (also called October Avenue, Mikoyan Avenue), continues to manifest itself as an official statement, a hegemonic discourse representing the solemn passage from the city square to the railway station. This stately narrative (urban commemoration of the October Revolution, naming after a great ruler) has its physical embodiment which can still be read today. For most of its length the avenue constitutes a highway with a row of five-storey stone buildings on each side. Some of these exemplary constructions are too gloomy, some are adorned with latticed balconies. This manifestation of grandeur and propriety still dominates the avenue, hiding the complexity of the city beyond the façades of stone buildings.

The encounter with the “other reality” occurs when we pass “Rossiya Cinema” and leave behind the very first buildings of Tigran Mets Avenue, descending to the depths of urban space and getting away from the city hubbub. Then we suddenly hear the gurgling stream, we see the watercourse and the riverbank houses, built by the locals decades, or even a century ago. In this realm of vernacular dwellings a folktale about Getar comes back to us, accompanied by the river itself which is hidden behind the veil of Soviet architecture along the entire avenue. An altogether different city appears before our eyes – we see its inner space. Only by moving through this space do we overcome the image of a dead river. Only by our willingness to walk through these places do we stop believing in the illusion of a photographic image, in which the river is part of a historical narrative, belonging to a no man’s land, to a lost city.

❶ See- Amiryanyan, T., Kalantaryan, S. (eds.). *Firdus: The Memory of a Place*. Collective monograph. CSN lab, Yerevan, 2019.

Քաղաքի տարբեր հոգեաշխարհագրական և սոցիալական հատվածների միջև ջրբաժան ու բաժանարար գիծ դառնալուց բացի Գետառը վերածվում է նաև քաղաքային երևակայության մասերն իրար կապող մի օղակի: Գետի բանավոր պատմությունը կարծես շարժման մեջ դնի անցյալը՝ մատնացույց անելով այն հմտությունը, որով միավորում է այն ամենը, ինչ դուրս է մնացել բնակիչների առօրյա կյանքից: Գետի մասին գրեթե բոլոր պատմություններում խոսվում է մի բանի մասին, որը կարելի է համարել գետի երևակայական սկզբնակետը, ակունքը: Քանի որ նախքան փակվելը գետի հունը մի քանի անգամ փոփոխվել է, Գետառի ուղղությունը տարբեր վայրերի միջոցով է նկարագրվում, բայց կենտրոնի բնակիչների պատկերացումներում գետի անտեսանելի ակունքը միշտ «այն հատվածում է, որտեղ կենդանաբանական այգին է»: Գետի ակունքից բացի բազմաթիվ պատմություններ կան քաղաքի համալսարանական հատվածի մասին, որտեղով հոսող գետը դարձել էր ուսանողների աշխույժ կյանքի մասը: Գետի ափին էին հաճախ անցկացնում իրենց ազատ ժամանակը: Գետի երկայնքով գնում էին համալսարան, գետի մոտ իրար հանդիպում, գետն անցնում: Գետը մշտապես ներկա էր նախկին ուսանողների առօրյայում ու հիշողություններում: Քաղաքի այս հատվածում գետի անհետացմամբ նրանց պատմությունները ևս փակվեցին պատմական արխիվում. դրանք այլևս չեն առնչվում իրականությանը, մնալով մի ուրիշ քաղաքում՝ պատկանում են դրան: Համալսարանից դեպի Տիգրան Մեծի պողոտային կից տարածք քայլելով՝ հավաքում էինք այն մարդկանց պատմությունները, որոնք մի ժամանակ ապրել են Գետառի ափին: Սրանցում ուսանողական երիտասարդ տարիների մասին պատումը միահյուսվում է մանկության մասին հիշողություններին: Մանկական հիշողություններ մի վայրի մասին, որտեղ Գետառ գետակը փոխակերպվում է աղվկոտ ու չար մի հսկայի, որն ի գորու է հեղեղել տները, սպանել հարևաններին, ոչնչացնել բանջարանոցները, քարուքանդ անել պատերը: Գետառն աղոտ հիշվող մանկական հեքիաթի կախարդական ջուրն է. մենք լողում էին գետում տոթակեզ օրերին, ձուկ որսում՝ չմոռանալով միմյանց զգուշացնել, որ ջրին երկար նայել չի կարելի, այլապես կքշի կտանի: Գետառը ներկա է ոչ միայն ափամերձ երևանի վերնակույտար հիշողության մեջ, այլև գետի հարևանությամբ գտնվող հին թաղամասերի հիշողություններում: Կրիվոյի (Կորի փողոց) բնակիչներն ու գրեթե բոլոր ֆիրդոսցիները¹,

¹ Տե՛ս «Ֆիրդոս. Տեղի հիշողությունը»: համբային մենագրություն, խմբ.՝ Ս. Մախրյան, Մ. Քալանթարյան, Երևան, CSN lab, 2019:

711
N 80

КАДЕМИЯ НАУК АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР
ПО ФИЗИКО-МАТЕМАТИЧЕСКИМ НАУКАМ

ОТЧЕТ

ПО ФИЗИКО-МАТЕМАТИЧЕСКИМ НАУКАМ
СОВЕТА Б. БАСЕВНАХ РЕД.
ГЕЛАР И. ДИРВЕЛИ
(Частей 1—XIII)

Б. БАСЕВНАХ—1949 г.

ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
 Центральный государственный архив
 научно-технической документации
 Арм. С.С.Р.
 ֆոնդ № 263 օրին. № 2 արք. № 80
 Բնագր. № 263 Բնագր. № 2 Բնագր. № 80

Հայաստանի
 ազգային արխիվ
 Հնդիք 263
 Ցուցակ 2
 Գործ 80

ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
 Центральный государственный архив
 научно-технической документации
 Арм. С.С.Р.
 ֆոնդ № 263 օրին. № 2 արք. № 80
 Բնագր. № 263 Բնագր. № 2 Բնագր. № 80

ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
 Центральный государственный архив
 Октябрьской революции и соц.
 строительства Арм. С.С.Р.
 ֆոնդ № 263 օրին. № 2 արք. № 80
 Բնագր. № 263 Բնագր. № 2 Բնագր. № 80

ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
 Центральный государственный архив
 Октябрьской революции и соц.
 строительства Арм. С.С.Р.
 ֆոնդ № 263 օրին. № 2 արք. № 80
 Բնագր. № 263 Բնագր. № 2 Բնագր. № 80

Here people call the river by its old name. The locals have a hand-on experience of communicating and coexisting with the river. It's one of the places in Yerevan where the river validates its own name, becoming a vital and legitimate part of the urban environment. Turning from Tigran Mets Avenue to Khorenatsi Alley, walking along the houses built on both sides of the river and crossing the small bridge that connects the alley to the backyards of the avenue buildings, we find ourselves in a side street named after Getar. Invisible to passersby along the main avenue, the river took shelter in the bosom of folk architecture and vernaculars.

Following this triumphant and brief appearance – when the river, inhabiting a small island of memory amidst the great ocean of oblivion, throws off the shackles of government decrees and transforms from nonexistence into a natural course – Getar disappears again, running into the underground pipes along the industrial area of the city. Flowing amidst the abandoned industrial buildings and gurgling now and then, the river reemerges again at the end of its path in the courtyards of the apartment blocks next to “Hayrenik Cinema.” Here the river reminds us of itself for the last time, as it reaches its natural end by merging with the Hrazdan River and running into the Yerevan Sea. Sooner or later, all rivers run into a sea.

Nonetheless, walking into this area, where the river comes into sight, coalescing with people's everyday life and folk architecture, we begin to realize once more that the internal space of the vernacular city is so different from its outer layer that the river is not a mere existence; it's almost owned by the locals. The river has become a stream of spoken words; it performs its communicative function, connecting the university area with green spaces, the recreation areas with the residential ones, the residential ones with the industrial ones, and the industrial areas with the residential areas again – those were already highly urbanized during the Soviet years. The river is mostly deprived of its language, it stutters as if trying to overcome the memory loss, artificially imposed on the city.

In addition to various social, economic and political discourses, Getar succeeds in creating another duality in urban space. The river

պատմելով իրենց թաղամասի կառուցվածքի և նախկին սահմանների մասին, ներկայացնում են Գետառը որպես իրենց թաղամասի սահմանագիծ: Այնուհետև գետի մասին մանկական ու ընտանեկան պատումը մի պահ ընդհատվում է: Այն մասում, որտեղ գետն անցնում է գետնի տակ՝ տեղը զիջելով գլխավոր պողոտաներից մեկին ու կինոթատրոնի հսկա շենքին:

Խորհրդային տարիներին մի քանի անգամ փոխելով անվանումը (Հոկտեմբերյան, Միկոյան)՝ Տիգրան Մեծի պողոտան շարունակում է ներկայանալ որպես հնչեղ խոսք, իշխանական խոսույթ, որով արտահայտվում է կենտրոնական հրապարակից դեպի երկաթուղի հանդիսավոր երթը: Այս իշխանամեծար պատումը (Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձը նշելու ուրբանիստական դրսևորումը, մեծ արքայի անունը) նաև ձև ու մարմին ստացավ, որը մինչև հիմա էլ կարելի է ընթերցել: Պողոտան գրեթե իր ամբողջ երկայնքով մայրուղի է, որի երկու կողմերում էլ ձգվում են հինգհարկանի քարե շենքեր, որոնց բնակարաններն արտաքինից ունեն ներկայացուցչական տեսք, երբեմն չափազանց մռայլ են, երբեմն էլ՝ զարդարված ցանցկեն պատշգամբներով: «Պատշաճության ու վսեմության» խոսքը մինչև այժմ էլ գերիշխում է այստեղ՝ թաքցնելով քաղաքային բարդ տարածությունը քարե շենքերի ճակատամասերից անդին:

«Ուրիշի» հետ հանդիպումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ անցնում ենք «Ռոսիա» կինոթատրոնը ու Տիգրան Մեծի սկզբնամասի շենքերը հետևում թողնելով՝ քայլում ենք դեպի քաղաքի խորքը, հեռանում պողոտայի աղմուկից ու հանկարծ լսում ջրի խոխոջուներ, տեսնում ջրի հունը, ավերի երկայնքով շարված տները, որոնք տեղացիները կառուցել են իրենց ձեռքով շատ վաղուց, գուցե մեկ դար առաջ: Վերնակույլար տների այս եզերքում վերագտնում ենք գետի մասին ժողովրդական առածը, կարծես դրա հետ մեկտեղ մեր գիրկն է գալիս պողոտայի ամբողջ երկայնքով խորհրդային ճարտարապետության քողի տակ թաքնված գետը: Մեր առջև բացվում է բոլորովին ուրիշ տեսարան՝ քաղաքի ներսը: Միայն այս տարածության մեջ շարվելով կարող ենք ազատվել մեռած գետի կերպարից: Միայն այս վայրերով քայլելու պատրաստակամության շնորհիվ ենք հաղթահարում լուսանկարի ստեղծած պատրանքը, ըստ որի գետը պատմական պատումի, անտերունչ ու կրրույալ քաղաքի բաժինն է:

Այստեղ գետի հին անունն է հնչում. տեղացիները գետի հետ հարաբերվելու և գոյակցելու փորձառություն ունեն: Սա քաղաքի սակավաթիվ

constantly shifts from the public sphere to the private domain, and vice versa. Only when we meet people living in close proximity to the river do we assess its significance in shaping our perceptions of home, city and the past. One of the inhabitants of this small alley, whose house literally grows out of the river (with a window overhanging the water) tells us about the difficulties throughout the year. Humidity, insects, rats and fears that the river could flood the house – these are the problems that abound in most of the stories. However, when it comes to relocation, the conversation takes an unexpected turn. The woman says that she came to Yerevan from another region of Armenia, and whenever she goes to her ancestral home, she is unable to sleep there at night, because she misses the sound of the river coming through her open window. She would like to move to a new flat and live in better conditions but she cannot imagine her daily life without those sounds. She tells the river about the hardships she suffered and the river – as she believes – takes away all her troubles and sufferings. Another local inhabitant (father of the family), who lives not far away from this house, shares with us various stories about the river, reminiscing about the time when the water was much cleaner and the stream was much stronger and fuller. While talking about his wish to exchange the house, he also adds that he is attached to the river. “If I am offered another flat, I’d like to live on the ground floor,” he says, “and build some kind of stream or fountain outside my window so that I could hear the murmuring water.” When talking about the river and their quarter, both this man and his neighbors emphasize – “our river,” “our section of the river.” He also says that the river is neglected by municipal authorities, it is not being cleaned as before, so in the spring he and his grandchildren have to wade through the water in rubber boots and clean “their section of the river.”

Getar represents a whole series of transformations: from scattered dwellings around the university area to

վայրերից մեկն է, որտեղ գետը վավերացնում է իր անունը՝ վերստին զբաղեցնելով իր բնական տեղը: Տիգրան Մեծի պողոտայից թեքվելով դեպի Խորենացու փողոցի Նրբանցք՝ անցնում ենք գետի երկու կողմում ձգված սեփական տների երկայնքով, իսկ այս Նրբանցքը պողոտայի շենքերի ետնաբակերին կապող փոքր կամրջին հասնելով՝ հայտնվում ենք կարճիկ մի փողոցում, որը Գետառի անունով է կոչվել: Գլխավոր պողոտայով քայլող անցորդներին անտեսանելի գետն ապաստան է գտել ժողովրդական ճարտարապետության ու խոսքի գրկում:

Այս հանդիսավոր ու կարճատև հայտնությունից հետո, երբ մոռացումի օվկիանոսում գտնվող հիշողության այս կղզյակում գետն ազատվում է կառավարական որոշումների կապանքներից, դուրս գալիս լույս աշխարհի և չգոյությունից վերածվում բնականոն ընթացքի, Գետառը դարձյալ անհետանում է՝ փակվելով քաղաքի գործարանային հատվածի ստորգետնյա խողովակների մեջ: Փակ գործարանների տակով անցնող ու մերթ ընդ մերթ ձայներ արձակող գետն իր ճանապարհի վերջում Նորից լսելի ու տեսանելի է դառնում «Նայրենիք» կինոթատրոնին կից բարձրահարկերի բակերում: Այստեղ գետն ասես իր մասին վերջին անգամ հիշեցնի, Նախքան բնական ավարտին հասնելը և մեկ այլ գետի՝ Նրազդանի ջրերին միախառնվելն ու դեպի Երևանյան ծով սլանալը: Բոլոր գետերն էլ վաղ թե ուշ թափվում են ծովը:

Սակայն այստեղ՝ գետի հայտնության վայրում, որտեղ այն միաձուլվում է երևանցիների առօրյային ու ժողովրդական ճարտարապետությանը, մենք կրկին համոզվում ենք՝ վերնակույյար քաղաքի միջուկը այնքան է տարբերվում արտաքին շերտից, որ գետն այստեղ ոչ թե սոսկ գոյություն է, այլ գրեթե դարձել է բնակիչների սեփականությունը: Գետը, խոսքի հոսք դարձած, հաղորդակցական դեր է ստանձնել՝ կապելով քաղաքի համալսարանական հատվածը կանաչ գոտուն, հանգստի գոտին՝ բնակելի հատվածին, բնակելին՝ արտադրական հատվածին, գործարանայինը՝ Նորից բնակելի հատվածին, որն արդեն խորհրդային տարիներին խիստ ուրբանիզացված էր: Քաղաքին մեծ մասամբ զրկել են խոսքից, ու գետը կմկմալով է խոսում՝ ասես փորձելով հաղթահարել հիշողության կորուստը, որն արհեստական ճանապարհով են պարտադրել քաղաքին:

Սոցիալական, տնտեսական և քաղաքական տարբեր խոսույթներից բացի Գետառին հաջողվում է տարածության մեջ մեկ այլ երկակիություն ձևավորել:

vernacular districts, from a fragment of green space to industrial areas. Besides, Getar always changes its identity; at times, it demonstrates its commitment to public life or performs governmental functions, at times it is engaged in private activities. While flowing through the city, the river assembles both broad public narratives and personal, intimate fragments of family stories.

Internal memory of the river

Getar's general, or external memory pertains to traumatic experience; the river has been erased from the visible surface of urban memory. Language, imposed from above, denies the river's existence. External memory of the river also exemplifies its social memory which was formed when Getar had been already stripped of its physical manifestation, driven underground and thus had become a 'non-river.' In order to see the river, to penetrate into the space of its inner memory, one has to make physical and mental effort, to be a flâneur, to surrender oneself to a drift or *dérive*^①. Only by traversing the dense urban fabric and descending into the hidden and embarrassing (due to its poor condition) depths of the city do we finally have the opportunity to see and hear the river. We find ourselves in a community that preserves the river from oblivion through their everyday life and language. This community along with the houses they built is a unique manifestation of the memory of the city and that of the river. Getar's internal memory is accessible to those who agree to the rhetoric of walking in their communication with the city. Michel de Certeau writes: "To walk is to lack a place."^② Writing itself is also a kind of wandering in the wilderness, an expression of deficiency or absence, as Derrida puts it. Getar's internal memory is revealed when we try to examine what is written about the river.

① For more detail about this practice see Andrey Ivanov's article in this book.

② De Certeau, p.136

Գետն անդադար անցում է կատարում հանրայինից մասնավոր տիրույթ և հակառակը: Ու հենց ջրի հարևանությամբ ապրող մարդկանց հետ հանդիպելիս ենք արձանագրում գետի ազդեցությունը քաղաքի, տան և անցյալի զգայական ընկալման վրա: Այս կարճիկ նրբանցքում ապրող կանանցից մեկը, որի տունը կարծես հենց ջրի միջից վեր խոյանա (պատուհանն էլ բացվում է դեպի գետահունը), պատմում է, թե տարվա ընթացքում ինչ դժվարությունների միջով է անցնում: Խոնավություն, միջատներ ու առնետներ, վախ, որ ջուրը տուն կլցվի՝ ահա թե որ խնդիրներն են գերակշռում տեղի գրեթե բոլոր բնակիչների պատմածներում: Սակայն երբ խոսք է բացվում տեղափոխության մասին, զրույցն անսպասելի ընթացք է ստանում: Կինն ասում է, որ ծնունդով Հայաստանի մեկ այլ շրջանից է, ու երբ գնում է հորական տուն, գիշերները չի կարողանում քնել, որովհետև պատուհանի տակից ականջին չի հասնում հոսող ջրի ձայնը: Կինը կուգեր նոր բնակարան տեղափոխվել ու ապրել ավելի լավ պայմաններում, բայց չի պատկերացնում իր առօրյան առանց գետի ձայնի: Իր կյանքի դժվարությունների մասին ջրին է պատմում, իսկ գետը, ինչպես կնոջն է թվում, քշում տանում է բոլոր դառնություններն ու նեղությունները: Այս տնից ոչ հեռու բնակվող մեկ այլ տեղացի (ընտանիքի հայրը) տարբեր պատմություններ է պատմում Գետառի մասին, հիշում այն տարիները, երբ գետի ջուրն ավելի մաքուր էր ու ավելի վարար, ու հանկարծ տունը փոխանակելու ցանկության մասին խոսելիս ասում է նաև, որ շատ կապված է գետին: «Եթե ինձ ուրիշ բնակարան առաջարկեին, կուգեի առաջին հարկում ապրել, – ասում է նա, – ու պատուհանի մոտ մի առվակ կամ ցայտաղբյուր լիներ, որ լսեի ջրի խշշոցը»: Թե այս մարդը, թե իր հարևանները գետի ու թաղամասի մասին խոսելիս շեշտում են՝ «մեր գետը», «գետի մեր հատվածը»: Ընտանիքի հայրն ասում է, որ իշխանությունները մոռացել են գետի մասին, առաջվա պես չեն մաքրում, ու ստիպված ինքն ու թոռներն են ամեն գարուն ռետինե ճաքակոշիկներով մտնում գետն ու մաքրում «իրենց տան հատվածը»:

Գետառը փոխակերպումների մի ամբողջ շարք է՝ քաղաքի ուսանողական հատվածում բնակելի տներից՝ վերնակուլյար թաղամաս, հանգստի փոքր գոտուց՝ գործարանային ենթակառուցվածքների հատված: Սրա հետ մեկտեղ Գետառը միշտ վերանայում է իր կոչումը՝ մեկ հանրային կյանքին ծառայելով, մեկ պետական կամ մասնավոր գործառույթներ կատարելով: Գետն իր ճանապարհին ժողովում է թե քաղաքային ու պետական ընդարձակ պատումներ, թե ընտանեկան պատմությունների տեղային ու խիստ անձնական դրվագներ:

Apart from appearing in this community – a small group of people who still live in their old and dilapidated houses, hidden behind the pompous rhetoric of Soviet well-being – the river also dwells in literature, which goes through an endless process of self-transformation like the daily life of these people, like the reinforced structures of their handmade houses. “He went to bed without closing the window. Almost all night long he could hear the murmur of the trees and the river”^① – so begins the novel of Mkrtich Armen. It was written at the beginning of the previous century. Like Getar, it was consigned to archives and banned, as it did not conform to the rhetoric of Soviet discourse. This sentence seems unreal, but thanks to the rhetoric of walking, a century after the novel was written, we meet a woman who says that she falls asleep listening to “the murmur of the trees and the river.” In the city, depicted in Armen’s novel, waterways still occupy a unique position and are not yet subordinated to the Soviet functionalist architecture: “A panorama of streets and alleys opened before us, with hills and a plain looming in the distance. There were single-storey houses, ramshackle shops and new buildings on the streets. Numerous streams were running alongside the pavements.”^② The novel also depicts the internal space where different urban languages are pitted against each other, creating an ambivalent situation in which the dream of preserving the river is dismissed as something shameful: “Getar-chai – several *verst* in length, cleared of sediment – will flow through the city along the barriers built of red tufa and along the pavements constructed on each bank. High lamp-posts will be erected on both sides so that the electric lights attached to their tops will be multiplied on the surface of Getar-chai.”^③

Like vernacular practices, literature not only penetrates into Getar’s inner memory but is also capable of registering what is unattainable for the language that commits the river’s flowing body to a map or an archival document. For an archival or administrative language, the river is an object of description (technical, geographical,

① Armen, M. *Yerevan: An Epic*. Yerevan, Antares, 2016, p. 7 [in Armenian]

② Ibid, p. 58

③ Ibid, p. 16

Գետի ներքին հիշողությունը


Գետի մասին ընդհանուր կամ արտաքին հիշողությունը տրավմատիկ փորձառության հիշողություն է. գետը ջնջվել է քաղաքային հիշողության տեսանելի հատվածից: Գետից վեր կանգնած լեզուն ժխտում է դրա գոյությունը: Արտաքին հիշողությունը նաև սոցիալական հիշողությունն է, որը ձևավորվեց այն ժամանակ, երբ գետը գրկվեց իր մարմնից՝ քվելով գետնի տակ, վերածվելով «չգետի»: Գետը տեսնելու, ներքին հիշողության տարածություն թափանցելու համար ֆիզիկական և մտավոր ճիգ պիտի գործադրել՝ դառնալով դատարկաշրջիկ, անձնատուր լինելով դրեյֆին¹: Քաղաքային խիտ հյուսվածքը հատելուց և մի ծածուկ ու ամոթալի (խեղճուկրակ ու խարխուլ վիճակի պատճառով) վայր հասնելուց հետո ենք միայն տեսնում ու լսում գետը: Հայտնվում ենք մի համայնքում, որն իր առօրյայի ու լեզվի միջոցով պահպանում է գետը, փրկում մոռացությունից: Այս համայնքն իր կառուցած տներով գետի և քաղաքի հիշողության ինքնատիպ դրսևորում է: Գետի ներքին հիշողությունը հասանելի է նրանց, ովքեր քաղաքի հետ հաղորդակցվելիս տարվում են քայլքի ճարտասանությամբ: Դե Սերտոն գրում է, որ «քայլերը տեղի պակաս զգալն է»²: Գրելն էլ ինքնին ամայի մի վայրում դեգերելու պես բան է, պակասության կամ Դերիդայի մատնանշած բացակայության արտահայտություն: Գետի ներքին հիշողությունը երևում է այն ժամանակ, երբ փորձում ենք քննել այն, ինչ գրվել է գետի մասին:

Խորհրդային բարեկեցության ճարտարախոսության անհարիր ու խարխուլ տներում բնակվող երևանցիների այս փոքր համայնքում ծիկրակելուց բացի գետը շարունակում է ապրել նաև գրականության մեջ, որն իբրև փորձառություն՝ այս մարդկանց առօրյայի ու ինքնաշեն տների պես մշտապես կայացման փուլում է: «Նա քնեց առանց լուսամուտը փակելու: Համարյա ամբողջ գիշերը լսում էր գետի ու ծառերի խշռոցը», – այսպես է սկսվում Մկրտիչ Արմենի վեպը³: Այն գրվել է Նախորդ դարում ու Գետառնի հունի պես պահվել արխիվում ու արգելվել, քանի որ վեպը չէր տեղավորվում խորհրդային խոսույթի մեջ: Այս Նախադասությունը կարծես անիրական լինի, բայց

¹ Դրեյֆի մասին ավելի մանրամասն տե՛ս Անդրեյ Իվանովի հոդվածը այս գրքում:


² De Certeau, p.136

³ Արմեն, Մ. «Երևան: Էպոպեա», Երևան, Անտարես, էջ 7:



The map of Getar and Jrvezh rivers basin,
The National Archives of Armenia.

Գետառ և Զրվեժ գետերի ավազանի քարտեզը,
ՀՀ Ազգային արխիվ:



geodetic, etc.) – similarly, for external memory the river is just an element of urban space – whereas in the space of literature the river is endowed with identity. It becomes a full member of the city. In literature and in recollections, we encounter a river which is neither a container that carries rubbish, nor a suffering body that represents the endless pain of water.

Heroes of Gevorg Ter-Gabrielyan's collection of essays "The Godless Movie Theater" definitely know that the authorities "buried Getar" as a result of their corrupt practices. He shows that the river has its memory and will "remind" the city of how it has been treated: "Getar will soon take its revenge...Getar once played a trick on the city, by flooding the Turkish quarter." Getar remembers everything, it has not dried up yet, nor is it dead.

If in Ter-Gabrielyan's essays we clearly see how the municipal authorities buried the river, in Pachyan's novel "P/F" we encounter another faculty inherent in literature. Thanks to the fictional text the fates of the narrator and the river are juxtaposed. By closing Getar they erased its memory; that is how the older generation deprived their children of memory. The burial of the river denotes the burial of a whole generation that has lost their memory and knowledge of the river: "in getar our parents killed us." The body of the river represents the body of the narrator – the body of a whole generation, on whose behalf Pachyan's hero speaks out. Pachyan's text itself is like a fragment of memory floating in the ocean of oblivion, bringing the river back to a reader – not only as an image, but also as a relic of lost cultural memory. Pachyan's novel is a genuine reminder of what Mkrtich Armen wrote about a century ago when he witnessed the first signs of this lengthy process of memory erasure and bestowed an identity on the river. This is the space where the river regains its vitality, its natural ability to flow – it is not a submissive body ready to be destroyed, but rather a vessel stretching into the dark night of oblivion and shimmering across the land, across the city, across the handmade houses, across the

քայլի ճարտասանության շնորհիվ մենք հանդիպում ենք մի կնոջ, որը վեպի գրվելուց մեկ դար անց պատմում է, որ քնում է՝ «գետի ու ծառերի խշռոցը լսելով»: Արմենի վեպում նկարագրվում է մի քաղաք, որտեղ ջրային զարկերակները դեռ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ու չեն ենթարկվել խորհրդային ֆունկցիոնալիստական ճարտարապետությանը. «*Դիմացը բացվում էր փողոցների և նրբանցքների խառնիխառը մի պանորամա, իսկ հեռվում՝ բլուրներ և դաշտավայր. փողոցներում՝ միհարկանի շենքեր, հնամաշ խանութներ, նորակառույց տնակներ. մայթերի կողքով անցնող ջրի առվակներ*»¹: Սակայն սրա հետ մեկտեղ հեղինակը ցույց է տալիս այն ներքին տարածությունը, որտեղ սկիզբ է առնում քաղաքի մասին տարբեր լեզուների պայքարը՝ երկիմաստ մի վիճակ, երբ գետը պահպանելու երազանքն անտեսվում է իբրև ամոթալի մի բան. «...մի քանի վերատ երկարությամբ, քաղաքի միջից կհոսի Գետառ-չայր խիճերից մաքրված հունով, կարմիր տուֆե կողերով և իր երկու կողմերում՝ սալե մայթերով: Իր երկու կողմերում կտնկվեն երկար սյուներ, որոնց բարձրից, Գետառ-չայր ջրերի մեջ իրենց դեմքը կբազմապատկեն էլեկտրական լապտերները»²:

Գրականությունը վերնակույլար պրակտիկայի պես ոչ միայն թափանցում է գետի ներքին հիշողության խորքը, այլև ի վիճակի է ձգվելու մինչև գրի այն մակարդակ, որն անհասանելի է գետի հոսուն մարմինը քարտեզին կամ արխիվին հանձնող լեզվին: Արխիվի կամ վարչարարական լեզվի համար գետը նկարագրության առարկա է (տեխնիկական, աշխարհագրական, երկրաբաշխական և այլն) ճիշտ այնպես, ինչպես արտաքին հիշողության համար գետը քաղաքային մակերևույթի մի կտոր է, մինչդեռ գրականության տարածության մեջ գետն օժտված է ինքնությամբ, քաղաքի լիիրավ անդամ է: Գրականության մեջ, հուշապատումներում գետը միայն թափոն տեղափոխող ու ջրի չարչարանքները մարմնավորող հոսանք չէ:

Գևորգ Տեր-Գաբրիելյանի «Անաստված կինո թատրոն» ժողովածուի հերոսները հաստատ գիտեն, որ իշխանությունները «Գետառը թաղեցին» քաղաքը թալանելու արդյունքում: Շեղինակը ցույց է տալիս, որ գետն իր հիշողությունն ունի ու դեռ «հիշեցնելու» է քաղաքին, թե ինչպես իր հետ վարվեցին. «*Գետառը դեռ իր վրեժը կառնի [...]. Գետառն արդեն մի անգամ քաղաքը խաբել էր. ակերից դուրս եկել ու թուրքի թաղը հեղեղել*»: Գետառը ոչինչ չի մոռացել, դեռ չի ցամաքել, դեռ մեռած չէ:

darkness itself. The river is the initiator of the physical and mental movement, "inviting us on an imaginary journey," when we no longer know where the sky begins or the river ends. ❶

Lights

Only the silver moon is shining,
Sliding gently across the sky.

In the moonlight late at night
The river murmurs in delight
Tiny frogs are slowly crawling
Out of their underwater dwelling
Squeaking, croaking all night long
They do not stop, they go along
Only the silver moon is shining,
Sliding gently across the sky.

On Getar-chai's uneven shores
Stand earthen walls and little doors
The walls are gloomy and tenebrous
They don't allow the light to pass
They just resemble tiny creatures
That absorb the river's waters.
Only the silver moon is shining,
Sliding gently across these walls.

High above the dormant land
Across the boundless space
Strands of light dance hand in hand
Illuminating the river's face.
Did the stars explode there,
Did the darkness flare?
Or is the silver moon shining,
Sliding gently across the sky?

Beneath these strands of light
The streets are colorful and bright,
Their shapes are dancing instead
Lighting up the sky above their head.
Beneath the sky life flows so gaily,
The city is full of electric lights,

Եթե Տեր-Գաբրիելյանի էստեներում պարզորոշ երևում է, թե ինչպես քաղաքային իշխանությունները թաղեցին գետը, ապա Պաչյանի «P/F» վեպում գրականության մեկ այլ հնարագործության ակնաստես ենք դառնում: Գեղարվեստական տեքստի շնորհիվ զուգադրվում են պատմողի և գետի ճակատագրերը: Գետառը փակելով՝ ջնջել են հիշողությունը. ծնողներն իրենց զավակներին թողել են առանց հիշողության: Գետառի թաղումը նշանավորում է գետի մասին գիտելիք ու հիշողություն չունեցող սերնդի թաղումը. «գետառում մեր ծնողները սպանեցին մեզ»: Գետի մարմինը պատմողի մարմինն է, այն սերնդի մարմինը, որի անունից խոսում է Պաչյանի հերոսը: Պաչյանի տեքստն ասես մոռացության օվկիանոսում լողացող հիշողության պատառիկ լինի, որ գետն ընթերցողին է վերադարձնում ոչ միայն իբրև առանձին կերպար, այլև իբրև կորսված մշակութային հիշողության մասունք: Պաչյանի վեպն ինքնատիպ կերպով հիշեցնում է այն, ինչի մասին գրել է Մկրտիչ Արմենը մեկ դար առաջ, երբ նկատելով քաղաքը հիշողությունից զրկելու երկարուձիգ գործընթացի առաջին նշանները՝ գետին ինքնություն է շնորհել: Սա այն գրականությունն է, որտեղ գետը վերագտնում է բնատուր աշխուժությունը, հոսելու բնական հատկությունը՝ դառնալով ոչ թե մի իլու մարմին, որին պիտի ոչնչացնեն, այլ մի անոթ, որ ձգվելով մոռացության խավարում՝ լույս է արձակում ցամաքի, հողաշեն տների, քաղաքի ու ստորերկրյա մթի երկայնքով: Գետը ֆիզիկական և մտավոր շարժման նախաձեռնողն է, «մեզ իրավիրում է երևակայական մի ճամփորդության», երբ այլևս չգիտենք, թե որտեղ է սկսվում երկինքը, ու որտեղ՝ ավարտվում գետը¹:

Լույսեր

Միայն լուսինն է դժգույն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում:

Լուսնի լույսով, կես գիշերին,
Գետառ-չայի խշռոցը մեղմ,
Դուրս են գալիս ջրի տակից
Հարյուրավոր փոքրիկ գորտեր,
Կռակ, կռակ գիշերն ի բուն,
Գետակի մեջ, գետակից դուրս,
Յեվ լուսինն է միայն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում:

The silver moon is trying vainly
To shine and slide across its streets.

Thousands of electric lights
Line dark and empty streets,
Stretching along the river ribbon
They reach beyond the horizon.
Along this line bit by bit
Electric lamps are being lit
Now they are brightly shining,
Sliding gently across the night.

Darkness recedes trembling
Frogs rush to their dwelling
A frightened dog under the wall
Let out a long and angry howl.
The lamps are here and there,
They abound everywhere
Only they are brightly shining,
Sliding gently across the night.

Along the shores of Getar-chai
The houses dark and not so high,
Are now filled with electric light,
Their doors are now widely open
To meet the illuminated night,
Come to see it, we've made it bright
Lamps are now shining instead
Across your houses, sliding ahead.

Mkrtich Armen^❶

(Translated by Hovhannes Galstyan)

The light of memory

Getar is a river. Like any river, it flows across a territory, fulfilling at least two functions at the same time. The river enlivens its surroundings, assembling countless stories and narratives belonging to those who walk along its ribbon, cross its waters or inhabit its banks. Unlike other

❶ Mkrtich, A. *Collected Works*. Yerevan, 1927, [in Armenian]

Գետառ-չայի ափի վրա
Խիճե պատեր, փոքրիկ դռներ,
Պատերը գորշ, անպատուհան,
Մուֆ` պատից դուրս ու պատից ներս:
Գաճաճ պատեր կարճ ու թզուկ,
Գետառ-չայը լիզող լեզու,
Յեվ լուսինն է միայն փայլում,
Նա յե պատի վրա քայլում:

Հեռու հեռվում, քաղաքից վեր,
Հեռու հեռվում, երկնի վրա,
Փոշիացած լույսի կույտեր
Յերեվում են հեռվից ահա:
Այնտեղ աստղեր են փշրվել,
Մոլթն է արդյոք լույսով ջրվել,
Թե՛ լուսինն է դժգույն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում:


Օ, վոչ, լույսի կույտի ներքեվ,
Փողոցներ կան վառ, լուսավոր,
Փողոցների շողքն է ընկել
Յերկնի վրա մթին ու խոր:
Այդ փոշու տակ լույսի ովկիան,
Այդ փոշու տակ խլրտուն կյանք,
Զուր է լուսինն այդպես փայլում,
Ու քաղաքի վրա քայլում:

Տեն, ձգված է յերկաթալար,
Փողոցներով մուֆ, ամայի,
Նա ձգվում է յերկար, յերկար,
Նա հասնում է Գետառ-չային:
Լարի շարքով հետըզհետե
Վառվում են վառ լապտերներ,
Լապտերներ են արդեն փայլում,
Լույսն է մթան վրա քայլում:

Յետ է քաշվում խավարն ահից,
Գորտերն արագ ջուրն են ընկնում,
Մի պատի տակ շունն է վախից
Տխուր վռնում, տխուր վնգում:
Ծավալվում են լույսներն արագ,
Դեպի հեռու, դեպի առաջ,
Լույսն է, լույսն է արդեն փայլում,
Նա յե մթան վրա քայլում:

Գետառ-չայի ափի շարքով,
Տնակներում անլույս ու մուֆ,
Խլրտում են խուլ տագնապով,
Բաց են անում դուռ, լուսամուտ:
- Յելեք տեսեք, գիշեր է կես,
Լույսի հեղեղ ենք բերել ձեզ,

XX



№	Объем отложения в м³
1	1470
2	5730
3	2920
4	5800
5	1800
6	1360
7	19600

Ձեր դռան մոտ լույս է փայլում,
Յեվ ավելի՛ հեռուն քայլում...

Սկրտիչ Արմեն ❶

Հիշողության լույսը

Գետառը գետ է: Ինչպես ցանկացած գետ, այն հատում է տարածությունը՝ միաժամանակ կատարելով երկու գործառույթ: Գետն իր շուրջը կյանք է ստեղծում, ժողովում իր երկայնքով շրջող, իր ջրերով նավարկող, իր ափերին ապրող մարդկանց անթիվ-անհամար պատմություններն ու պատումները: Ի տարբերություն այլ ջրային մարմինների՝ լճի կամ ծովի, գետը ոչ թե հիշողության զետեղարանն է, այլ շարժիչ ուժը:

Գետը նաև հաղորդակցող դեր ունի, ապահովում է քաղաքի տարբեր հատվածների մշտական փոխակերպումներն ու դրանց միջև փոխհարաբերությունը, ստեղծում քաղաքային խոսք, այնտեղ բնակվողների խոսվածք: Ինչպես ցանկացած գետ, Գետառը քաղաքային տարածության մեջ հաղորդակցության հիմքն է: Ի տարբերություն ճանապարհների (հետիոտնային անցում, մայրուղի), գետը բնական հաղորդակցության ուղի է: Իր ոչ երկար ճանապարհին Գետառը հաջողեցնում է անցնել քաղաքի բազմաթիվ մասերով, միանալ սոցիալական և տնտեսական տարբեր խոսույթների: Գետառը միաժամանակ թե քաղաքինն է, թե ջրաղաքինը, թե բնությանը, թե ուրբանիստական լանդշաֆտինը: Այս գետը թե հանրային է, թե մասնավոր, իր հիշողության մեջ ամփոփում է թե քաղաքային մեծ պատումներ, թե ընտանեկան պատմություններ: Եվ վերջապես, Գետառը կարող է միաժամանակ թե լինել, թե չլինել քաղաքային տարածության մեջ: Երևանցիների եռուն առօրյայում և հիշվել, և մոռացվել: Լինել քինախնդիր, աղետաբեր ու գարշ ահոտ ու միևնույն ժամանակ կայտառ, բժշկող, քաղցրալուր, զովարար, ոռոգող: Գետառի հիշողությունը գրանցում են մի մատյանում, որտեղ գետը նկարագրում են, մատնացույց անում կամ նույնիսկ մոռանում հիշատակել, որտեղ գետը մերժում են, պախարակում ու չեղարկում, ու չնայած սրան՝ Գետառի հիշողությունը շարունակում է ապրել քաղաքային առասպելներում, ընտանեկան պատմություններում, բանավոր խոսքում: Գետի բարակ, մոխրագույն ժապավենը, որ գրեթե ամբողջությամբ անցել է գետնի տակ, երբեմն դուրս է գալիս թաքստոցից՝ իր սահուն ջրերի վրա տանելով լուսնի լույսը, հիշեցնելով, որ քաղաքը ոչ

water bodies, such as seas or lakes, a river is not a container of memory, but rather the driving force behind it.

The river also performs a communicative function, ensuring the constant transformations of different urban areas and the relationship between them, as well as shaping urban practices and vernaculars. Getar is the backbone of communication in urban space. Unlike roads (highways or pedestrian routes), it is a natural line of communication. On its short journey Getar manages to flow through different parts of the city as well as to intersect with different social and economic discourses. Getar belongs simultaneously to the city and the “non-city,” to nature and urban landscape. It is both public and private, containing in its memory stream both grand urban narratives and private family stories. Finally, Getar manages to be both existent and non-existent in urban space. To be remembered and forgotten in everyday life of Yerevan’s inhabitants. To be vengeful, sinister, stinky, and at the same time – vibrant, healing, sonorous, refreshing, irrigating. Getar’s memory is confined in a register where it is described, indicated or even forgotten to be mentioned, where the river is rejected, condemned and canceled. Despite all these efforts, memory of the river still lives in urban myths, family stories, and spoken language. The thin gray ribbon of the river, almost entirely underground, occasionally reemerges from its hiding place, reflecting the moonlight on its flowing surface and reminding us that the city does not constitute a huge mass of stones but rather a flow of multitudes, a bustle of discourses. The city’s identity is neither its postcard views, nor the sunny city belonging to the Soviet colonial myth; it is the strands of moonlight sliding across the surface of the mountainous river. The river is not its factual description, but its memory – wounded, mutilated, littered, polluted, but still gurgling like the waters of Getar, loudly recounting the story of Yerevan and its inhabitants, before merging with other currents and disappearing like fading images of memory in the darkness of natural oblivion, like silver moonlight in the dead of night.

թե քարե վիթխարի զանգված է, այլ բազմությունների հոսք, խոսույթների եռուզեռ: Գետի ինքնությունը ոչ թե բացիկներում պատկերվող տեսարանն է, ոչ թե խորհրդային գաղութատիրական առասպելի արևոտ քաղաքը, այլ լեռնային գետի մակերեսին ցլացող լուսնափոշին: Գետը ոչ թե իր մասին փաստերի ամբողջությունն է, այլ սեփական հիշողությունը՝ խոցված, խեղված, աղտոտված, ապականված, բայց միևնույն ժամանակ դեռ խոխոջուն, ինչպես Գետառի ջրերը, որոնք բարձրաձայն պատմում են Երևանի և Երևանցիների մասին, նախքան ուրիշ հոսանքներին խռնվելն ու անհետանալը, ինչպես բնական մոռացումի խավարում հանգչող հիշողության պատկերները, ինչպես թանձր գիշերում լուսնի դժգույն փայլը:

getaromancy

aram pachyan

գետաբանություն

do you hear the river?
look down at your feet,
turn your ear to getar,
we walk on the water right now;
ergo jesus of the christ?
no,
no –
of arabkir
of krivoy
of bangladesh
all anointed in revan

he said
there is a river flowing
along khanjyan street
say hello to him

in getar our parents killed us
their names are where the river begins

getar
appears
and
disappears

գետի ձեն առնում ես,
ոտքերիդ տակ նայի, լսի՛, գետառը,
հիմա գետի վրայով ենք քայլում,
ուրեմն՝ հիսուս քրիստոսցի՞
չէ,
չէ՞
արաբկիրցի,
կրիվոյցի,
բանգլադէշցի
լրիվ ընանցի

ասեց՝ խանջյանի վրա մի հատ գետ կա,
տենասս, բարևի
գետառում մեր ծնողները սպանեցին մեզ
Նրանց անունը՝ գետի հիմնադիր

գետառը
կա
ու
չկա

գետառը
ժուկով էր
ժամանակով

getar used
to be once
and upon a time

chelent and smbo gambled
they'd drink water from the river

and
stay
alive,

they swallowed it and didn't die,
chelent utilized a dropper as glass,
smbo made good use of a tin can
that had contained american beans

getar is made of this,
getar is made of that

a dog was thrown into getar with its legs bound,
a drunk citizen fell into getar,
getar's flow lost its way,
a newborn baby was found in getar,
a getarestaurant at the edge of getar serves grilled rat
in a getarosauce,

he said
there is some guy
named tit
of mergelyan,
he was stabbed
and cast into getar,
he neither survived,
nor expired,
and cried for help
for five months,
delve into the pits of getartarus,
the poor tit soul is likely in there

in getar our parents killed us

our body was
neither ahead,
nor behind,
neither flowed,
nor was frozen

չելենտն ու սմբոն՝ գռագ եկան, թե
գետառի ջրից մի, մի բակալ կխմեն

ու
սաղ
կմնան,

աչքներիս առաջ խմեցին - չմեռնան
չելենտի բակալը պիպետկեն էր,
սմբոյինը՝ ամերիկյան հատ-լոբու տուփը

գետառը՝ էս ա
գետառը՝ էն ա

շան թաթերը կապել էին, գցել գետառը,
քաղաքացին ոչ սթափ վիճակում ընկել էր գետառը,
գետառի ջուրը չգիտի ուր գնա,
գետառում նորածին են հայտնաբերել,
կռիսի խորոված գետառի ափին, գետառ ռեստորանում,
պատրաստված գետառի ջրով,

պատմում էր՝
մեռգելյանցի
ծիծիկին դանկել,
քցել էին գետառը,
ոչ խեղվել էր,
ոչ կենդանի մնացել,
հինգ ամիս օգնություն էր կանչել,
խորացի, ծիծիկի հոգին տեղարենք լինի,

գետառում մեր ծնողները սպանեցին մեզ

մեր մարմինը
ոչ առաջ էր,
ոչ հետ,
ոչ հոսում էր,
ոչ քարանում,

երեխու
գժի
գետի

տեղ դրեցիք գետառին,
ապրեք մեր մարմնի վրայով,
գետառը կլռի մեր փոխարեն

մի աղջիկ
գետառի ջրերին
նայում, պամադա էր քում,

we took getar
for a child
for a fool
for a river

live on our body
getar will be quiet on our behalf

there was a girl
looking in the mirror of getar
and painting her lips red –
bright and glossy

it's nice that
this memory sprang to mind now,
at the end,

while forgetting you
and
making you
forget
though defeated by you,
my getardor never fails
to drive me mad, mad for getar,
for river and iver...amin!

կարմիր, կաս – կարմիր պամադա,

ու ինչ լավ էր, որ հիշեցի,
հիմա,
ամենավերջում,

մեռանալով

ու

մոռացնելով

ձեզ

գետառ, գետառ դառնալով,

ձեզ պարտվելով,

գիժ, գիժ մնալով

The Year of the Flood

Հեղեղի
տարին



→ 40.155840, 44.495220

Getar near the carpet factory and the
No.5 polyclinic, 1946.
Yerevan History Museum (YHM) collection.

Գետաբը գորգի գործարանի և 5-րդ
պոլիկլինիկայի մերձակայքում, 1946 թ.,
Երևան քաղաքի պատմության թանգարանի
(ԵՔՊԹ) հավաքածուից:



Getar after the flood. 1946.
From the YHM collection.

Գետառը ջրհեղեղից հետո, 1946 թ.,
ԵՔՊԹ հավաքածուից:



A bridge on Getar near the fire station.
1946. From the *YHM collection*.

Գետառի կամուրջը Հրշեջ դեպոյի
մերձակայքում, 1946 թ. ԵՔՊԹ հավաքածուից



A bridge on Getar near the Pedagogical
Institute dormitory. 1946.
From the YHM collection.

Գետառի կամուրջը մանկավարժական
ինստիտուտի հանրակացարանի
մերձակայքում, 1946 թ.
ԵՔՊԹ հավաքածուից:



→ 40.192526, 44.532392

The railway bridge of Getar, 1946.
Currently at the intersection of Saralanj
Street and Myasnikyan Avenue,
From the YHM collection.

Գետառի երկաթուղային կամուրջը, 1946 թ.
Այժմ Սարալանջի փողոցի և Մյասնիկյան
պողոտայի խաչման կետում,
ԵՔՊԹ հավաքածուից:



A bridge on Getar near the "Oil-soap" factory. 1946.
From the YHM collection.

Գետառի կամուրջներից մեկը «Ձեթ-օճառ»
կոմբինատի սերձակայքում, 1946 թ.
ԵՔՊԹ հավաքածուից



→ 40.173315, 44.518634

Getar and Tchaikovsky Street, 1946.
From the YHM collection.

Գետառը և Չայկովսկու փողոցը, 1946 թ.
ԵՔՊԹ հավաքածուից:

Getar As an Ecosystem

*Getar's ecological significance and
the environmental issues it faces*

Mari Chakryan

Գետառը որպես Էկոհամակարգ

Գետառի բնապահպանական
խնդիրներն ու նշանակությունը

Various sources^❶ provide information on Getar, one of the left tributaries of the Hrazdan River. Getar is 24 km long, its drainage basin covers an area of 158 sq km. The river is fed by precipitation and groundwater and overflows in the spring. Most of the water flowing in Getar comes from the Hrazdan River through a channel. Getar's tributaries are Jrvezh and Dzoraghbyur.

However, one is not sure whether this information is accurate today as Getar has long ceased to be a river or an ecosystem; it is merely a watercourse, an artificial stream fed not by groundwater sources but rather by meltwater and rainwater containing air pollutants, as well as by domestic and industrial wastewater.^❷

Getar rises on the western slopes of the Geghama Mountains.^❸ Its headwaters, or the Karasunakn springs (forty springs) are located at an elevation of 1570 meters on the southern foothills of Hatis, a volcanic massif between the villages of Akunk and Katnaghbyur. The forty springs have a flow rate of about 1450 l/sec. They are classified as safe drinking water supplies and are used for the water supply of Yerevan.^❹ Getar, flowing south and south-west, runs mainly through Yerevan (the Avan and Nork valleys) and joins the Hrazdan River near the Shengavit district. In its estuary, Getar is no longer a river

❶ → <https://bit.ly/3ZWrtpf>

❷ Procedure for developing, assessing, coordinating, approving and amending general plans and combined spatial planning documents of the RA communities (settlements), Appendix 2-Urbanplanning and architecture, sewerage-

→ https://www.arlis.am/Annexes/3/erit3_10_216-223.pdf

❹ *A Concise Dictionary of Elements of the Physical Geography of the RA*. Yerevan, Center of Geodesy and Cartography SNCO, 2007, pp. 130-150.

❸ The Geghama Mountains are the central part of the Armenian highlands. The range is of volcanic origin defined by numerous cinder cones, including Azhdahak, its highest peak. The steep western slopes extend down the Hrazdan Valley. Breathtaking valleys and gorges cut through the mountain range. The south-western slopes of the Geghama Mountains are part of the Khosrov Forest State Reserve.

Հրազդանի ձախակողմյան վտակներից մեկի՝ Գետառի մասին կարելի է տեղեկանալ տարաբնույթ աղբյուրներից^❶: Գետի երկարությունը 24 կմ է, ավազանը՝ 158 քառակուսի կմ: Այն սնվում է մթնոլորտային տեղումներից և ստորերկրյա ջրերից, հորդանում գարնան ամիսներին: Ջրի հիմնական մասը ստանում է Հրազդան գետից՝ ջրանցքով: Գետառի վտակներից են Ջրվեժը և Ձորաղբյուրը:

Սակայն որքանով է այս տեղեկությունը համապատասխանում իրականությանը, դժվար է ասել, քանի որ վաղուց Գետառը դադարել է գետ և գետային էկոհամակարգ լինելուց՝ վերածվելով ուղղակի ջրահոսքի կամ արհեստական ջրատարի, որը սնվում է ոչ թե ստորգետնյա աղբյուրներից, այլ առավելապես մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերով հարստացած անձրևաջրերից ու ձնհալքի ջրերից, կենցաղային ու արդյունաբերական թափոնաջրերից ու թափոններից^❷:

Գետառ գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի^❸ արևմտյան լանջերից՝ 1570 մ բարձրությունից բխող Քառասունակն աղբյուրներից: Գետառի ակունքը քառասուն աղբյուրներն են, որ գտնվում են Հատիս հրաբխային լեռնազանգվածի հարավային ստորոտին՝ Ակունք և Կաթնաղբյուր բնակավայրերի միջև: Քառասունակն աղբյուրների ընդհանուր ելքը մոտ 1450 լ/վ է: Դրանք դասվում են խմելու բարձրորակ ջրերի շարքը: Ջրերն օգտագործվում են Երևանի ջրամատակարարման համար^❹:

❶ → <https://bit.ly/3ZWrtpf>

❷ ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգ, Հավելված 2. Քաղաքաշինություն և ճարտարապետություն, Կոյուղի. → https://www.arlis.am/Annexes/3/erit3_10_216-223.pdf:

❸ Գեղամա լեռնաշղթան գտնվում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական հատվածում, ունի հրաբխային ծագում: Լեռնաշղթայի կենտրոնական հատվածը կարծես լեռնավահան լինի, որի վրա շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում՝ ամենաբարձր գագաթ՝ Աժդահակը: Արևմտյան գագաթից լանջերն իջնում են Հրազդանի հովիտը: Մասնատված է գեղեցիկ գետահովիտներով ու կիրճերով: Լեռնավահանի հարավարևմտյան լանջերը ներառված են «Լուսրովի անտառ» պետական արգելոցի մեջ:

❹ ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան, Երևան, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, 2007, էջ 130-150:

but rather a dark-colored, severely polluted substance (highest level of pollution)^❶ that runs into Hrazdan by further contaminating its poor quality waters.

According to the Hrazdan Basin Management Plan, the river is used for drinking and household purposes as well as for fish farming, industry, irrigation and hydropower.^❷ The wastewater discharges generated by these activities end up in the river. The same is true of Getar. It's not known how much water is withdrawn from Getar without a permit. As a result, Getar's ecosystem is being degraded; besides marginal-quality water, the accessibility for migratory fish is considerably reduced, the flow rate is altered, and the effects of non-native invasive species on the ecosystem are quite detrimental.

The poorly planned urbanization along the riverbanks had a damaging impact on water resources management and failed to control pollution caused by residents and other economic actors. Urban runoff containing various harmful pollutants flows into the river, thus having negative effects on biodiversity. Getar's freshwater fish species are almost extinct now.

Getar's Biodiversity

Little is known about the river ecosystem. Meanwhile, the Hrazdan River has a completely different ecosystem. Even though some keystone species are still found in Yerevan, the same is not true of Getar. It is known that brown trout and South Caspian spiralin (or Kura chub) were found in Getar. Professor Samvel Pipoyan, doctor of biological sciences, recalls^❸ that in the early 1970s one caught Kura barbel in Getar's waters. In the 1990s he personally observed how people fished for Kura chub. Nowadays one lacks information on the river's biodiversity. Getar is heavily polluted which renders water practically unfit for fish life throughout Yerevan.

❶ Official website of Hydrometeorology and Monitoring Center of RA.
→ <http://armmonitoring.am/page/17>

❷ See *Draft River Basin Management Plan for Hrazdan River Basin District in Armenia* (2020).
→ <http://bit.ly/3YWRuTZ>

❸ In his interview with the author of this article.

Գետառը, հոսելով հարավ ու հարավ-արևմուտք, անցնում է Երևանի տարածքով՝ Ավանի ձորահովիտով, Լորքի ձորով ու Շենգավիթի մոտակայքում թափվում մայր գետ՝ Հրազդան:

Գետաբերանում այն արդեն ոչ թե գետ է, այլ 5-րդ դասի աղտոտվածության (աղտոտվածության առավելագույն մակարդակ)¹, մուգ գունավորում ունեցող թանձրանյութ, որ միախառնվելով Հրազդանի վարարուն ջրերին, նոսրանում է՝ միաժամանակ առավել աղտոտելով Հրազդան գետի արդեն իսկ վատորակ ջրերը:

Հրազդանի ջրավազանային կառավարման պլանի² համաձայն՝ Հրազդանի ջրերն օգտագործվում են արդյունաբերական, խմելու, կենցաղային, ձկնաբուծության, ոռոգման և հիդրոէներգետիկ նպատակներով: Գետը վերոնշյալ նպատակներով օգտագործված թափոնաջրերի ընդունիչ է: Լոյնը կարելի է ասել վտակի՝ Գետառի մասին: Առանց ջրօգտագործման թույլտվության Գետառի ջրերի օգտագործումների քանակն անհայտ է:

Ի հետևանք՝ Գետառի գետային էկոհամակարգը խախտված է. Վատորակ ջրից բացի խաթարված է ձկների միգրացիայի հասանելիությունը, փոխվել է ջրահոսքի մակարդակը, մեծ է ինվազիվ՝ ոչ բնիկ տեսակների անմիջական ազդեցությունը էկոհամակարգի վրա:

Գետի տարածքի յուրացումը քաղաքաշինական նպատակներով լրջորեն ազդել է բնական ջրերի կառավարման վրա՝ նպաստելով տեղի բնակիչների ու տարաբնույթ տնտեսվարողների կողմից աղտոտմանը: Անձրևաջրերն ու քաղաքային ջրահոսքերը, հարստանալով տարաբնույթ վտանգավոր նյութերով, թափվում են գետը, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում կենսաբազմազանության վրա: Գետառում ձկնաշխարհը գրեթե վերացել է:

Գետառի կենսաբազմազանությունը

Գետառի էկոհամակարգի մասին հստակ տեղեկություններ չկան: Մայր գետի՝ Հրազդանի էկոհամակարգը լիովին տարբերվում է: Եթե այստեղ դեռ հանդիպում են արժեքավոր տեսակներ անզամ Երևանի տարածքում, ապա Լոյնը չի կարելի ասել Գետառի մասին: Հայտնի է, որ անցյալ դարի 30-ական թվականներին Գետառում հանդիպել են կարմրախայտը

¹ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն՝ ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք.
→ <http://armmonitoring.am/page/17>

² St' u' → <http://bit.ly/3YWRuTZ>

Getar's water use and pollution

Urban wastewater has a disastrous impact on water quality. It is mainly generated from domestic and recreational activities as well as by various industrial facilities and businesses along the river. This untreated or insufficiently treated wastewater exceeding discharge limits flows into the sewerage system, collects domestic sewage and eventually runs into Getar. More than 95 percent of domestic and industrial wastewater is not treated due to the lack of local wastewater treatment plants or collection wells for sewage management as well as due to the lack of effective wastewater regulations. No regular and adequate records are maintained regarding the number of business entities in the areas adjacent to the river.

Getar's waters are being polluted by point sources as well. Various food or non-food, as well as car service and car wash facilities often discharge wastewater into the river without appropriate treatment and permits. Point-source pollution is easy to identify along the unburied fragments of the river in the area adjacent to Khanjyan Street and on the upper side of Myasnikyan Avenue.

According to the surface water quality monitoring results, domestic wastewater is mainly polluted with biogenic substances, whereas industrial wastewater mostly contains petroleum products, phenols, heavy metals (lead, cadmium, copper, zinc, etc.) and complex organic compounds (synthetic detergents, dyes, grease) that degrade the quality of household water and make it unfit for drinking or irrigation. They also disrupt the biological processes of the drainage basin, impair water's ability to purify itself of pollutants as well as alter the structure and nutritional value of aquatic biodiversity. Streams that change the temperature of the basin thus adversely affecting spawning, destroying plenty of good bacteria and producing parasites are extremely dangerous. Domestic wastewater contain pathogens of gastrointestinal infections causing other diseases in the river basin as well. ❶

❶ → <http://armmonitoring.am/page/17>

և արևելյան տառեխիկը: Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանը հիշում է¹, որ 1970-ականների սկզբին Գետառից Կուրի բեղաձուկ էին որսում, անգամ անձամբ է տեսել, իսկ 1990-ականների կեսերին՝ արևելյան տառեխիկ: Ներկայում Գետառի կենսաբազմազանության վերաբերյալ որևէ այլ տեղեկություն չկա: Գետը խիստ աղտոտված է և ձկների բնակության համար գրեթե անպիտան երևան քաղաքի ամբողջ տարածքում:

Գետառի ջրօգտագործումն ու աղտոտումը

Քաղաքային կեղտաջրերը զգալիորեն ազդում են ջրի որակի վրա: Գետառի աղտոտման հիմնական աղբյուր են քաղաքային կեղտաջրերի արտահոսքը, կենցաղային թափոնաջրերը, արդյունաբերական մեծ ու փոքր ձեռնարկությունները, սպասարկման ու հանգստի կազմակերպման օբյեկտները: Դրանց չմաքրված կամ ոչ բավարար մաքրված, սահմանային թույլատրելի արտահոսքերի նորմերը գերազանցող հոսքաջրերը թափվում են կոյուղու համակարգ, խառնվում կոմունալ-կենցաղային կեղտաջրերին և ի վերջո հայտնվում գետում: Արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի 95%-ից ավելին չի մաքրվում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների կամ կոյուղաջրերի կուտակման հորերի բացակայության և առհասարակ ջրահեռացման համակարգի չկանոնակարգման պատճառով: Գետի ազդեցության գոտում գտնվող տնտեսվարող սուբյեկտների քանակի լիարժեք և պարբերական հաշվառում չի իրականացվում:

Գետառի աղտոտման պատճառ են նաև կետային աղբյուրները: Սննդի և ոչ սննդի մեծ ու փոքր օբյեկտներից, ավտոսպասարկման ու ավտոլվացման կետերից կեղտաջրերը հաճախ անմիջապես գետ են լցվում առանց մաքրման և համապատասխան թույլտվությունների: Այս փաստերը կարելի է անզեն աչքով տեսնել Գետառի դեռևս բաց հատվածներում՝ Խանջյան փողոցին հարող տարածքում, վերնանցումի հարևանությամբ և Մյասնիկյան պողոտայի վերջնամասում:

ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ *Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել*

Other sources of Getar's pollution include building material manufacturers, shopping facilities, and active construction works in Yerevan. Stormwater runoff from construction sites discharges into the river.

Typically, the Environmental Impact Assessment (EIA) procedure for construction projects involves creating reservoirs or dams adjacent to construction sites for trapping sediment-laden runoff during rainfall events. After the sedimentation, treated wastewater is used for irrigating the area, whereas dredged sediments are discarded along with construction debris. However, not all entities comply with the EIS requirements. Stormwater runoff overflows down the streets via downspouts (or due to the fact that they are clogged) and discharges into the river. Because of the unsanitary conditions in several urban areas around the river (e.g. down the blind alley nearby Garegin Nzhdeh Street, next to the school after Belinski, at the intersection of Tumanyan and Khanjyan Streets, as well as in other places) Getar is full of rubbish and silt. The strong sewer odor is noticeable even at some distance. In the summer season residents of the Shengavit district complain of foul smell and large mosquitoes.

In addition to waste, the accumulation of silt over time is another issue that should be tackled. Unless preventive measures are taken, the constant flow of sewage into Getar can eventually turn the dump into a swamp which will complicate the situation.

Back in 2018, in an interview with *Radiolur* Hrayr Antonyan, head of the Communal Services Department of Yerevan Municipality, said that Getar is indeed prone to siltation caused by discharges of sewage into the river. He also stated that although the plan is to remove waste and rubbish from the river, appropriate techniques will be used to reduce the amount of fine sediments.

The river has lost its self-cleaning ability; it no longer exists as an ecosystem. At one time Getar's water was used to irrigate the gardens of Nork-Marash and Aygestan. Today, however, the application of water for the same purpose is not possible.

հաճախ նախաձեռնություններով, ֆենտիլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) ու բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, կենցաղում օգտագործելու կամ ոռոգման համար դարձնում ոչ պիտանի, խախտում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազեցնում աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխում ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Հատկապես վտանգավոր են տաք հոսքաջրերը, որոնք փոխում են ջրավազանի ջերմային ռեժիմը, վատթարացնում ձկների ձվադրման պայմանները, ոչնչացնում են մի շարք օգտակար մանրէներ և զարգացնում մակաբույծներ: Կենցաղային հոսքաջրերն էլ պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ և կարող են գետավազանի տարածքում տարաբնույթ համավարակների պատճառ դառնալ¹:

Գետառի աղտոտման աղբյուր են նաև շինանյութերի արտադրամասերը, վաճառակետերն ու Երևանում օրըստօրե ակտիվացող շինարարությունը: Շինանյութերը կամ շինարարական փոշին մթնոլորտային տեղումների հետ իջնում ու լցվում են գետը:

Որպես կանոն՝ շինարարական նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հայտով նախատեսվում է շինարարական հրապարակին կից պարզարանի (ռեզերվուար) ստեղծում՝ անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի նստեցման համար: Նստեցումից հետո պարզեցված ջուրն օգտագործվում է տարածքի ջրցանման համար, նստվածքը հեռացվում որպես շինարարական աղբ: Սակայն ոչ բոլոր ընկերություններն են կատարում ՇՄԱԳ փաստաթղթում ներկայացված պահանջները: Հիմնականում շինարարական հոսքաջրերն անձրևների ժամանակ ողողում են փողոցները ու հեղեղատարներով կամ դրանց խցանված լինելու պատճառով անմիջապես լցվում գետը:

Գետառին կից որոշ հատվածներում ստեղծված հակասանիտարական վիճակի պատճառով (օրինակ՝ Գարեգին Նժդեհի փողոցին հարող նրբանցքում՝ Բելինսկու անվան դպրոցի անմիջապես կողքը, Խանջյան և Թումանյան փողոցների հատման և այլ

According to Gevorg Nazaryan, head of the Environmental Protection Department of Yerevan Municipality, by law the municipality has no authority to establish wastewater infrastructure or install local wastewater treatment plants. However, as mentioned above, urban runoff flows into the river; besides, the cleanliness of the river basin is one of the urgent environmental problems in Yerevan, and it's the responsibility of the municipality to deal with it.

Getar's water quality monitoring

The surface water quality assessment system in Armenia distinguishes five classes for each indicator of chemical water quality: excellent (1st grade), good (2nd grade), moderate (3rd grade), poor (4th grade) and bad (5th grade). The overall assessment of a water body is based on the "one out-all out" principle and determined by the element with the worst status out of all the biological and supporting quality elements (Government Decree No. 75-N of January 27, 2011).^①

According to the data published by the *Center of Geodesy and Cartography* SNCO of the RA Ministry of Environment, the main pollutants of Getar are nitrite ions and ammonia. In recent years water quality in the estuarine areas has been assessed as bad (5th grade).^②

According to the Hrazdan River Basin Management Plan, Getar's water is also of bad quality as it contains ammonium and phosphate ions. The objective of the Management Plan is to take basic measures aimed at "preventing the degradation of water status in all water bodies, ensuring stepwise improvement of water status in water bodies and enhancing national water management in relation to water uses (permits; licenses). These shall be implemented during the first two planning cycles, following the requirements of the Armenian legislation".^③

① → <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65705>

② → <http://armmonitoring.am/page/17#hrazdan>

③ → https://www.euwiplu-seast.eu/images/2021/05/PDF/Hrazdan_draft_RBMP_Report_ENG_VFInal_21042021.pdf, p. 170.

հատվածներում) Գետառը լի է աղբով ու տիղմով: Կեղտաջրի սաստիկ նեխահոտը զգացվում է անգամ հեռավորության վրա: Հատկապես ամռան ամիսներին Շենգավիթ վարչական շրջանի բնակիչները բողոքում են խոշոր մոծակներից ու անտանելի գարշահոտությունից:

Բացի թափոններից, այստեղ ժամանակի ընթացքում նաև տիղմ է կուտակվում, որը ևս ենթակա է մաքրման: Կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելու դեպքում կեղտաջրերի շարունակական ներհոսքը դեպի Գետառ ժամանակի ընթացքում ջրային աղբանոցը կարող է վերածել ճահճի ու բարդացնել խնդիրը:

Դեռևս 2018-ին «Ռադիոլուրին» տված հարցազրույցում Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության պետ Հրայր Անտոնյանն ասել էր, որ տիղմի առկայությունը Գետառին բնորոշ է, հատկապես որ դրա մեջ նաև կոյուղաջրեր են լցվում: Նա վստահեցրել էր, որ չնայած քաղաքապետարանի ծրագրով նախատեսվում է հունը մաքրել միայն աղբից ու թափոններից, սակայն մաքրման աշխատանքների ժամանակ համապատասխան տեխնիկայով հնարավորինս հեռացվում է նաև տիղմային զանգվածը:

Գետառը կորցրել է ինքնամաքրման հատկությունը, դադարել է գոյություն ունենալ որպես գետային էկոհամակարգ: Ժամանակին Նորք-Մարաշի ու Այգեստանի այգիները ջրել են Գետառի ջրերով, այսօր սակայն այդ նպատակով ջրի օգտագործումն ուղղակի անթույլատրելի է:

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանի տեղեկացմամբ՝ կեղտաջրերի հեռացման ենթակառուցվածքի ստեղծումը կամ կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման պարտադրումը դուրս է Երևանի քաղաքապետարանին օրենսդրությամբ վերապահված լիազորություններից: Սակայն, ինչպես նշեցինք, Գետառ են լցվում նաև քաղաքի հոսքաջրերը, բացի այդ, գետավազանի մաքրությունը քաղաքի հրատապ բնապահպանական խնդիրներից է, որի հասցեատերը Երևանի քաղաքապետարանն է:

Գետառի ջրի որակի մոնիթորինգ

Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «զերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս)

Cleaning of Getar

Veolia Jur committed itself to ensuring the production and sale of drinking water, wastewater treatment systems, developing and improving residential distribution networks in a number of Armenian regions, including Yerevan.^① Considering the Hrazdan River and its tributaries as the company's drainage system, *Veolia Jur* provides water supply, sewerage and wastewater treatment services for its subscribers. Perhaps this is justified by the fact that even the Government by its decree considered Getar to be a stormwater drainage.^②

At the same time, Yerevan Municipality annually allocates money from the city budget for cleaning the riverbed. In 2021, 38 million 600 thousand AMD was spent to clean the Getar and Voghjaberd rivers.^③ In 2019 and 2020, more than 38 million AMD was allocated for this purpose.

The cleanup is carried out from March to April. It mainly includes simple cleaning activities, particularly removal of waste found in the river basin. Getar's most polluted segments are in the administrative areas of Shengavit and Erebuni.

Nevertheless, Getar's deplorable condition is not only the result of citizens' lack of awareness or ecological literacy. Neglecting and circumventing environmental challenges and legal requirements as well as not following procedures or not fulfilling obligations by public authorities and public service organizations are among the major causes of the problem.

Members of the Council of Elders addressed this issue many times.^④ Civil society organizations brought it up time and again indicating that despite the huge sums spent, Getar still needs to be cleaned. The matter of biological treatment of Getar's water is not even discussed.

Recently Yerevan Municipality announced that the Hrazdan Gorge was granted a special status noting that

① → <https://www.veolia.am/en/veolia-armenia>

② → https://www.arlis.am/Annexes/3/erit3_10_216-223.pdf

③ → <https://www.aliqmedia.am/2022/02/28/50216/>

④ See the coverage of the meeting of the Council of Elders by the Public Radio of Armenia → <http://bit.ly/40ebGSi>

և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով (չչ Կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75_Ն որոշում¹):

Ըստ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած տվյալների² Գետառն աղտոտող հիմնական աղտոտիչները ամոնիում ու նիտրիտ իոններն են: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում վերջին տարիներին մշտապես գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Հրազդանի ջրավազանային կառավարման պլանի համաձայն ևս Գետառի ջուրը «վատ» որակի է՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Կառավարման պլանով նպատակ է դրված միջոցներ ձեռնարկել «կանխելու ջրի կարգավիճակի վատթարացումը բոլոր ջրային մարմիններում, ապահովել ջրի կարգավիճակի աստիճանական բարելավումը և ջրօգտագործման հետ կապված կառավարման բարելավումը (թույլտվություններ, լիցենզիաներ): Դրանք պետք է իրականացվեն պլանավորման առաջին երկու փուլերի ընթացքում՝ չչ օրենսդրության պահանջներին համապատասխան»³:

Գետառի մաքրում

Վեոլիա ջուր ընկերությունը հանձն է առել ապահովել խմելու ջրի արտադրության և վաճառքի, կեղտաջրերի մաքրման համակարգերի կառավարումը, բնակավայրերի բաշխիչ ցանցերի արդյունավետության բարձրացումն ու զարգացումը ինչպես հանրապետության մի շարք բնակավայրերում, այնպես էլ Երևանում: Նենց «Վեոլիա ջուրն» է բաժանորդների հետ ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրեր կնքում՝ իր ջրահեռացման համակարգը համարելով Հրազդան գետն իր վտակներով և պարտավորվում դրանով հեռացնել ու մաքրել բաժանորդների կեղտաջրերը⁴: Թերևս

¹ → <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65705>

² → <http://armmonitoring.am/page/17#hrazdan>

³ → https://www.eu-wipluseast.eu/images/2020/07/PDF/AM_Hrazdan_Short2ndThematicSummary_ARM.pdf, էջ 9-10:

⁴ → <https://www.veolia.am/hy/veolian-hayastanowm>

the river faces serious environmental problems and the concepts of recreational activities in the gorge have changed due to the disorderly urban sprawl since the 1990s.

"As a recreation area, the gorge should be a place designated for relaxation, tourism and wellbeing activities", the Council said in the statement.^❶

However, Getar as Hrazdan's left tributary, is not included in the project for improving environmental conditions in the Hrazdan Gorge. In the meantime, Getar flows into Hrazdan where people still go fishing for leisure or use the river water for irrigation. Successful implementation of these projects/policies will lead to an increase in the river basin's recreational value. It also implies that environmental risks should be minimized by focusing on cleaning up Hrazdan's tributaries, improving their water quality and restoring their ecosystem, as well as on tightening pollution control regulations and adopting pollution prevention plans.

A vision for restoring Getar as a river

The EU Water Initiative Plus programme for the Eastern Partnership countries supported the development of River Basin Management Plans (RBMPs), including the Hrazdan RBMP.^❷ The document puts greater emphasis on monitoring and identifying pollution sources as well as on construction of wastewater treatment plants. It particularly highlights the need for bringing rivers closer to their natural state, restoring riparian zones and regulating water abstraction without repeating the mistakes of the past.

Getar's significance in term of climate change

"According to the Organization for Economic Co-operation and Development (OECD), Armenia is a country with low water availability, and subject

❶ → <https://armenpress.am/arm/news/1079653/>

❷ → https://www.euwipluseast.eu/images/2021/05/PDF/Hrazdan_draft_RBMP_Report_ENG_VFinal_21042021.pdf

սա արդարացվում է նրանով, որ անգամ
Կառավարությունն է իր որոշմամբ Գետառը
դիտարկել որպես հեղեղատար կոյուղի^❶:

Միաժամանակ Երևանի քաղաքապետարանն ամեն
տարի համայնքի բյուջեից գումար է հատկացնում գետերի
հունի մաքրման համար: 2021 թվականին 38 միլիոն 600
հազար դրամ է ծախսվել Գետառ ու Ողջաբերդ գետերը
մաքրելու համար^❷: 2020-ին և 2019-ին նույնպես 38
միլիոնից ավելի գումար է հատկացվել այդ նպատակով:

Աշխատանքներն իրականացվում են մարտ-
ապրիլ ամիսներին և ենթադրում են հիմնականում
մեխանիկական մաքրման աշխատանքներ,
մասնավորապես՝ գետահուններում հայտնված
թափոնների հեռացում: Առավել խոցելի
հատվածները Շենգավիթ և Էրեբունի վարչական
շրջաններում են:

Սակայն գետի անմիաթար վիճակը միայն
քաղաքացիների անիրագրելիության ու Էկոլոգիական
կրթության ցածր մակարդակի հետևանքը չէ: Խնդրի
գլխավոր պատճառը բնապահպանական հիմնահարցերի,
օրենսդրության պահանջների անտեսումն ու շրջանցումն
է, ինչպես նաև համապատասխան պետական ու
համայնքային մարմինների, հանրային ծառայություններ
մատուցող կազմակերպությունների կողմից իրենց
պարտավորությունների կատարման ու հսկողության
բացակայությունը:

Ավագանու անդամները բազմիցս արձանագրել
են^❸, քաղհասարակությունը՝ բարձրաձայնել, որ
չնայած պարբերաբար ծախսվող գումարներին՝
Գետառն այդպես էլ լիարժեք չի մաքրվում:
Կենսաբանական մաքրման հարցը չի էլ
քննարկվում:

Վերջերս Երևանի քաղաքապետարանը
հայտարարել է, որ Հրազդանի կիրճին կտրվի հատուկ
կարգավիճակ՝ արձանագրելով, որ գետը կանգնել
է բնապահպանական լուրջ խնդիրների առջև, որ
90-ականներից ի վեր անկանոն կառուցապատման
պատճառով փոխվել են կիրճում հանգստի
կազմակերպման մասին բոլոր պատկերացումները:

*Որպես ռեկրեացիոն գոտի կիրճը պետք է լինի
հանգստի, զբոսաշրջության և առողջության
կազմակերպմանը նվիրված վայր, – նշված է
հայտարարության մեջ^❹:*

❶ → https://www.arlis.am/Annexes/3/erit3_10_216-223.pdf

❷ → <https://www.aliqmedia.am/2022/02/28/50216/>

❸ Հանրային ռադիոյի անդրադարձը Երևանի ավագանու կիստին:
→ <http://bit.ly/40ebGSI>

❹ → <https://armenpress.am/arm/news/1079653/>



Սակայն չրագդանի կիրճի էկոլոգիական վիճակի բարելավման նախագծում գետի ձախակողմյան վտակը՝ Գետառը, ներառված չէ: Մինչդեռ Գետառի ջուրը միախառնվում է չրագդանին, որտեղ մարդիկ սիրողական ձկնորսությամբ են զբաղվում նաև այսօր, ինչպես նաև օգտագործում գետի ջուրը ոռոգման նպատակով: Բարեկարգման ծրագրերի/ նախագծերի իրականացման դեպքում էլ ավելի կմեծանա գետավազանի ռեկրեացիոն նշանակությունը, ուստի հաջողելու համար անհրաժեշտ է նվազեցնել բնապահպանական ռիսկը՝ ուշադրություն դարձնելով նաև վտակների մաքրմանը, դրանց ջրի որակի բարելավմանն ու էկոհամակարգի վերականգնմանը, աղտոտման աղբյուրների նկատմամբ վերահսկողության մեծացմանն ու աղտոտման կանխարգելմանը:

Գետառը՝ որպես գետ վերականգնելու տեսլականը

ԵՄ Ջրային նախաձեռնությունն պլյուս Արևելյան գործընկերության երկրների համար ծրագրով աջակցություն է ցուցաբերվել ջրավազանային կառավարման պլանների (ՋԿՊ), այդ թվում՝ չրագդանի ՋԿՊ մշակմանը: Փաստաթղթում մեծ տեղ է հատկացվել մոնիթորինգի¹ արդյունքների հիման վրա աղտոտման աղբյուրների բացահայտմանը, կեղտաջրերի մաքրման կայանների կառուցմանը: Նատուկ շեշտադրվել է, որ գետերն անհրաժեշտ է վերադարձնել բնական վիճակին, վերականգնել ակամերձ պաշտպանության գոտիները, կարգավորել ջրառը, ինչպես նաև խուսափել կրկին սխալներ գործելուց²:

Գետառի նշանակությունը կլիմայի փոփոխության տեսանկյունից

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության համաձայն՝ Հայաստանը ջրի ցածր մատչելիություն ունեցող երկիր է և ջրային ռեսուրսների շահագործման 45% համաթվով ենթակա է ջրային սթրեսի (ջրառ/քաղցրահամ ջրի պաշարներին), այսինքն՝ ջրառն ավելին է, քան քաղցրահամ ջրի վերականգնվող

¹ → https://www.euwiplu-seast.eu/images/2021/05/PDF/Hrazdan_draft_RBMP_Report_ENG_VFInal_21042021.pdf

² Չրագդան գետի ջրավազանային կառավարման պլան, կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում իրավական, ինստիտուցիոնալ, խոցելիության գնահատման և հարմարվողականության պլանավորման բացերի ու խոչընդոտների բացահայտում և վերլուծում:

to water stress with 45% Water Exploitation.^❶ Based on future projections, even under the optimistic scenario, the value of the water stress index in the central and southern parts of Armenia will increase to 80% in 2030-2040".^❷

River flow is forecast to decrease by 7% throughout Armenia by 2030. Under the pessimistic scenario the flow is predicted to decrease by 39% by 2100 which underlines the urgent need to implement respective adaptation measures.

River networks are essential for cities, especially for grayish Yerevan, located in a semi-desert and dry-steppe landscape, in the northern part of the subtropical climate zone. The climate is described as continental; winters are cold, sometimes snowy, summers are predominantly hot and dry. Precipitation is low. The average amount of annual precipitation is 380 mm. The annual precipitation maximum is observed in April-May. The second maximum is observed in October-November.

The lowest temperature in Yerevan was -31°C, recorded on January 31, 1933. The absolute maximum air temperature was 42°C, recorded at Zvartnots Station in July, 2011.^❸

The average monthly temperature in August ranges from 22°C to 26°C, with a daily maximum of 41.4°C (according to the official website of Yerevan Municipality)^❹. In the summer season mountain and valley winds have slightly cooling effects in the evening.

Freely flowing Getar was beneficial to the city, cooling it down during the summer months, says Hakob Sanasaryan, president of the Union of Greens in his interview with the Econews.am^❺.

❶ According to the Organization for Economic Co-operation and Development (OECD), if the water exploitation index is higher than 40% the country is considered under water stress. See

→ <https://www.oecd.org/env/outreach/AM%20Water%20Value.pdf>, p. 13

❷ → http://www.nature-ic.am/Content/announcements/12796/WSAP_draft_report_eng.pdf, p.16

❸ Риянос Мкртчян, *Климат Еревана* [Mkrтчyan, Rianos. The Climate of Yerevan]

❹ → <https://www.yerevan.am/en/climate-conditions/>

❺ → <https://econews.am/?p=8794&l=am>

պաշարներ, ու գնալով մեծանում է ջրի պահանջարկը: Ապագայի կանխատեսումներից ելնելով՝ նույնիսկ լավատեսական^❶ սցենարի դեպքում Հայաստանի կենտրոնական և հարավային մասերում ջրային պոթենսի համաթվի արժեքը 2030-2040 թվականներին կբարձրանա մինչև 80%^❷: Կանխատեսումների համաձայն՝ մինչև 2030 թ. Հայաստանի տարածքի գումարային գետային հոսքը կնվազի 7%-ով, վատատեսական սցենարի դեպքում՝ մինչև 2100 թվականը կանխատեսվում է գետային հոսքի շուրջ 39% նվազում, ինչը խիստ հրատապ է դարձնում համապատասխան հարմարվողականության միջոցառումների մշակումը և իրականացումը:

Գետային ցանցը կարևոր նշանակություն ունի քաղաքների համար, առավել ևս՝ մոխրագույնի մեջ խեղդված, անապատային-կիսաանապատային ու չոր, տափաստանային լանդշաֆտում գտնվող Երևանի համար, որն ընկած է մերձարևադարձային կլիմայական գոտու հյուսիսային մասում:

Կլիման չոր, ցամաքային է՝ արտահայտված ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշներով: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձյունառատ, ամռանը հիմնականում շոգ է, չորային:

Տեղումները սակավ են: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը Երևանում կազմում է միջինը 380 մմ: Տարվա կտրվածքով տեղումների առավելագույնը դիտվում է ապրիլ-մայիս ամիսներին: Երկրորդ առավելագույնը դիտվում է աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Օդի ամենացածր ջերմաստիճանը Երևանի սահմաններում գրանցվել է 1933 թ. հունվարի 31-ին՝ -31°C: Երևանում օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է 2011 թ. հուլիս ամսին Զվարթնոց կայանում՝ 42°C^❸:

Օդի ամսական միջին ջերմաստիճանն օգոստոսին 22-26°C է, ցերեկային առավելագույնը՝ 41,4°C (ըստ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի)^❹: Ամռանը զարգանում են լեռնահովտային քամիները՝ փոքր-ինչ զովացնելով երեկոյան ժամերին:

Գետառը, երբ ազատ հոսում էր, քաղաքի համար շատ լավ էր՝ ամառվա ամիսներին զովություն էր ապահովում, – EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայքի հետ զրույցում

❶ → <https://www.oecd.org/env/outreach/AM%20Water%20Value.pdf>, էջ 13:

❷ → http://www.nature-am/Content/announcements/12796/WSAP_draft_report_AM.pdf, էջ 23:

❸ Риянос Мкртчян, Климат Еревана. [Իհիանոս Սկրոտչյան, Երևանի կլիման]

❹ → <https://www.yerevanam.am/climate-conditions/>

The fragmented topography of Yerevan has a significant effect on the formation of weather and climate conditions in the city. Overall, heat flow rates in urban and suburban or rural areas are quite different; cities are much more warmer. Urban land expansion and changes in the chemical composition of the earth's surface and atmosphere have a huge impact on solar radiation, air movement and certain meteorological elements. The amount of solar radiation received by the earth's surface varies greatly due to the absorption and scattering of solar energy by water vapor, dust particles and aerosols. Increasing amounts of water vapor and carbon dioxide in the atmosphere absorb longwave energy emitted by the earth's atmosphere resulting in the greenhouse effect.

In recent years global climate change has caused a surge in natural disasters, including mudflows and floods. Therefore, the risk of Getar's flooding is high. Getar overflowed its banks regularly in the last hundred years (in 1923, 1924, 1925, 1928, 1946, 1947, 1950) causing extensive damage to the city. On May 25, 1946, the level of the river water rose up to 100 times, the solid flows were estimated at 415,000 cubic meters.❶

At that time it was decided that retaining walls should be built along the river in areas that now comprise the Avan-Arinj district. However, building walls cannot eliminate all potential hazards. Since 1946 the wooded hillsides and forest near the Yerevan TV Tower – ecosystems that were created not only for regulating urban microclimate but also for reducing the probability of mudflows – have been cut down. The riverbed is blocked which means that in case of a mudflow, the torrent will run across the surface causing significant harm to the city. "This can lead to great loss of life and property", concluded Hakob Sanasaryan in his interview.

Under such conditions, not neglecting Getar as a natural water flow is crucial to make the urban environment comfortable and pleasant but also safe.

❶ → https://www.eu-wipluseast.eu/images/2021/05/PDF/Hrazdan_draft_RBMP_Report_ENG_VFinal_21042021.pdf, p.42

ասել է *Կանաչների միության* նախագահ Հակոբ Սանասարյանը^❶:

Երևանում եղանակակիրմայական պայմանների ձևավորման վրա էապես ազդում է քաղաքի մասնատված ռելիեֆը: Առհասարակ, Երկրի մակերևույթից և Արեգակից եկող ջերմության կորուստը քաղաքում և մերձքաղաքային շրջաններում բավականին տարբեր է, քաղաքի կլիման ավելի տաք է:

Ընդհանուր առմամբ քաղաքի մակերեսի մեծացումը, Երկրի մակերևույթի և մթնոլորտի քիմիական կազմի փոփոխությունները բավականին ազդել են ճառագայթային ռեժիմի, օդի միկրոշրջանառության և առանձին օդերևութաբանական տարրերի վրա: Ջերմության քանակը, որը ստանում է Երկրի մակերևույթը Արեգակից, զգալիորեն փոփոխվում է՝ կապված ջրային գոլորշիների, գազափոշային խառնուրդների, աերոզոլների կողմից ճառագայթային էներգիայի կլանման և ցրման հետ: Մթնոլորտում ջրային գոլորշիների և ածխաթթու գազի մեծ պարունակությունը նպաստում է Երկրի մակերևույթի արձակած երկարալիք ճառագայթման կլանմանը, որն էլ բերում է ջերմոցային էֆեկտի:

Կլիմայի գլոբալ փոփոխությամբ պայմանավորված՝ վերջին տարիներին աճի միտում ունեն նաև տարերային աղետները, այդ թվում՝ սելավներն ու հեղեղումները: Հետևաբար մեծ է Գետառի վարարման վտանգը: Գետառը պարբերաբար վարարել է՝ զգալի ավերածություններ պատճառելով Երևանին վերջին հարյուրամյակում (1923, 1924, 1925, 1928, 1946, 1947, 1950 թթ.): Մասնավորապես՝ 1946 թ. մայիսի 25-ին ջրի ծախսն ավելացել է 100 անգամ^❷: «Քաղաք լցված սելավի ընդհանուր ծավալը կազմել է 0,5 միլիոն խմ, ինչը նշանակում է, որ հեղեղված յուրաքանչյուր քառակուսի մետրին բաժին են ընկել 380 կգ տիղմ ու քար»^❸:

Այդ ժամանակ որոշվել է ներկայիս Ավան-Առինջ թաղամասում պատվար կառուցել: Բայց պատվարը չի կարող լիովին կանխել վտանգը: 1946 թ.-ից ի վեր սարալանջերը, հեռուստաաշտարակի մոտակա անտառային շերտը, որոնք ստեղծված էին ոչ միայն քաղաքի միկրոկլիման կարգավորելու, այլև սելավի

❶ → <https://econews.am/?p=8794&l=am>

❷ <https://www.panorama.am/news/2015/06/20/hovikcharkhchyan/27109>

❸ → <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A5%D5%BF%D5%A1%D5%BC>



Getar river and the panorama of the city,
view from Khanjyan street, 1986.

Գետառը և քաղաքի համայնապատկերը,
Տեսարան հասնչյան փողոցից, 1986թ.

հավանականությունը փոքրացնելու համար, հատվել են: Փակվել է գետի հունը, ինչը նշանակում է, որ սելավի դեպքում սելավային հոսքը մակերեսով է հոսելու՝ պատճառելով նյութական վնասներ: «Դա շատ մեծ թվով մարդկային զոհերի և նյութական կորուստների պատճառ կարող է դառնալ», - նշել է Հակոբ Սանասարյանը:

Նման պայմաններում քաղաքային կենսամիջավայրը ոչ միայն բարեկեցիկ ու հաճելի, այլև ապահով դարձնելու համար չափազանց կարևոր է Գետառը որպես բնական գետ չանտեսելը:

Բնահենք լուծումները քաղաքային միջավայրում

Էկոհամակարգերը բացառիկ դերակատարություն ունեն քաղաքային միջավայրի բարելավման, մարդկանց բարեկեցության ու կյանքի որակի բարձրացման գործում: Գոյություն ունի էկոհամակարգային ծառայությունների չորս տեսակ՝ մատակարարող, կարգավորող, մշակութային և օժանդակ: Դեռևս լրջորեն չի ուսումնասիրվել, թե ինչ ծառայություններ է մատուցում Գետառի էկոհամակարգը քաղաքին ու նրա բնակիչներին:

Օրինակ՝ օգտագործելով Գետառի ջուրը՝ օգտվում ենք գետի մատակարարող ծառայությունից:

Գետառի կարգավորող ծառայությունը կարող է դրսևորվել միկրոկլիմայի կարգավորման, հեղեղումների կանխարգելման, ջրի ինքնամաքման և այլ գործառույթների միջոցով:

Գետառը կարող է մշակութային ծառայություններ առաջարկել կամ ոչ նյութական բարիքներ ստեղծել, օրինակ՝ առափնյա հատվածներում հանգստի կազմակերպման հնարավորություն, գեղագիտական՝ մաքուր գետակին՝ նայելու և խոխոջյունն ունկնդրելու հնարավորություն:

Գետառի օժանդակ ծառայության օրինակ կարող է լինել այլ էկոհամակարգի վերականգնումը: Վերականգնվելու դեպքում գետը կնպաստի կենսունակ ջրային կենսաբազմազանությանը՝ ձկների, երկկենցաղների, սողունների, կաթնասունների, թռչունների և անողնաշարավորների վերարտադրությանը և այլն:

Գետի էկոհամակարգային ծառայությունների կորուստը ոչ միայն բնապահպանական, այլև սոցիալական-տնտեսական խնդիր է, քանի որ այն ազդում է թե՛ շրջակա միջավայրի, թե՛ տնտեսության և Երևան քաղաքի բնակիչների բարեկեցության վրա: Այսօր մենք զրկված ենք Գետառի էկոհամակարգային

Nature-based solutions for urban areas

Ecosystems play a unique role in improving urban environments, citizens' well-being and quality of life. There are four categories of ecosystem services: provisioning, regulating, cultural and supporting. What goods and services can Getar's ecosystem provide for Yerevan and its inhabitants? This question has not been seriously studied yet.

For instance, by using Getar's water, we benefit from the 'provisional' service of the river.

Getar's regulating service can manifest itself through microclimate regulation, flood prevention, self-purification and other functions.

The river can offer cultural services or create intangible goods, such as the possibility of riverbank recreation or the aesthetic pleasure of watching the river's pristine water and listening to its pleasant sounds.

The creation of another ecosystem is a fine example of the river's supporting service. The aquatic biodiversity, including the reproduction of fish, amphibians, reptiles, mammals, birds and invertebrates, will greatly benefit from Getar's restoration.

The fact that Getar is currently unable to provide ecosystem services is not only an environmental, but also a socio-economic issue as it enhances both the environment and the economy, and the welfare of Yerevan's inhabitants who are deprived of the vital services Getar could offer to them. Further pollution and deterioration of Getar's waters present a grave threat to the city.

The ecological status of the river can be changed by identifying the main sources of water pollution and adopting measures to prevent it, e.g. by establishing sanitary protection zones. It is necessary to increase the river's self-cleaning ability by constructing domestic wastewater treatment plants, coming up with local solutions for water management, etc.

Nowadays, countries successful in urban planning shift their emphasis towards nature-based urban policies that maintain a balance between social, economic and environmental benefits by contributing to biodiversity conservation and improving the provision of ecosystem services.

ծառայություններից լիարժեքորեն օգտվելու հնարավորությունից: Աղտոտումն ու գետի ոչնչացումը ամենաակնհայտ սպառնալիքներից են:

Գետառի էկոլոգիական վիճակը կարելի է բարելավել նախնառաջ ջրի աղտոտման աղբյուրների բացահայտման ու աղտոտման կանխարգելման գործողությունների, օրինակ՝ սանիտարական գոտիների ստեղծման միջոցով: Անհրաժեշտ է բարելավել ջրի մաքրման ունակությունները՝ նախաձեռնելով մի շարք աշխատանքներ՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում, ջրի մաքրման տեղային լուծումների օգտագործում և այլն:

Քաղաքային պլանավորման առաջատար փորձ ունեցող երկրներում ներկայումս առավել կարևորվում է բնահենք լուծումների ներդրումը, որոնք հավասարակշռում են տնտեսական, բնապահպանական ու սոցիալական օգուտները՝ միաժամանակ նպաստելով կենսաբազմազանության պահպանությանն ու առավել ճկուն դարձնելով էկոհամակարգային ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

The Unwritten
Memory
of the River

Գետի
չգրված
հիշողությունը

Vagharshak Badalyan
13 Khorenatsi Str., 2nd Blind Alley

Vagharshak or Vagho, spent his childhood with Getar and its inhabitants. He played and had his vacations here. After living in the 9th Massive (Nor Nork District) for 30 years, he moved back to his native district. He is sure that his house is the oldest one here. It was built in 1883 by his grandfather himself.

Վաղարշակը՝ Վաղոն, իր մանկությունն անցկացրել է Գետառի
և Գետառի բնակիչների հետ: Այստեղ խաղացել է,
հանգստացել է և 30 տարի Մասիվում ապրելուց հետո
վերադարձել հայրենի տուն: Վստահ է, որ իր տունը
ամենահինն է թաղամասում: Կառուցվել է 1883 թվին,
Վաղոյի տատի հոր ձեռքերով:

I was born here, and for as long as I can remember Getar has been present, it still is, but since the 1980s things have changed a lot. The water quality suffered, but the riverbed is unchanged. The water quality was affected a lot, the river has been polluted. That's the only difference we have noticed, nothing else. The river is still the same.

Did the river become smaller in size?

Did the water level rise or drop?

It rose and dropped, both happened from time to time. Once it rose by 1-1.5 m and apart from this room, the entire house was flooded... It reached the backyard but didn't surge into this room. The backyard was covered with water. It happened only that year. It occurs in autumn or in spring caused by the rains and thaw. If it rains constantly for more than three hours, the water level rises by 50-60 cm. That's how it happens.

Is it more difficult to live here in winter?

Is the weather colder here?

Does the water level rise when it snows?

No, it doesn't rise when it snows, it happens during the rains. The urban runoff mostly flows into Getar. Then the water level gradually rises. From the area surrounding the Botanical Garden the surface runoff flows down into the river. That's the main reason why the level rises.

We experience some difficulties in living here because of high humidity. We try to deal with this problem... We don't know how the situation will change.

But is it possible to deal with that problem if you live in close proximity to the river?

No, you just have to keep a distance from the river, that's it. The air is humid. Even if you have a humidity controlled house, the air is still humid. It has both good and bad effects. In my opinion, the good thing... that's what I noticed... is that people living close to the river don't get sick frequently. In a sense, humidity prevents it to some extent. I don't know, maybe I am wrong but it's the case as far as I can see. Here people experience milder symptoms of flu or similar infections... For instance, my aunt, she is still alive and well, she was born and grew up

Դե, ես ինչ հիշում եմ, ինչ ծնվել եմ, ստեղ եմ ծնվել, գետը եղել և ու հլը կա, բայց համեմատած 80-ական թվականներին մինչև էսօր շատ բան և փոխվել, գետի մաքրվածությունը կոնկրետ, հունը՝ չէ, հունը չի փոխվել, ոնց կա՝ տենց մնացել և, բայց մաքրության հետ կապված շատ բան և փոխվել, կեղտոտվել և ջուրը: Էդ տարբերությունն ենք մենակ զգացել գետի հետ կապված, ուրիշ ոչինչ: Էն որ ոնց եղել և, տենց կա:

***Ինքը չափսերով չի՞
փոքրացել, բարձրացել-իջել:***

Բարձրացել-իջել և, ժամանակ առ ժամանակ եղել և: Դաժե մի տարի մետր-մետրից ավել բարձրացավ, մենակ էս սենյակը ջուր չլցվավ, բոլոր սենյակները լցվել էին, [...] հայաթ հասավ, բայց չլցվավ էս սենյակը: Սաղ հայաթը ջուր էր: Էդ մի տարին էր եղել: Լինում և, գարուն, աշուն, անձրևային ձնհալը, որ լինում և: Եթե մի երեք ժամ ստաբիլ անձրև եկավ, բարձրանում և... էլի մի 50-60 սանտիմետր բարձրանում և: Դա և:

***Իսկ ձմռանը ստեղ ավելի դժվա՞ր և,
ավելի ցո՞ւրտ և: Ձյունը որ գալիս և,
ջուրը բարձրանո՞ւմ և , թե՞ ...***

Չէ, ձյան ժամանակ չի բարձրանում, մենակ անձրևներին, որովհետև քաղաքի համարյա մեծամասնությունը, ջրերը, որ սլիվ են լինում, լցվում են տոռութաներով, փոսերով [ու] գալի լցվում են Գետառի մեջ: Էդ ժամանակ Գետառի հունը սկսում և կամաց-կամաց բարձրանալ: Դա էդ վերևից՝ Բուսաբանական այգուց սկսած, ընդերից էս բոլոր ջրերը գալի լցվում են Գետառը, անձրևային: Դրա համար տենց բարձրանում և: Դժվարությունը կա, խոնավությունն և, որի որ դեմը պետք և առնենք, փորձում ենք առնել... չգիտենք՝ հետո ո՞նց կարա դառնա:

***Բայց ընդհանրապես հնարավո՞ր և,
եթե այսքան մոտ ես ապրում գետին:***

Չէ, հեռու պիտի լինես ուղղակի գետից, կապ չունի: Օդը արդեն խոնավ և: Եթե տունը խոնավ չի, ինչ-որ մի ձև իզոլյացիա արած և, օդը որ խոնավ և ու խոնավ և: Դա մի տեղ նպաստում և դեպի լավը, մի տեղ՝ վատը: Լավը նրանում և, որ, իմ կարծիքն և... էս տենց եմ նկատել, գետի ափին ապրող ժողովուրդը շուտ-շուտ չի հիվանդանում: Ինչ առումով՝ խոնավությունը պահում և որոշ չափով: Եսիմ, չգիտեմ, կարող և սխալվում եմ, բայց ոնց էս նկատում եմ, էդի տենց և: Թեթև են տանում... էդ գրիպն և, էդ շարքային

here, lived all her life here. She is healthy and doesn't get ill... We also didn't get sick, I was six when we left, but I was here twice a week, on the weekend... no health problems. Maybe that's because everything was clean, the food was healthy, that's why we beat disease... I'm not sure... I mean before the war [in 1992-1993].

What did the Soviet government do?

How come it was a better place by then?

I was a kid by then, I can't explain why it was a better place, I didn't experience it myself. I didn't suffer from humidity or hot weather... when you're a kid, you just eat your food and rush to play outside, that's how you spend your day and grow up. If it's warm indoors, the humidity outside will cause no harm... quite the opposite. It would be better if the river and the air were clean, if the water wasn't smelly. Now [in winter] it isn't smelly, it is in summer. If it's cold outside, the odor isn't pungent, we don't smell it. But in summer, when it's hot, and the water is warm... and people dump their garbage into the river, it smells awful. Even if it's a little bit windy, that pungent smell fills the air. That's it.

I used to fish here, the river was full of fish, the water was clean and unpolluted. I caught fish, I knew where to catch them, at the edges of the river. There were no barriers, and the river seemed motionless. That place was not in the center, but at the edge, close to the houses and buildings. The water was still and the fish were visible, as if they were having a rest there. I was watching them closely, what else could I do as a kid? I managed to get a fishing line by asking someone for it. I set the hook using bread.

Did your father or older people go fishing?

Did they use to just sit there catching fish?

No, it's a flowing watercourse, it's impossible to catch fish in the flowing river. You should either use a fishing net or direct current electricity... which is illegal. But older people told me how they'd got together on the Getar bridge taking a little rest, smoking, watching the big fish swimming up to the surface against the current. They caught these fish once in a while, but they

հիվանդություններն են... չենա հորքուրս ներկա
ա, սաղ ա, էլի, ծնվել ա ստեղ, մեծացել ա ստեղ,
սաղ կյանքը ապրել ա ու ապրում ա: Դեռ պինդ
ա, չի հիվանդանում [...]: Մենք էլ, ես 6 տարեկան
եմ եղել, դուրս ենք եկել ստեղից, ու որ դուրս ենք
եկել, ճիշտ ա, շաբաթը երկու օր էլի ստեղ եմ եղել՝
հանգստյան օրերին, էն որ... ոչ մի խնդիր: Թե
եղի, էն ժամանակ ամեն ինչ մաքուր էր, սնունդը
մաքուր ա եղել, դրա համար ենք դիմադրել... չեմ
կարա իմանամ [...]: Մինչև պատերազմը [1992-93
թթ.]:

**Այսինքն՝ ի՞նչ էր անում էն ժամանակ Սովետը, ինչո՞վ
էր ստեղ ավելի լավ Սովետի ժամանակ:**

Ես տենց փոքր եմ եղել, չեմ կարա մեկնաբանեմ,
թե ինչո՞վ ա լավ եղել, չեմ էլ զգացել: Էդ
տաքությունը, խոնավությունը չեմ էլ զգացել... Դե,
երեխա ես, էլի, փորդ կուշտ ա, գնում ես դուրսը
խաղում ես... օրդ անցնում ա, գնալով մեծանում
ես: Եթե տունը չոր լինի, օդի խոնավությունը չի
խանգարի ապրելու համար, ավելի լավ: Գետը,
ջուրը մաքուր լինի, այսինքն՝ ջրից հոտ չգա:
Հիմա [ձմռանը] հոտ չի գալիս ջրից, ամառը՝ հա:
Դուրսը որ ցուրտ ա լինում, շատ արտահայտիչ
չի լինում, չենք զգում: Բայց ամառը որ տաք ա
լինում, ջուրն էլ տաք ա լինում... Հիմա գիբիլը,
կեղտը շատ են լցնում, էլի հոտը գալիս ա: Մի
հատ թեթև քամի էլ որ լինում ա, հոտը բերում ա:

Էդ ա, տենց: Ժամանակին ձուկ էի բռնում մեջից, լիքը
ձուկ կար, ջուրը մաքուր էր, չէին կեղտոտում:
Ես էի բռնում ձուկը, տեղեր կար՝ անկյունները,
պատից դուրս ընկած, որ ջուրը ըտե ոնց որ
կանգնած լիներ, մեջտեղը չէ, անկյունները, էլի,
շենքերի, տների, ջուրը որտեղ որ կանգնած էր
լինում, ըտե ձկները երևում էին, իրանք ոնց որ
ըտե հանգստանում էին, էլի: Ըտենց նայում էի,
հետևում էի, դե, երեխա ես, երեխեն ինչ պիտի
անի: Ես իմ ձևով ձկան թել էի ուզում, խնդրում էի,
տալիս էին: Չյանգալը կախում էի, հացով ձուկ էի
բռնում:

**Իսկ ձեր պապան կամ ավելի մեծ
տարիքով մարդիկ եղե՞լ ա, որ
իրանք գնան ձուկ բռնեն: Չենց նստեն,
ուղղակի ձուկ բռնելու համար:**

Չէ, դե ինքը հոսող գետ ա, հոսող գետից չի լինում
տենց ձուկ բռնել: Հոսող գետի մեջ կամ պիտի
սետկա փռվի, կամ էլ պետք ա հոսանքով բռնվի...
Էդ էլ անօրինական ա, էլի: Բայց պատմել են,
մեծերը պատմել են, ես [Գետառի մոստի] վրա,

didn't go into detail about it. So this kind of thing happened too. They also said that the gurgle of the stream makes you relax and feel at ease.

Every year one or two elderly persons die in this neighborhood. It seems as if the neighborhood starts afresh, the older generation passes away, only a few of them are still alive, mostly women. As to women... well, I don't think they're well informed. All of them were not born here, they came here marrying someone.

You know... I don't remember when, but once the Persian ambassador came to our small house to take a rest enjoying the gurgling stream on the riverbank. Somehow they managed to find our house and asked if they could rent it for the ambassador. My aunt lived here at the time. She let them rent it for a month. He [the ambassador] left for work in the morning and returned in the evening. When he took a rest, he would open the window, lie down and relax enjoying the gurgle of the water.

Do you find this gurgle relaxing?

If you sit back and listen to those sounds for ten minutes, you feel at ease at once.

Does it mean that life is peaceful here thanks to the river?

It contributes to that. Yes, it's peaceful here. People are quiet, not angry... I mean that aggressive behavior depends on a character, it has nothing to do with the gurgling. But it's a fact that the sound of the water has a relaxing effect.

Are there good neighborly relations?

Is it a good community?

These relations are weak, people are not actively engaged in neighborly life. It seems that now the same happens in all other places too, either because of the hardships of life or because of a character type. Definitely weak. I lived in the 9th Massive [Nor Nork District] for 30 years, we got the apartment in [19]87, however, I was always attached to this place. The difference between these two neighborhoods is like the difference... between Mount Ararat and Mount

ասում ա, կանգնում էինք, հավաքվում էինք, ասում ա, դուրս էինք գալիս տնից, ծխում էինք, կանգնում էինք մոտի վրա, ասում ա՝ տեսնում էինք՝ մեծ-մեծ ձկները ոնց էին լողում, գետին հակառակ բարձրանում են վերև: Էղել ա, որ բռնել են, բայց չեն ասել՝ ոնց, չեն մեկնաբանել: Էղել են տենց դեպքեր:

Մեկ էլ պատմում էին, որ հանգստացնում ա խշռոցը ջրի, էն որ լիցքաթափվում ա մարդը:

Ամեն տարի հայաթի մեծերից մեկը-երկուը մահանում են: Գնալով հայաթը ոնց որ թարմանում ա, մեծերը սաղ գնում են, մեծերից մարդ չի մնացել, մի քանի հոգի են, մեծամասնությունն էլ կանայք են: Կանայք էլ, դե, կանայք դժվար ինֆորմացված լինեն: Բոլորն էլ հարս են էղել, էլի, էկել են, ապրել են:

Ըտենց... դաժե էդ փոքր տան մեջ, տարին չեմ հիշում, բայց էղել ա, որ Պարսկաստանի դեսպանը Էկավ, զուտ ջրի ափին, էդ խշռոցին հանգստանա: Էկավ, խնդրեց, չերեզներով, հարցուփորձ անելով, էկել էին՝ բա ուզում ենք էս սենյակը վարձակալենք էսինչ մարդու համար: Էն ժամանակ փոքր հորքուրս էր մնում ստեղ: Համաձայնվել էր, տենց թույլ էր տվել, մեկ ամիս մնաց: Դե, առավոտ գնում էր, երեկոյան գալիս էր: Իրա հանգստյան ժամին լուսամուտը բաց էր թողնում, էդ խշռոցի տակ պառկում էր ու հանգստանում էր:

Իսկ ձեզ համար էդ խշռոցը հանգստացնող ա:

Տասը ըոպե, ասենք, թինկ տաս, նստես ու էդ խշռոցը լսես, անջատում ա միանգամից:

Այսինքն՝ հանգի՞ստ ա ստեղ անցնում կյանքը դրա պատճառով:

Դա էլ ա նպաստում: Հա, հանգիստ ա անցնում: Մարդիկ հանգիստ են, ագրեսիվ չեն... այսինքն՝ ագրեսիվությունը մարդու բնավորությունից ա կախված: Էդ կապ չունի ջրի խշռոցի հետ: Բայց որ հանգստացնող ա ջուրը, էդի հաստատ ա, ձենը իրա, էդ խշռոցը:

Հարևանությունը մոտի՞կ ա իրար հետ, ո՞նց ա որպես համայնք:

Մի քիչ թույլ ա, շատ տենց ակտիվ չեն որպես հարևաններ մեկը մեկի նկատմամբ: Հիմա ոնց որ բոլոր տեղերն ա տենց դառել, թե՛ կյանքի դժվարությունից, թե՛ մարդկանց տեսակից: Չէ, թույլ ա: Ես որ ապրել եմ 30 տարի 9-րդ զանգված, 87 թվին տունը ստացանք, բայց էս միշտ ստեղ կապ եմ ունեցել: Համեմատած ընդեղի հարևանությունը, մեկ էլ ստեղի... ոնց որ Արարատ

Ara. There is such a huge difference. There [in Nor Nork] we lived in a nine-story apartment building... but people were attached to each other like relatives... It was due to our parents. We continued to maintain and develop these relations. Everyone knew and respected us there. But here there is no such thing as neighborly relations. Because there are few men or younger people here, only elderly people. There is no proper communication and daily contact between each other. It's been five years since I've moved here and I tried every single day to bring people together to have a chat, share meals, socialize and enjoy good relations... but it didn't work, nothing has changed. I've been trying for four years, but with no success. So I thought let it be, do whatever you want.

Were things different in your father's lifetime?

At the time when he was a young boy, neighborly relations were relatively good, because the older generation was still alive. Their fathers could maintain such relations, then they died and the war broke out, the communists were removed, and we were left with the present situation, people scattered in all directions, those relations came to an end, things have changed.

Weekends

I loved this place. My aunts pampered me. They let me do whatever I wanted, and I did, I climbed the mulberry tree and ate the fruits during the picking season. I kept pigeons on the rooftop. I also kept hens, raised chickens and I was upset every time when cats caught and ate my chickens. My aunts were very permissive, but not my parents. That's why I was attracted to this place. I had a rest here on weekends. I left only on Sunday evening as I had to go to school the next day.

Friends?

I have [childhood] friends here. Now they are scattered all over the world, but we stay in touch, we talk on the phone. They are not here,

լեռը ու Արա լեռը: Այ ըտենց տարբերություն կա: Ընդդեմ, ճիշտ ա, բնակելի ինըհարկանի շենք էր [...] բայց ոնց որ հարազատ լինեին բոլորը [...]: Էդի ստեղծին մեր ծնողները, մենք պահեցինք ու ավելի մեծացրինք: Ու բոլորը մեզ ընդդեմ հարգում էին, ճանաչում էին: Իսկ ստեղ ըտենց բան չկա, էդ կապը չկա: Որովհետև տղամարդիկ շատ քիչ են, ջահելները քիչ են, մեծերն են շատ: Շփում չկա, տալ-առնել չկա, նստել չկա: Ես, հեսա, հինգերորդ տարին ա, որ ստեղ եմ, փորձի ես էդ կազմակերպել, էն որ ամեն օր-օրը մեջ դուրսը, ում ճանաչում եմ, հավաքում եմ, նստենք, մի կտոր հաց ուտենք, շփվենք, ասենք, խոսանք, ու կապը պաշտպանեմ... բայց, չէ, չի փոխվում: Չորս տարի ա՛ փորձում եմ, բայց չի ստացվում: Դե որ չի ստացվում, ասի՝ վայո, ոնց ուզում եք, նենց էլ ապրեք:

Իսկ ձեր պապայի ժամանակ:

Համեմատական կարգով՝ էն վախտ մի քիչ էդել ա, իրանց ժամանակ, ինքը որ ջահել տղա է էդել, իրանց ժամանակահատվածում մի քիչ էդել ա, որովհետև էդել են մեծերը, պապաները: Իրանց պապաները կարողացել են էդ ձևը պահել, հետո իրանք մահացել են, արանքում պատերազմն ա ընդել, կոմունիստները գնացին, էկավ էս կարգավիճակը, արդեն սաղ ցվրվան, ամեն մեկը՝ մի կողմ, ոնց որ սաղ վերացավ, սառավ, ձևերը փոխվան, էլի:

Շաբաթ-կիրակի գալը:

Սիրում էի [էս տեղը]: Նորքուրներս ինձի շատ էին տեղ տալի: Ասենք՝ թույլ էին տալիս իմ ուզածը ես իրականացնեի, ինչ ուզում էի՝ էնի անում էի, բարձրանում էի թթի ծառի վրա, սեզոնին թուփն էի ուտում: Աղունիկ էի պահում հայաթի կռիշը: Դաժը հավ էլ եմ պահել, հավի ճուտիկներ էի պահում, կատուները գալի տանում էին, նեղվում էի, մանթո էի ընզնում: Ինչ ուզում էի, ինձի թույլ են տվել հորքուրներս, արել եմ, բայց ծնողներս՝ չէ, ծնողներս թույլ չէին տալիս: Դրա համար ինձ ստեղ ավելի շատ էր ձգում: Հանգստանում էի շաբաթ-կիրակի: Կիրակի երեկոյան գնում էի, որ հաջորդ օրը դաս էինք:

Ընկերներ:

[Ստեղից մանկության] ընկերներ ունեմ: Հիմա ամեն մեկը ցվրված են մի կողմ, բայց կապը կա, շփվում ենք, զանգում ենք: Տարբեր տեղեր են ապրում, հայաթում չեն ու քիչ են, իրոք քիչ են:

they live in different places, but there are few of them.

Memories about Getar and friends

Sometimes while playing a game we kicked the ball so hard that it fell into Getar. At the time there were neither garages, nor houses along the lower part of the river. Getar wasn't hidden, it was visible. We ran into the river and waited until the stream would bring it back, so we could take it. Sometimes we could take the ball, sometimes we missed it. We got upset and felt sorry that we couldn't catch the ball and got angry that we couldn't continue to play football.

Should one cover Getar?

Covering Getar will create serious problems now. If they cover it, all the inhabitants must leave the place because the sewage discharges into Getar. How can they sort out this problem? If they channel it into pipes, the inhabitants' issue will remain unresolved. It means that they must evacuate all the inhabitants, raze the area to the ground and channel the river into the pipe.

If it didn't create such problems, maybe it would help to get rid of humidity... I don't know... on the other hand, I am not sure what we would have there instead. The river is the boundary between my house and my front door neighbor's. What form will it take [if the river is covered]? Walls? Pipes? What does this area turn into, if it is desiccated?.. A road? Nobody will agree on this.

It would be better if I had the chance to decide how to build it. But I don't have that chance. And I won't do it, because if the river is covered and turned into a road, one side of my house will face the road, and I won't be able to enter my house from this side. And windows must be walled up, which is a problem, both financial, and technical. The buildings are very old, small repair work causes more issues. That's the problem... If Getar is covered, everything around will be transformed. And if the state ignores people's opinions for its own sake, it will be very difficult to do it, because nobody will agree. The only solution for the state is to buy up properties along the street as it did in the city center, compensating citizens per square

Գետառի և ընկերների հիշողություն:

Մի անգամ դեպք եղավ գնդակ խաղալուց. գնդակը ուժեղ տշինք, ընկավ Գետառ: Եր, ժամանակ ես ներքևի կողմը ոչ գարած կար, ոչ տուն: Գետառը բաց էր, երևում էր: Վազելով իջնում էինք, մտնում էինք ջրի մեջ, սպասում էինք, որ երբ պիտի հասնի մեզի, որ գնդակը վերցնենք: Ժամանակ էր լինում՝ ստացվում էր, ժամանակ էր լինում՝ անցել էր արդեն գնդակը: Տենց դեպքեր էղել են, նեղվում էինք, մանթո էինք ընկնում, բա՝ չհասցրինք, խի՞ չհասցրինք, ասեսու բան, չէինք կարում եղ պահին ֆուտբոլ խաղալ, ջղայնանում էինք:

Գան փակե՞ն Գետառը:

Հիմա Գետառը փակելը մեծ խնդիր աս: Եթե Գետառը փակեն, ինչքան բնակիչ կա ստեղ՝ պիտի հանեն, որովհետև բոլորի կոյուղին նստած աս Գետառի վրա: Ճանապարհի էն կողմը չի կանում մենակ Գետառին, որովհետև կանալիզացիա կա, բայց Գետառի էս ավի բնակիչները և էն ավի բնակիչները՝ սաղ Գետառն աս: Գետառը որ փակվավ, եղ հարցը ո՞նց աս լուծվելու: Եթե, ասենք, տոռուբի մեջ քցին, բնակիչների հարցն աս մնում օդի մեջ: Ուրեմն բոլորին պիտի հանեն, սաղ հավասարացնեն հողին ու Գետառը կոխեն տոռուբի մեջ:

Եթե եղ խնդիրը չլիներ, եսիմ... մի տեղ խոնավությունը կվերանար, մի տեղ էլ... եսիմ, չգիտեմ, ըտեղ ինչ պետք աս լիներ: Հիմա մեր դիմացի հարևանի հետ կասար կարում աս ջուրը: [Եթե փակվավ], ինչ ձև փակվավ, պատե՞ր շարեցին, տոռուբով, չորացավ եղ տարածաշրջանը, ինչ աս դառնում եղ մասը, [...] ճանապարհ, չեն համաձայնվի:

Եթե էս հնարավորություն ունենայի ձևափոխելու տեղն ու դիրքը՝ վատ չէր լինի: Իսկ եթե էս [այդ] հնարավորությունը չունեմ, [չեմ անի], որովհետև եթե ջուրը փակվավ, դառավ ճանապարհ, տան պատը ճանապարհին աս նայում արդեն, արդեն էս էն կողմից ներսուդուրս չունեմ: Եթե լուսամուտ կա, լուսամուտն էլ պիտի փակեմ, պատ շարեմ, եղ էլ արդեն դառնում աս պրոբլեմ թե ֆինանսի հետ կապված, թե տների: Տները շատ հին են, եթե մի տեղ մի բանի կանում ենք, եղ մի բանը դառնում աս տաս: Սաղ պրոբլեմը էլի: [...] Եթե Գետառը փակվավ, ուրեմն լիքը բան աս ձևափոխվելու, իսկ եղի եթե չնայեցին բնակիչին, պետությունն օգտակար չեղավ, թողեց բնակիչին իրա հոյսին, շատ դժվար կլինի, չեն համաձայնվի ոչ մեկ: Իսկ միակ ելքը դա փողոցը վերցնում են, ոնց որ վերցրեցին որոշ փողոցներ

meter, close the street and turn it into a new big neighborhood. That's the only way to cover Getar. There are houses on both sides of the river, from that end to Sukiasyan's warehouses. What's the length? 500-600 meters.

What if the state does the opposite?

First, they cannot keep the river clean, this process must start at the top, all the business facilities must be closed down. These facilities shouldn't be allowed to discharge wastewater into the river. So that water stays clean. One needs to be strict and consistent in forbidding people to throw trash into the river. There is no proper dump site, so people throw their trash into the river. For example, to throw out the trash in the morning, I walk 500 meters to reach the main road where trash containers are located. Why do I have to walk 500 meters holding the trash bag in my hand? The yard is narrow and it's not possible to put a trash container there so that people in the neighborhood could use it, and trash will be collected regularly. But there is a charge for this.

There are many problems. People throw trash into the river which carries it, but it accumulates somewhere.

Business facilities?

These facilities don't cause inconvenience [to us], they just pollute the water and discharge chemical waste into it, the river becomes smelly. All the facilities, including the restaurant in the Botanical Garden, the Water World, Arqayadzor [restaurant] and other facilities, night clubs discharge wastewater into the river. That's enough to contaminate this small river.

Nearby business facilities?

There are some in the [Botanical] garden.

The room and the mulberry tree

The mulberry tree is a bit younger than this room. According to my aunt, my grandmother's mother was born in this room in 1883. This room was built by my grandmother's mother's father. In 1917 my grandmother was born here. Then my

կենտրոնում, բնակիչներին հատկացնեն իրենց համապատասխան քառակուսիով գումարը, փողոցը փակվում ա ու դառնում ա մի հատ խոշոր կենտրոն, մի հատ թագա թաղամաս ա դառնալու: Էդ միակ ձևն ա մենակ փրկելու Գետառի չլնելուն: Եթե երկու կողմն էլ էն ծերից մինչև Սուքիասյանենց պահեստները, բնակիչներ են նստած, քանի՞ մետր ա, 500-600 մետր:

Իսկ եթե ընդհակառակը անե՞ն:

Նախ՝ մաքուր չեն կարա պահել, որովհետև մաքրությունը պետք ա սկսվի վերևից, բոլոր օբյեկտները ուրեմն պիտի փակեն: Բոլոր օբյեկտներին պիտի թույլ չտան, որ ոչ մի կոյուղի չկայնի Գետառին, ջուրը մաքուր մնա: Պետք ա հետևողական լինել ու շատ խիստ լինել բնակիչների հետ, որ բնակիչը զիբիլ չքցի: Իսկ բնակիչը զիբիլը Գետառ չթափելու համար տեղ չունի զիբիլը տանել քցելու: Հիմա ես զիբիլը վերցնում եմ առավոտ, դուրս եմ գալիս, 500 մետր առաջանում եմ, հասնում եմ գլխավոր ճանապարհին, զիբիլի վեդոռն ընդեղ ա: Իսկ ինչի՞ համար ես պիտի 500 մետր, զիբիլը տենց ձեռս, քայլեմ: Էդ հնարավորությունը չկա, հայաթը նեղ ա, որ զիբիլի վեդոռն բերեն դնեն, որ ես տարածաշրջանի ժողովուրդը տաներ քցեր, դա էլ շուտ-շուտ կփոխվի, ու դրա համար էլ գումար են պահանջում: [...]

Դրա համար հարցերը շատ են, էլի: Քցում են զիբիլը, ճիշտ ա, ջուր ա, գնում ա, բայց մի տեղ կուտակվում ա, դառնում ա զիբիլ:

Օբյեկտնե՞րը:

Օբյեկտները [կյանքի ընթացքին չեն խանգարում] ուղղակի ջուրն ա կեղտոտվում, հոտն ա, քիմիան շատ ա մեջը լցվում: Բուսաբանական այգու մեջի ռեստորանային համալիրից սկսած Ջրաշխարհով, «Արքայաձորով» իջնում ա, ինչքան օբյեկտներ, գիշերային ակումբներ կան՝ սաղ վրեն նստած են: Էդի հերիք ա, որ էդ փոքրիկ Գետակը արդեն թունավորվի:

Մոտիկ օբյեկտնե՞րը:

[Բուսաբանական] Այգու մեջ էլ կա:

Մենյակը և թթենին

Թթենին, ճիշտ ա, մի քիչ էս սենյակից ջառել ա, էս սենյակը, հորքուրիս ասելով, տատիկիս մաման 1883 թվականին ծնվել ա էս սենյակում:

aunts and my father were born. The oldest of my aunts is 75 years old, my two aunts are still alive, my father and the third aunt passed away. And one of my aunts lives here. All of them grew up in this room. This room was divided into two parts. There was a log here. A huge wooden log. It served as a pillar and supported the roof. That pillar divided the room. A bedroom on one side and a small living room on the other. There was a kitchen, but it was very small, a kind of kitchen. That's how they'd lived until my father was 16 years old and decided to build a kitchen and one more room, all by hand...

A woman lived next door, her husband had died before. If I'm not mistaken, she was either Gypsy, or Yazidi. She was a wicked woman and didn't let us climb the mulberry tree and eat the fruits. She said that we broke her roof and it was leaking. She lived alone most of her life, had a hard life and became a bitter woman.

Where was I? So my father built that room. My grandmother's mother, an old woman, moved to that room, so there was enough space for others. The oldest of my aunts got married and only the other two sisters lived here. Then my father got married and lived here until 1987 when my parents got their new apartment and left the house. So let's do the math, these walls are 140 years old. They are made of soil, their thickness is 70 cm. But they are decaying gradually, time wears them down. They should be repaired and renewed. Each year some type of repair is necessary.

They built these walls using stones and clay, maybe they mixed the clay with something else, and fastened the layers with soil. They made them so thick that they can withstand any pressure. They are still standing, thank God, but how long will they resist? If we don't repair them, they will collapse. The next door neighbor's wall is collapsing. It's been empty for 30 years. This room is older than that house.

We were one of the first inhabitants who built a house on this street. You can find a house with a small balcony nearby. The father of those people who now live in that house, was the other one [who built his house here]. But that house [with a balcony] is rebuilt. That man lived close to the

Էս սենյակը տատիկիս մամայի պապան արդեն կառուցած է եղել: Տատիկիս մաման էլ ծնվել և էս սենյակում, տենց հետո մեծացել են, 1917 թվին էլ ծնվել և տատիկս: Հետո ծնվել են հորքուրներս ու պապաս: Ամենամեծը 75 տարեկան հորքուրս և , երկու հորքուրներս կան, հայրս չկա, մեկ էլ փոքր հորքուրս չկա: Մի հորքուրն ապրում և ստեղ: [Բուրբը] մեծացել են էս սենյակում: Էս սենյակը բաժանված և եղել երկու մասի, ստեղ մի հատ գերան կար: Հաստ, մեծ ծառի գերան էր: Դա հենասյուն էր, որպեսզի չփլուզվի կոշիքը: Էդ հենասյունից ինքը բաժանվել էր: Էն կողմը՝ սպալնի, էս կողմը՝ մի փոքրիկ գալ: Կուխնյան եղել և, բայց շատ փոքր, ու կուխնյա էլ չի կարելի համարել: Տենց ապրել են, յուր են գնացել, մինչև պապաս դառել և 16 տարեկան ու որոշել և, որ ընդե խոհանոց սարքի ու մի հատ էլ փոքրիկ սենյակ ու իրա ձեռքով սարքել և: [...]

Էն կողմն էլ մի հատ կին էր ապրում ամուսնու հետ, ամուսինը մահացավ: Եթե չեմ սխալվում՝ ցիգան էր էդ կինը, տո լի եզդի: Շատ չար կին էր, թույլ չէր տալի բարձրանայինք թթի ծառի վրա, թուփ ուտեինք: Ասում էր՝ կոշիչ ջարդում եք, ջուր և կաթում: [Ինքը] սող կյանքը մենակ ապրած էր, կյանք տեսած էր ու չարացել էր, էլի, եղ ապրելակերպից:

Հա, ըտենց: Պապաս սարքում և էդ սենյակը: Տատուս մաման մեծ կին և լինում՝ 80-ն անց, տեղափոխվում և էն սենյակ, ստեղ արդեն տեղավորվում են: Մեծ հորքուրս ամուսնանում և, դուրս և գալիս: Միջնեկն ու փոքրն են մնում, հետո պապան և ամուսնանում, ստեղ են լինում, 1987-ին էլ տունը ստանում են ու դուրս են գալի: Էս պատերը որ հետ ենք էթում 1883 թիվ, ինչ և գալիս՝ 140 տարի: Հողի պատեր են, հաստությունը մի 70 սմ, բայց գնալով արդեն կամաց-կամաց, դե, տարիները, իրա փորձը ցույց և տալի, գնալով արդեն քայքայվում են: Պետք և թարմացնել, վերանորոգել: Ամեն տարի ինքը իրա աշխատանքը ուզում և իրա վրա:

Կավով, չգիտեմ՝ կավը ինչի հետ են խառնել, ու քարերը իրար կպցնելով, արանքը հողը լցնելով, տենց բարձրացրել են ու հաստ են արել, որ պահի, դիմանա: Հլը որ դիմանում և, փառք Աստծո, բայց չգիտեմ հլը՝ ինչքան կդիմանա: Եթե չնայենք, չհետևենք, շուտ կփլի: Կողքի հարևանի պատը արդեն փլում և: Ընդեղ չեն բնակվում, արդեն 30 տարի և: Համեմատած էս սենյակի՝ [էն տունը] ջահել և:

Փողոցում համար առաջինը եղել ենք մենք, մեկ էլ՝ ճանապարհին փոքր բալկոնչիկ կա, էդ բալկոնչիկում ապրող մարդկանց պապան և եղել: Էդի թազա սարքած տուն և: Ինքը ժամանակիս

riverbank. The area next to our house belonged to him. The entire part where Sofik's house is located now, was his property. When people wanted to live here he divided the land into small pieces and each one built his small house and occupied it. Mrs Nvard also got her piece of land from that man.

The family

My grandmother's mother was born here, but my grandfather was from Hrazdan. He came here as a student, then he met my grandmother. They liked each other and got married, so he didn't go back to Hrazdan and stayed here.

What about your grandmother's family?

Do you know where they came from?

No, nobody knows that. As far as I understand, they must be from Sasun or Mush, but I have no information, nobody can tell me now. So it's unknown where my grandmother's mother was from.

Foreigners

No, there were no foreigners, only Armenians lived here. The Turkish Mayla [district] is some distance away, it includes the houses behind the court building, that's where it was. Today's GUM Market was in fact a Turkish market. The Turks bought, sold and resold their goods there. It was called a Turkish market, a long time ago though. A lot of Turks lived in the area called Sarajov [Sarajev], this part was also called Sarajov. People called it a Turkish Mayla because there were many Turks. I was born in [19]83, and there were no Turks by then. During the Soviet period they were removed slowly. At that time [1980s] there were no Turks, I just heard people calling it a Turkish Mayla.

About Karo's family

According to them [Karo's family], they owned a large part of this area, there was also a bakery here. Then they stopped baking bread and divided the land into pieces and gave them away. His [Karo's] brother lives down the street, the area in between [these streets] belonged to their father.

ապրել և Գետառնի ափին: Էս բուրբը՝ Էս կողքի տնից Էն կողմ, իրանն և էղել, էդ պապիկինն և էղել: Սոֆիկենց սաղ թևը էդ մարդունն և էղել: [Մարդիկ] Էկել են, ուզեցել են բնակվել, ասել և՛ էսքանը՝ ձեզ, էսքանը՝ ձեզ, քուիկ-քուիկ, ոնց որ ամեն մեկը մի բան սարքել և, մտել տենց: Տիկին Նվարդն էլ և էդ մարդուց վերցրել:

Ձեր ընտանիքը:

Տատիկիս մաման ստեղ և ծնվել, բայց պապս Էկել և Հրազդանից: Ուսանող և էղել, Էկել և, տեսել և տատիկիս, շփվել են, հավանել են ու տենց ամուսնացել են, մնացել և ստեղ, չի գնացել Հրազդան:

Իսկ տատիկը, գիտե՞ք՝

իրանք ոնց են ստեղ Էկել:

Չէ, էդ ոչ մեկ չգիտի: Ոնց նայում եմ, կամ սասունցի պիտի լինեն, կամ մշեցի [չգիտեմ], հստակ ինֆորմացիա չունեմ, էդքան հետ էլ մարդ չկա, որ կոնկրետ իմանան, էլի: Էդ մեկը մութ և, թե տատուս մաման որտեղից և էղել: [...]

Այլազգի մարդիկ ստեղ

Չէ, սաղ էդ տեսակի մարդիկ են էղել, այլազգի չէ: Սաղ հայ են էղել:

Թուրքի մայլեն վերնն և՛ դատարանի հետևի սեփական տները, էդ թաղամասն և էղել Թուրքի մայլա: Նախ՝ հիսրիկվա ԳՈՒՄ-ի շուկան թուրքի շուկա և էղել, թուրքերը գալիս էին, ըտեղ առևտուր էին անում, վերավաճառում էին իրանց ապրանքը: Թուրքի շուկա է ժամանակին կոչվել՝ էդ շուտ: չէտո շատ թուրքեր են բնակվել Սարաջով փողոցը, Էն դիմացի մայթն էլ և Սարաջով համարվում, սա էլ և Սարաջով: Ըտենց որ, ասել են Թուրքի մայլա, որ թուրքերը շատ են էղել: Ես որ ծնվել եմ 83 թվականին, ոչինչ չի էղել, թուրք, ոչ մի բան չի էղել: Այսինքն՝ սովետական շրջանի ժամանակ իրանց հանին, կամաց-կամաց: էդ ժամանակ ըտեղ ապրող թուրքեր չկային, էդ լսելով գիտեմ, որ Թուրքի մայլա էր կոչվում:

Կարոյենց ընտանիքի մասին

Իրանց պատմելով՝ տների էդ թևը իրանցն և էղել, դաժե հացի փուռ և էղել, հաց են թխել: չէտո կամաց-կամաց հացի փուռը կանգնացրել են, ու տենց բաժանել և: Մի քիչ ներքև էլ ախպերն և մնում, էդ սաղ միջանկյալ հատվածը էղել և իրանց պապայինը:

Janik Hambardzumyan
2 Nard-Dos Str.

Since the 1980s Janik Hambardzumyan has been living on Getar's bank, at 2 Nar-Dos street. His daughter and grandchildren, Inessa and Grigor, also live here. They, like Janik, feel a strong bond with Getar. Recently Janik gave his room to his grandson. Now he sleeps in a small cabin built by the river. As his granddaughter Inessa puts it jokingly, for her grandfather it was a good opportunity to be close to the river.

Ջանիկ Համբարձումյանը 1980-ականներից բնակվում է Գետառի ափին՝ Նարդոսի 2 հասցեում: Այստեղ են նաև ապրում նրա աղջիկն ու թոռները՝ Գրիգորն ու Ինեսան, որոնք, ինչպես և Ջանիկը, մեծ կապվածություն ունեն գետի հետ: Վերջին տարիներին Ջանիկն իր սենյակը գիջել է թռռանը, իսկ ինքը քնում է գետի ափին կառուցած փոքրիկ տնակում, բայց ինչպես կատակով պատում է Ջանիկի թռռնուհին՝ Ինեսան, դա ավելի շատ մի լավ առիթ ու միջոց էր պապի համար՝ գետին ավելի մոտ գտնվելու:

"I've been living here for about 40 years. I worked at the Yerevan flour mill. In 1979 with the help of the factory I went to Moscow to study at the Institute for Personnel Training, in the department of flour and wheat production. I've worked at the factory for 30 years, until 2009, when it was closed.

When I finished my studies in Moscow, I was offered to stay and work there, but I refused and came back to Armenia and shortly after I received a state award for my work. I was offered to move to Spitak and work in a flour mill.

At the time I rented a house but as soon as I returned to Armenia, I wrote to the ministry and I was given priority for getting an apartment and I was to receive one soon afterwards. But this coincided with the events of the late 80s – war, revolution, etc – and our plans fell through. Then one day the director called me and told me that I wouldn't get my apartment because the country was on the verge of collapse. He offered an apartment in this building. I had to live there for a while and figure out what I should do next. This building adjacent to the flour mill was the dormitory for factory workers. But now it's our property.

Here I was provided with temporary housing, it was the guard barracks. I moved there with my family, my wife and son. The house where we live now belonged to a woman who had worked with us for many years. Her family moved to the US and she was going to join her family. The director called me again and told me that the woman would soon leave for the US and at the meeting of the trade union committee it was decided that her house would be legally allocated to me. I still keep the old warrant entitling to allocate the house to that woman, Sirush, and then to me.

In 1984-86 my family and I moved to our present apartment. But before that I was always familiar with the area, I knew all the inhabitants, they were the workers of our factory."

Recollections about Getar are an integral part of Janik's life stories since he moved to Nar-Das 2. Unlike others, living by the river seems to evoke only positive emotions for Janik. Both Janik and his grandchildren

«Ապրում եմ այստեղ մոտ 40 տարի: Աշխատում էի Երևանի ավրադաց գործարանում, 1979 թվականին գործարանի միջնորդությամբ ընդունվեցի Մոսկվա՝ սովորելու Կադրերի վերապատրաստման ինստիտուտում՝ արվարձիկի և սպիտակաձավարի արտադրության բաժնում: Գործարանում 30 տարի աշխատել եմ՝ մինչև 2009 թվականը, երբ գործարանը դադարեցրեց աշխատանքը:

Երբ ավարտեցի Մոսկվայում կրթությունս, ինձ առաջարկում էին մնալ, աշխատել այնտեղ, բայց ես հրաժարվեցի, վերադարձա Հայաստան, կարճ ժամանակահատվածում իմ աշխատանքի շնորհիվ անգամ արժանացել եմ Պետական մրցանակի: Ինձ առաջարկեցին գնալ Սպիտակ, այնտեղ աշխատել ավրադաց գործարանում:

Այդ ժամանակ վարձով էի բնակվում, բայց երբ վերադարձա Հայաստան, դիմեցի նախարարությանը, ինձ տվեցին առաջնահերթ բնակարան ստանալու կարգավիճակ, ու պիտի շատ կարճ ժամանակահատվածում բնակարան ստանայի: Բայց դա համընկավ 80-ականների վերջի դեպքերի հետ՝ պատերազմ, հեղափոխություն և այլն, ձախողվեցին մեր բոլոր պլանները: Ու մի օր մեր տնօրենը կանչեց ինձ, ասեց, որ ես բնակարան չեմ ստանա, քանի որ երկիրը գնում է կործանման: Առաջարկեց ինձ հատկացնել այս շենքից բնակարան, մի որոշ ժամանակ այստեղ ապրեմ, հետո հասկանամ ինչ եմ անում: Էս մեր շենքը ավրադացին կից հանրակացարան էր գործարանի աշխատողների համար: Բայց հիմա արդեն մեր սեփականությունն է:

Ինձ ժամանակավոր մի սենյակ հատկացրեցին այստեղ, պահակային ծառայության կազմարման էր, ես իմ ընտանիքի հետ՝ կնոջս ու տղայիս, տեղափոխվեցի: Իսկ էս տունը, որ հիմա ունենք, պատկանում էր մի կնոջ, որը մեզ մոտ էր աշխատում Երկար տարիներ, բայց ընտանիքը տեղափոխվել էր ԱՄՆ, ինքն էլ պիտի գնար արդեն: Տնօրենս նորից ինձ կանչեց, ասեց, որ այդ կինը շուտով պիտի գնա ԱՄՆ, ու նրա տունը օրինական կերպով՝ արհկոմի նիստով, կհատկացնեն ինձ: Ես անգամ պահում եմ էն հին օրդերը, որով էս բնակարանը հատկացրել էին այդ կնոջը՝ Սիրուշին, ու հետո՝ նաև ինձ:

1984-86 թվականներին էր դա, որ ընտանիքիս հետ տեղափոխվեցինք ներկայիս բնակարան: Բայց մինչև դա էլ միշտ ծանոթ եմ եղել էս տարածքին, բոլոր բնակիչներին գիտեի, մեր գործարանի աշխատողներ էին»:

***are primarily concerned about
the pollution of the river.***

"Old inhabitants told many stories, they used to take water from the river in the morning for cooking, they used the river water for bathing. The water was clean and its level was high. Now it has turned into a small stream. Let me tell you one more thing. In those days each year a tractor was moved down from the bridge, the riverbed was leveled, the garbage was piled up, collected by garbage trucks and sent to a dump.

But I haven't seen anything like this in the last 30 years. I made a pitchfork, and on my own initiative my grandson and I regularly clean the river section in front of our house. People throw bags full of garbage into the river which accumulates along the riverbank attracting rats and producing awful smells. I clean it myself.

At the time the river from the morgue to the Chess House was open. Nobody would even try to throw rubbish into the river. When the river was clean, even my grandson Grishik remembers, there were lots of fish and turtles. Now there is nothing, not even a frog or a worm. However, Getar is our salvation, the salvation of the city. If it doesn't exist, the city will be in a terrible state. First, the river produces moisture and not only for those who live by the river. These trees along the riverbank grew absorbing the water. When people come to my house, they're astonished, they say it's a paradise. During the difficult period when people had no fuel, no electricity and no water, even the roots of the trees on the riverbank were removed and used as firewood. But a short time later the trees grew again and abounded thanks to the water. The river keeps a large supply of oxygen, if it doesn't exist, this place will turn into a barren land.

I don't leave even a small piece of garbage in the area surrounding my house. I've bought rubber boots so that we can go in and clean the river. But people don't grasp this. I even forbid my neighbors to pollute the environment, and sometimes they get upset, but there is no other option, each of us must make sure that the area stays clean.

**Ջանիկի կյանքի պատմություններից
անմասն են Գետառի հետ կապված
հիշողությունները: Ի տարբերություն
շատերի, նրա համար գետի կողքին
բնակվելը, կարծես, միայն դրական
արձագանք ունի: Թե՛ Ջանիկին,
թե՛ իր թոռներին առաջնահերթ
մտահոգում է գետի աղտոտվածությունը.**

«Հին ապրողները շատ են պատմել, ասում էին՝
առավոտ շուտ տան ճաշի համար ջուր էին
գետից վերցնում, լողանում էին գետի ջրով, շատ
մաքուր էր ջուրը, գետը՝ շատ վարար: Հիմա մի
փոքր առու է դարձել: Մի բան էլ պատմեմ. ամեն
տարի են տարիներին տրակտորը կամուրջից
իջացնում էին գետ, մաքում էին հունը, ամբողջ
աղբը մի կետում կուտակում, հետո բարձում էին
մեքենաները, տանում թափում: Բայց վերջին
30 տարվա մեջ նման բան չեմ տեսել: Հիմա
ես իմ նախաձեռնությամբ մի երկար եղան եմ
սարքել, իմ տան դիմացի գետի հատվածը
թոռանս հետ մաքրում ենք: Բնակիչները շատ
են տոպրակներով աղբ գցում գետի մեջ, գալիս
կուտակվում ա ավիին, կոփաներ են հայտնվում,
տիաճ հոտ ա գալիս, ինքս եմ մաքրում:

Այն ժամանակ անատոմիկից սկսած, Շախմատի
տան մոտով ամբողջը բաց էր, ոչ մեկ չէր էլ փորձի
աղբ նետեր գետի մեջ: Հիմա շատ վատ վիճակ ա: Երբ
մաքուր էր, անգամ թոռս՝ Գրիշիկն էլ ա հիշում, լիքն էին
ձկները, կրիաները: Հիմա ոչ մի բան չկա, անգամ գորտ ու
ճիճու չեն տեսնի: Բայց, դե, մեր Գետառը փրկություն ա,
քաղաքի փրկությունն ա, եթե սա չլինի, քաղաքի վիճակը
ահավոր կլինի: Նախ՝ խոնավություն ա արտադրում
ու ոչ միայն գետի կողքը ապրող բնակիչների համար:
Էս ծառերը, որ աճել են ավիին, ջրի հաշվին են աճել:
Մարդիկ գալիս են մեր տուն, զարմանում են, ասում են՝
դրախտ ա: Նեղ տարիներին, երբ ժողովուրդը ոչ վառելիք
ունեն, ոչ լույս ու ջուր, գետի ավիի ծառերի մինչև անգամ
արմատները քանդել, վառել էին, լրիվ դատարկ էր ես
հատվածը: Բայց կարճ ժամանակում ջրի շնորհիվ նորից
աճեցին, բազմացան ծառերը: Թթվածնի մի մեծ պաշար
է, եթե չլինի, մի ամայի տեղ կդառնա:

Ես անգամ մի փոքրիկ աղբի կտոր չեմ թողնում
մնա իմ տան հատվածում: Ռեզիսից սապոզներ
եմ առել, որ մտնենք մաքրենք գետը: Բայց
մարդիկ դա չեն գիտակցում: Մինչև անգամ
հարևաններիս թույլ չեմ տալիս կեղտոտեն
տարածքը, նեղանում են մեկ-մեկ, բայց ուրիշ
տարբերակ չկա, ամեն մեկս էլ պետք է հետևենք,
որ մաքուր մնա տարածքը:

Ախպորս կնոջ հայրական տունը եղել ա ես մեր

My sister-in-law's paternal house was located not far away from ours, by the riverbank. In the 50s and 60s those were houses made of soil. My sister-in-law's father recalled that the crib was washed away with the baby, they were barely able to save the girl. All those earthen houses were washed away by the river, it was the biggest flood. Now the river doesn't overflow as it used to, but when it does, it's not dangerous anymore, on the contrary, it gets rid of the garbage accumulated over time. Now when you look at the water, the riverbed is clearly visible but in a few hours the sewage of the entire city discharges into the river, and there is no trace of pure and clean water."

The river has become an important part of Janik's life and now he cannot even imagine how he can live in a house without a river flowing by, without hearing the babble of water.

"...When I explain to my acquaintances and friends where I live, I say that I live in a place you cannot find elsewhere in the republic. Of course, if I'm ever offered a place with better facilities, I will move. But I haven't found a better house in the city, a place where a river flows nearby. At least an artificial river must be constructed next to the house, otherwise nothing can compare with my place. The river is a great comfort to us. Come and stay at this place some day. The gurgling stream soothes your nerves. In the summer we leave the windows open, and the babbling stream brings a pleasant sleep."

տնից մի քիչ վերև՝ գետի ափին: Նողից տներ են եղել, 50-60-ականներն են եղել, հարսիս հայրը միշտ պատմում էր, որ աղջկա օրորոցը՝ երեխան էլ մեջը, ջուրը տարել ա, հազիվ են կարողացել երեխային փրկել: Էդ բոլոր հողի տները գետը մաքրել, տարել ա, բայց դա ամենամեծ վարարումն ա եղել: Նիմա արդեն չի վարարում առաջվա պես, իսկ վարարելուց էլ վտանգավոր չի, հակառակը՝ մաքրում ա ամիսների ընթացքում կուտակված աղբը: Նիմա դեռ առավոտյան, որ նայում ես, հունը պարզ երևում ա, մի քանի ժամ հետո ամբողջ քաղաքի կեղտաջրերը լցվում են. մաքուր, պարզ ջրից հետք էլ չի մնում»:

Գետը դարձել է Ջանիկի կյանքի կարևոր մի մաս, և այժմ չի էլ պատկերացնում՝ ինչպես կարող է ապրել մի տանը, որի կողքով չհոսի գետը, չլավի ջրի քչքչոցը.

«...Որ բացատրում եմ ծանոթներիս, ընկերներիս, թե որտեղ եմ ապրում, ասում եմ՝ մի տեղ եմ ապրում, որի նման գեղեցիկ տեղ ամբողջ հանրապետությունում չեք գտնի: Իհարկե, եթե մի օր սրանից լավ պայմաններ ինձ առաջարկեն, կտեղափոխվեմ: Բայց դեռ սրանից լավը չեմ գտել, որ տուն լինի քաղաքում, Գետառն էլ կողքով հոսի: Թեկուզ արհեստական գետ սարքեն տան կողքը, բայց առանց դրա ոչ մի տեղն էլ չի համեմատվի սրա հետ: Մենք էս գետով ենք ապրում: Մի օր փորձեք գալ ստեղ մնալ. Էդ գետի հոսքը, խշխշոցը՝ ուղղակի նյարդեր են հանգստացնում: Ամառը, երբ պատուհանները բաց ենք քնում, շատ հաճելի ա ջրի խշշոցի տակ քնելը»:

Tatev Duryan
22/4 Tigran Mets Str.

Valeri Duryan, her father, b. 1952
Shoghik Gapoyan, her mother, b. 1957

Tatev was born and still lives with her family in a house on the riverbank. The river is part of her most vivid childhood memories. During our conversation she spoke of Getar as if it's a living organism. Tatev is a photographer, and although taking photos is her daily job, Getar never appeared in them.

Տաթև Դուրյան
Տիգրան Մեծի 22/4

Հայրը՝ Վալերի Դուրյան, 1952
Մայրը՝ Շողիկ Գափոյան, 1957

Տաթևը ծնվել և մինչև օրս ընտանիքի հետ ապրում է Գետառի ափին գտնվող տանը: Գետը նրա մանկության ամենավառ հիշողություններից է: Մեզ հետ զրույցում այնպես էր խոսում Գետառի մասին, ասես այն լիներ մի կենդանի օրգանիզմ: Տաթևը լուսանկարիչ է, ու թեև լուսանկարելը նրա ամենօրյա աշխատանքն է, Գետառը երբեք չի հայտնվել նրա կադրերում:

"I was looking for pictures. I looked through all of them, not a single photo of Getar. There was always a wreck on its banks, so we tried to make it invisible. I love wandering around the city, taking pictures but it never occurred to me that I could take a picture of Getar. I took pictures of everything except Getar. It's part of me. Likewise, you don't notice the pieces of furniture in your house, the same is with Getar, it's an environment dear to your heart, and you don't perceive it as a river flowing through the city, it's rather your Getar. It's even one of the first words that I said. Though I cannot pronounce the R sound, Getar was one of the first words I uttered."

Tatev's house is different from the other houses on the riverbank.

"The area near our house is called Silachi [Shilachi], it used to be called Sarajev. Sarajev was an architect and lived near Getar, he built a vinegar factory [brandy-wine factory]. It's considered to be a historical building, that's why it's not completely demolished and the remains are still there. That very Sarajev lived in our house, it was his house, built by himself, perhaps that's why unlike other houses on the riverbank, ours is higher, it has a five meter high ceiling and a window at the top. Other houses almost slope down to the river and have no windows, it's dark and damp there. Now the owners repaired them a bit, but when I went to my neighbors as a child, the air was very dank there. People say that Getar overflowed several times and many houses were flooded, but our house is built on a high foundation and the flood didn't damage it.

My parents moved here and bought this in the 90s, and then I was born. First, they rented the house. They rented part of the house from an old man, then they bought it and since then we've been living here. There was always talk that the houses of this area would be demolished, even some private investors came to see the area before the revolution, they wanted to demolish the buildings in this area and build something else. But nothing worked out. There were always threats that the houses would be demolished soon, but nothing has been done yet."

Although the municipal authorities neglect the river, Tatev is confident

«Նկարներ էի փնտրում, բայց ամբողջը Նայեցի՝ Գետառը չկա, դիմացը միշտ քանդված է եղել, ու Նկարվելիս փորձել ենք այնպես անել, որ չերևա: Շատ եմ սիրում քաղաքում թափառել, Նկարներ անել, բայց մտքովս չի անցել, որ կարելի ա Գետառը Նկարել: Ամեն ինչ Նկարել եմ, բացի Գետառից: Իմ հետ եմ կապում դա: Ոնց չես Նկատի, որ տանդ ինչ-որ կահույքի մի մաս կա, այդպես էլ Գետառը, էնքան հարազատ միջավայր ա, որ չեմ ընկալում որպես քաղաքի միջով հոսող գետ. մեր Գետառն ա: Անգամ իմ առաջին բառերից մեկն ա. «ռ» էլ չէի կարողանում ասել, բայց ինչ-որ ձև առաջին բառերիցս մեկը Գետառն է եղել»:

Տաթևենց տունը տարբերվում

է Գետառի ափին գտնվող մյուս տներից.

«Մեր տան մոտակայքի տարածքը Սիլաչի [Շիլաչի] են ասում, Նախկինում Սարաջև է կոչվել: Սարաջևը ճարտարապետ էր ու Գետառի մոտ ա ապրել, Քացախի գործարանն ա սարքել: Գործարանը պատմամշակութային կառույց է համարվում, երևի դրա պատճառով չեն քանդել, բայց ավերակներ են մնացել մենակ: Մեր տանն ապրել ա հենց էդ Սարաջևը, իր տունն ա եղել, ինքն ա սարքել, երևի դրա համար մեր տունը, ի տարբերություն Գետառի ափի այլ տների, որ գետին կպած են, ավելի բարձր է, 5 մետր առաստաղով ու վերևը պատուհան կա: Մյուս տները իջնում են համարյա դեպի Գետառ, ու լուսամուտներ չկան, մութ են ու խոնավ: Չիմա մի քիչ սարքել են բնակիչները, բայց փոքր ժամանակ որ մտնում էի հարևանների տներ, խոնավության հոտը շատ-շատ էր զգացվում: Ասում են, որ մի քանի անգամ Գետառը շատ վարարել է, ու անգամ շատ տներ է լցվել ջուրը, բայց մեր տունը էնքան բարձր ա եղել, որ Գետառը երբեք չի վնասել:

Ծնողներս 90-ականներին են էդ տունը առել, տեղափոխվել, հետո ես եմ ծնվել: Նախ էս տանը վարձով են ապրել: Տան մի մասը վարձել են ինչ-որ պապիկից, հետո գնել են տունը, ու մինչ օրս էդտեղ ենք ապրում: Միշտ խոսել են, որ քանդելու են էդ հատվածի տները, անգամ մինչև հեղափոխությունը եկան, Նայեցին, ինչ-որ մասնավոր ներդրող էր, ուզում էին էդ տարածքի տները քանդելին, ինչ-որ բան սարքելին, բայց ոչինչ էլ չեղավ: Միշտ ինչ-որ եղպես վտանգներ են եղել, որ հեսա կքանդեն, բայց դեռ ոչ մի բան չեն ձեռնարկել»:

Թեև քաղաքային իշխանությունների կողմից այսօր գետը անտեսված է, Տաթևը վստահ է, որ բնակիչներն էլ մեծ դեր ունեն այդ տարածքի պահպանման ու մաքրության գործում.

***that the inhabitants also play
a crucial role in the preservation
and prosperity of the area.***

"I honestly think that the people living on the riverbank are mainly responsible for the pollution of Getar. My father was a bit strict about it. As a child I liked to throw something in Getar and watch the river taking it, but my father didn't let me do that. You have no idea how much waste is accumulated in Getar. People don't put the garbage in the container, they throw everything into the river. Sometimes my dad tries to tell them not to do that, but nobody cares. People put construction waste in bags and throw them into the river, they can tear down an entire room on the riverbank and throw the waste into the river. They throw food waste, everything. And the sewage of all the houses, including ours, also discharges into the river. But it's so wrong, and I don't know what should be done to change it. Incredible things appear in the river. Someone has thrown away his old refrigerator, clothes, suitcases, and other things. People pollute, people protect themselves from Getar.

Now most people living here are newcomers, the houses are rented out, half of the old inhabitants left the place, those who stayed don't have enough money to move out. They cannot even sell their houses at a price which will allow them to buy a new house. There are households where five people occupy one or two small rooms, but they have no other option.

I don't recall that the river has even been cleaned up, I don't remember anything like that. I remember that a long time ago people used to come and collect metal objects from the river and exchange them for money. At the time my mother collected all the metal objects from the yard so they couldn't take them away. Sometimes people clean only the section of the river which is visible from their houses so that their own area is clean."

***Getar continues to undergo endless
changes, every construction work
in the area affects and changes the riverbed.***

"I know that the river was diverted twice, the first time for constructing the Rossiya

«Եթե անկեղծ ասեմ, Գետառի աղտոտման հիմնական մեղավորները հենց ափին ապրող մարդիկ են: Հայրս մի քիչ խիստ ա եղել էր առումով, փոքր ժամանակ ինձ միշտ հետաքրքիր էր՝ մի բան շարտել, որ Գետառը տանի, բայց չէր թողնում երբեք: Չեք պատկերացնի՝ ինչքան աղբ ա լինում Գետառում: Մարդիկ ոչ մի բան աղբամանը չեն գցում, ամեն ինչ գետն են նետում: Պապաս փորձում ա մեկ-մեկ ասել, որ չանեն, բայց, դե, չեն լսում: Շինարարական աղբ են թափում պարկերով, մի ամբողջ սենյակ կարան քանդեն գետի ափին ու լցնեն գետը: Սննդային աղբը, ամեն ինչ: Ու նաև բոլոր տների կոյուղին դեպի Գետառ է գնում, մեր տնինն էլ: Բայց դա էնքան սխալ ա, ու չգիտեմ՝ ինչ կարելի ա անել դա փոխելու համար: Անհավանական բաներ կարան գետում հայտնվեն՝ մեկը իր հին սառնարանն էր գցել, շորեր, ճամպուրկներ, ինչ ասես: Բնակիչներն են կեղտոտում, բնակիչներն են իրենք իրենց պաշտպանում Գետառից:

Հիմա մեծ մասը փոխվել է, վարձով են հիմնականում տները տալիս, երևի ուղիղ կեսը բնակչության փոխվել է, ու մնացել են նրանք, ովքեր հնարավորություն չունեն գնալու: Եղ տները չեն էլ կարա վաճառեն մի գնով, որ այլ տուն առնեն հետո: Ընտանիքներ կան, որ մեկ-երկու փոքր սենյակում են ապրում մի հինգ հոգով, բայց, դե, այլ տարբերակ չունեն:

Իսկ մաքրման աշխատանքներ երբեք չեն եղել, ես չեմ հիշում նման բան: Հիշում եմ, որ ժամանակին մարդիկ էին գալիս, որ գետից մետաղյա իրեր էին հավաքում ու տանում հանձնելու: Շատ հաճախ էի տեսնում իրանց, իրանց գործն էր երևի, երկար սապոգներով քայլում էին գետով ու բավականին մեծ քանակությամբ մետաղ էին հավաքում, հանձնում: Մաման բակի ամեն մետաղյա բաներ հավաքում էր էդ ժամանակ, որ հանկարծ դրանք էլ չտանեին: Երբեմն գետը մաքրել են բնակիչները, ում տնից երևում ա էդ աղբը, զուտ որ իրենց տարածքը մաքուր լինի»:

Գետառը շարունակում է անվերջ փոփոխությունների ենթարկվել, տարածքում ամեն շինարարություն ինչ-որ կերպ միջամտում և փոփոխում է գետի հունը.

«Գիտեմ, որ երկու անգամ գետի հունը փոխել են, մի անգամ երբ «Ռոսիայի» գետնանցումն են սարքել, մի անգամ էլ վերջերս՝ էլի շինարարության համար: Վերջին անգամ, որ քանդել էին գետի

[cinema] underpass and the second time for recent construction work. During the last construction work an old bridge was found. My neighbors said I would be interested but by the time I arrived there wasn't much left. They demolished the bridge completely to continue the construction work. It happened recently during the construction work next to the Rossiya Mall."

Tatev treats Getar as a living being and as she points it out, the river played a crucial role in her life.

"I've always been interested in the history of the river, as I haven't found much about it. I always wanted to learn more about it, because the river is part of my life. It had a great influence on me. My close friends say that I'm a very calm person by nature, and I think that it's due to Getar. Every day sleeping and waking up by the gurgling sound make you really feel peaceful. When people come to our house, they think it's raining, but it's the babble of the river. But I'm used to that sound, I don't concentrate on it, that sound is never ending and really calms me down. And even so, our neighbors are so noisy, I sometimes wonder how Getar doesn't affect them.

I remember that when I was a child I associated all bodies of water with Getar. Whether it was a brook, a river or a lake, I called them Getar. Now when I tell my friends that I live by a river, they are surprised, most of them don't even know that such a river exists in the heart of the city. I somehow explain the place so that they can imagine. I'm happy to live there. It's true that our house is old, the environment isn't that good, and the road is partially closed because of the construction work. No matter what, I love this place. The sound of the river blocks the street noise. Because of my job I have to visit many noisy places every day and then going home is the quietest moment of the day."

Getar is one of the most pleasant and best-loved places not only for Tatev, but also for her parents.

"My dad has a very caring attitude towards the river, he always gets angry when people throw

եղ հատվածը, գտել էին մի հին կամուրջ:
Հարևանները ասեցին, որ ինձ կհետաքրքրի, բայց
մինչև հասա, մի փոքր բան էր մնացել, արագ
քանդել էին կամուրջը, որ շինարարությունը
շարունակեին: Վերջերս էր հենց՝ «Ռուսիա մոլի»
կողքի շինարարության ժամանակ»:

***Տաթևի համար գետը անձնավորված է և,
ինչպես ինքն է նշում՝ մեծ դեր է
ունեցել իր կյանքում.***

«Ինձ միշտ հետաքրքրել է գետի պատմությունը,
որովհետև շատ բան չեմ գտել իրա մասին: Միշտ
ուզել եմ ուսումնասիրել, զուտ իմ համար, քանի
որ գետը ասես իմ մի մասը լինի: Ինքն իմ վրա և
մեծ ազդեցություն ունեցել. մտերիմներս ասում
են, որ բնույթով ես շատ հանգիստ մարդ եմ, ու
ինձ թվում աս, որ դա Գետառի ազդեցությունն աս:
Ամեն օր գետի ձայնի տակ քնել-արթնանալը
խաղաղություն և բերում: Մեր տուն երբ մարդ և
գալիս, մտածում են՝ թե անձրև աս, բայց Գետառի
քչքչոցն աս: Բայց ես սովոր եմ ձայնին, չեմ
կենտրոնանում, անընդհատ կա գետի ձայնը ու
իսկապես խաղաղություն և բերում: Բայց էնքան
աղմկոտ են մեր հարևանները, երբեմն մտածում
եմ՝ ո՞նց չի ազդում Գետառը իրանց վրա:

Ես հիշում եմ, որ փոքր ժամանակ բոլոր ջրային
տարածությունները Գետառի հետ էին ասոցացվում:
Առու լիներ, գետ թե լիճ, ասում էի՝ Գետառն աս: Հիմա որ
ընկերներիս մեկ-մեկ ասում եմ՝ գետի ափին եմ ապրում,
նենց զարմանում են, մեծ մասը չգիտի էլ, որ նման
գետ կա քաղաքի կենտրոնում: Բացատրում եմ տեղը
ինչ-որ կերպ, որ պատկերացնեն: Ես շատ ուրախ եմ,
որ հենց եղտեղ եմ ապրում. ճիշտ աս, հին և մեր տունը,
միջավայրը եղքան էլ լավը չի, մի կողմից ճանապարհին
են փակել նոր շինարարությունների արդյունքում, բայց
ինձ համար շատ հաճելի տեղ է: Գետի ձայնը չի թողնում,
որ քաղաքի աղմուկը հասնի մեզ: Գործի բերումով ես
շատ աղմկոտ տեղեր եմ գնում ամեն օր, ու հետո տուն
գնալը օրվա ամենահանգիստ պահն աս լինում»:

***Գետառը ոչ միայն Տաթևի,
այլև նրա ծնողների համար
է դրական ու ամենաափրելի վայրերից.***

«Պապան շատ սրտացավ և գետի հանդեպ,
միշտ ջղայնանում աս, երբ աղբ են գցում
գետի մեջ: Ամեն տարի գարնանը մաքրում աս
մեր տան հատվածը: Մեր տունը, դե, հին աս,
հողի պատերով, որ մի բան փորձես քանդել,
վերանորոգել՝ ամբողջը կփլվի: Բայց պապայիս
համար դա աշխարհի ամենալավ տեղն աս:
Ասում աս՝ էլ որտեղ քաղաքում սենց ձայն կլսես,

garbage into the river. Every year in the spring he cleans up the area surrounding our house. Our house is old, it has old earthen walls, if you try to tear something down and repair it, the whole construction will collapse. But for my dad it's the best place in the world. He says that nowhere else in the city center can one hear such lovely sounds, as if we live in the heart of the city but outside of it. Where else will you find a house by the river? Unlike ours, other houses don't have a garden. The door faces the street, the window faces the river. My dad was born in Shamkhor, which is part of Azerbaijan now. He came to study in Yerevan and stayed here. My mom was born in the village of Mantash in Shirak. She too came to study and work in Yerevan. They got married at an old age, found this house and decided to live there. Maybe they liked the place because both are not from Yerevan, because it doesn't look like an urban place, as if it is outside the city. Maybe in Armenia there are villages that are like this place. It's essential for my dad to have a garden where he would plant and maintain his trees. We have many trees on the riverbank, my mom cultivates some plants here, but there are many cats. Our neighbor across the street, Mrs Susan, keeps cats, and they are always in our yard, spoiling everything."

Tatev's recollections of the river are different from those of other inhabitants, Getar was Tatev's best childhood friend, part of her games and everyday life.

"I always played by the river, and I have somewhat sad childhood memories, the river carried away most of my balls and toys. Other kids were endlessly throwing rocks or other things into the river, but my dad didn't let me do that. It was a natural curiosity, I wondered what would happen if I threw something into the water, where it would go. I wondered where I would get if I moved across the river like that. I always played by the river making and launching boats. Not everyone had the chance to go down to the river, but the riverbank near our house

ունց որ քաղաքի կենտրոնում քաղաքից դուրս ապրենք: Քաղաքում գետի ափին էլ որտեղ տուն կգտնես: Ուղղակի մնացած տները մեր տան պես այգի չունեն, դուռը բացվում ա դեպի փողոց, պատուհանը՝ դեպի գետ:

Պապաս Շամխորում է ծնվել, որ հիմա Ադրբեջանի կազմում է: 18 տարեկանում եկել ա Երևանում սովորելու ու մնացել էստեղ: Մամաս Շիրակի Մանթաշ գյուղում է ծնվել ու էլի Երևան ա եկել սովորելու, աշխատելու, ու մեծ տարիքում ամուսնացել են, գտել Գետառի տունն ու եղտեղ ապրել: Միգուցե նաև դա ա պատճառը, որ երկուսն էլ Երևանից չեն ու իրենց դուր ա եկել էդ տեղանքը, ոչ քաղաքային, քաղաքից դուրս ասես լինի, երկի նման գյուղեր էլ կլինեն չայաստանում: Պապայիս համար կարևոր ա՝ տեղ ունենա, իրա ծառերը մշակի: Շատ ծառեր ունենք Գետառի ափին, մամաս ինչ-որ բաներ ա ցանում էղտեղ, բայց կատուները շատ են, դիմացի հարևանը՝ տիկին Սուսանը, կատուներ ա պահում, ու միշտ մեր բակում են, ավիրում են ամեն բան»:

**Գետի մասին Տաթևի հիշողությունները
շատ են տարբերվում մյուս բնակիչների
հիշողություններից:**

**Գետառը Տաթևի մանկության ընկերն էր,
նրա խաղերի ու առօրյայի
կարևոր մի մասը.**

«Միշտ խաղում էի գետի ափին ու մանկական մի քիչ տխուր հիշողություն ունեմ, որ գնդակներիս, խաղալիքներիս մեծ մասը գետը տարել ա: Մյուս երեխեքը անվերջ ինչ-որ քարեր ու իրեր քցում էին գետը, իսկ ինձ պապան չէր թողնում: Բայց, դե, բնական հետաքրքրություն էր, մտածում էի՝ որ մի բան նետեմ, տեսնես՝ ինչ կլինի, ո՞ր կգնա: Իսկ եթե ես էդպես գետի միջով գնամ, ո՞ր կհասնեմ: Միշտ խաղում էի գետի ափին, նավակներ էի սարքում, որ գետ բաց թողնեմ: Ոչ բոլորի տան մոտ կար հնարավորություն գետ իջնելու, իսկ մեզ մոտ գետի ափը բաց է, ու միշտ էղտեղ էի: Պապան երբեք չի մտածել, որ կարելի ա փակել, ցանկապատ սարքել: Ու ինչի՞ փակել: Միշտ ձուկ էի փնտրում գետում, ժամերով նստում, նայում էի, որ մի փոքրիկ ձուկ գտնեի, բայց ամեն ինչ տեսել եմ, բացի ձկներից: Անձրևների ժամանակ միշտ դուրս էի գալիս, տեսնեի՝ Գետառն ինչքան ա բարձրացել, ու ամեն անգամ անհամբեր սպասում էի, տեսնեի՝ ավելի շատ կբարձրանա՞, թե՛ չէ: Բայց, դե, եթե մի քիչ ավել բարձրանար, մարդկանց տներն էր լցվելու, վախենում էին դրանից մարդիկ: Իսկ մեր տունը վերևում էր, իմ համար խաղի պես էր դա, հետաքրքիր էր: Եղել

was open and I was always there. It never occurred to my dad to build a fence and close it. Why close it? I always searched for fish in the river, sitting for hours, looking for little fish, but seeing everything except fish. Everytime it was raining I went out to see how much Getar had risen. But if it rose a bit more, the houses would be flooded, people were afraid of that. Our house was on the top, it was like a game for me, it was interesting. There were times when many people left their houses as they feared that the houses would collapse. I was a kid and didn't realize how dangerous it [overflowing river] could be for others.

In their childhood pictures kids usually draw a house. Getar was always present in my drawings, anytime I drew a house, I also added the river. The river always evoked positive and wonderful memories in me. Getar is our home. There's been talk that they would demolish it, fill it with concrete, cover the river and build new houses. I thought that this area would turn into a gloomy place without Getar, because its continuous movement among these immovable houses is very appealing and fascinating. When I was a kid, I once saw so much rubbish near one of the bridges that I got scared and felt sorry for Getar. As a kid I perceived the river as a living creature, who breathed and talked, and when I saw that rubbish, I thought it would be very hard for him, living among people, carrying that big pile of rubbish. The river's segment next to our house was always clean, that's why the accumulated rubbish made an awful impression on me."

ա, որ շատերը դուրս էին գալիս տնից, քանի որ վախ կար, որ տները կքանդվեն: Ես շատ փոքր էի ու չէի մտածում, թե ինչ վտանգավոր կարա դա լինի մյուսների համար:

Փոքր ժամանակ, երբ երեխեքը հաճախ տուն են նկարում, այդպես Գետամը միշտ իմ նկարներում կար, պարտադիր պիտի տուն նկարելիս գետը լիներ: Իմ համար գետը միշտ դրական հիշողություններ աբերել, պայծամ ու լավ հիշողություններ: Մեր տունն ա էդ Գետամը: Մի պահ ասում էին՝ քանդելու են, բետոնապատելու են, նոր տներ սարքեն, փակեն գետը, ու միշտ մտածում էի, թե ինչ տխուր կլինի էդ տարածքը առանց Գետամի, որովհետև էդ անշարժ տների մեջ էդ անընդհատ շարժը շատ գրավիչ ա, հետաքրքիր: Երբ փոքր էի, մի անգամ կամուրջներից մեկի մոտ էնքան աղբ տեսա: Էնքան էի վախեցել ու նենց խղճացի Գետամին: Փոքր էի, ու իմ համար գետը ինչ-որ կենդանի կերպար էր, որ շնչում ա, խոսում ա, ու որ տեսա էդ աղբը, մտածում էի՝ ինչ ծանր ա իրա համար ես մարդկանց մեջ ապրելը, էդ մեծ աղբակույտը տանելը: Մեզ մոտ միշտ մաքուր ա եղել գետի հատվածը, ու էդ աղբի կուտակումը շատ մեծ ազդեցություն ունեցավ իմ վրա»:

Penzara Khachatryan
17 Khorenatsi Str., 2nd Blind Alley

Penzara has been living near Getar with her husband for 40 years. In 1975 she moved here from the village of Noratus, got married and since then she has been living in a small house built by the river. Penzara's life is closely linked with this river. During our conversation she talked about the problems and difficulties connected with the river, while not forgetting to mention the relaxing effects of the flowing river.

Փենզարան արդեն 46 տարի է՝ ամռանու հետ ապրում է Գետառի մոտ: 1975 թվականին այստեղ է տեղափոխվել Նորատուս գյուղից, ամռանացել և մինչև օրս ապրում է գետի վրա կառուցված փոքրիկ տանը: Փենզարայի ողջ կյանքը կապված է այս գետի հետ: Մեզ հետ զրույցում հիշում է գետի բերած բոլոր խնդիրներն ու բարդությունները, միաժամանակ չմոռանալով նշել՝ որքան հանգստացնող է գետի անդադար հոսքը:

“When I got married, we’d been living with my husband’s family for 4-5 years, their house was next to ours. My brother-in-law was 29 years old, he was going to marry but there was no room in the house. At the time my husband worked as a driver in the department of the “supervision of maintenance work” in the City council. He wrote to the council to get an apartment. It was planned to demolish the houses along the river and provide the owners with new apartments.

But then the earthquake occurred, followed by the events in Baku. These incidents just coincided with each other. We were supposed to receive our apartment around the end of that year, but when those events took place, the Armenians arrived from Baku, the earthquake left many people homeless, the city council gave those apartments to the homeless.

Afterwards we wrote to the municipality but there wasn’t any such program. They allowed us to build a room adjacent to my mother-in-law’s house. We built a room to live in and waited for its demolition. Over the last 5-6 years we built a kitchen and a bathroom over the river. There was no plan to demolish the house, and when the law on privatization was passed, we applied for privatizing our house but they didn’t let us do it saying that the house is built over the water.

My husband’s family had lived here since the [19]40s but now they have moved, they had health problems because of the humidity. They rented out the house and moved to another area of Yerevan.”

Penzara’s family history is full of accounts about the overflowing river and floods.

“My father-in-law’s house almost touches the river. The river rose to the level of the walls and poured into the house several times. It also flooded our house several times although our house is located higher. This happened quite often 7-8 years ago. I remember very well the floods of the 40s and 50s. The water flooded the houses several times. My mother-in-law told me that one day in the 50s my brother-in-law was in his crib [when it flooded], and one of our male neighbors rescued him. At the time people were still expecting that the state would demolish the

«Երբ ամուսնացա, 4-5 տարի ապրեցինք ամուսնուս ընտանիքի հետ՝ մեր տան կողքն է հենց: Տեգրս արդեն 29 տարեկան էր, ամուսնանալու էր, տեղ չկար: Այդ ժամանակ ամուսինս աշխատում էր քաղսովետի «ռեմոնտ-կոնստրուկտ» բաժնում, վարորդ էր: Դիմել էր հիմնարկին, որ հերթագրվի բնակարան ստանալու համար: Ծրագիր կար, որ Գետառի ափի տները քանդելու էին, իսկ քանդած տան տեղը ապրողներին նոր տուն տան:

Բայց երկրաշարժը եղավ, Բաքվի դեպքերը սկսեցին, համընկան իրար. էդ տարի պիտի մեր բնակարանը տային մինչև նոր տարի, մեզ անակնկալ անեին, բայց որ էդ դեպքերը եղան, Բաքվից հայերը եկան, երկրաշարժից շատ մարդ անտուն մնաց, տները ամուսնուս հիմնարկից քաղսովետը վերցրեց, տվեց էդ անտուն մարդկանց:

Դրանից հետո մի անգամ էլ դիմեցինք արդեն քաղաքապետարան, էլ նման ծրագիր չկար, մեզ թույլ տվեցին, որ սկեսուրիս տանը՝ որպես օժանդակ կառույց, էս մեր սենյակը սարքենք: Մեզ քնելու տեղ սարքեցինք ու սպասեցինք քանդելուն: Վերջին 5-6 տարին խոհանոց սարքեցինք, լոգարան, ամբողջը՝ Գետառի վրա: Երբ հասկացանք, որ ոչինչ չի լինում, սեփականաշնորհման օրենք հանեցին, դիմեցինք սեփականաշնորհման համար, բայց թույլ չեն տալիս՝ պատճառաբանելով, որ տունը ջրի վրա է կառուցված:

Ամուսնուս ընտանիքը դեռ 40-ականներից էստեղ էր ապրում, բայց հիմա տեղափոխվել են, գետի խոնավությունից առողջական խնդիրներ ունեցան, տունը վարձով տվեցին, տեղափոխվեցին Երևանի ուրիշ հատված»:

Փենզարայի ընտանեկան պատմությունը լի է գետի վարարման ու ջրհեղեղների պատմություններով.

«Սկեսրայրիս տունը համարյա Գետառի հունին հավասար է. քանի անգամ ջուրը բարձրանում, պատից ներս էր լցվում, մի քանի անգամ մեր տան մեջ էլ է ջուր լցվել, չնայած մեր տան հատվածը ավելի բարձր ա, մի 7-8 տարի առաջ հաճախ էր այդպես լինում: 40-50-ականների ջրհեղեղը շատ լավ էին հիշում, ջուրը ամբողջովին տներն է լցվել մի քանի անգամ: Սկեսուրս պատմում էր, որ տեգրս 50-ականներին լյուկի (օրորոցի) մեջ է եղել, հարևաններից մի տղամարդ էկել, երեխային հանել, փրկել է: Դեռ էն ժամանակներից սպասում էին, որ պետությունը կքանդի տները, նոր տներ կտա, դրա համար էլ չէին տեղափոխվում: Սկեսրայրս 63 թվին մահացել է, սկեսուրս մենակ էր դաստիարակում չորս

houses and provide them with new ones, that was why they didn't move. My father-in-law died in [19]63, my mother-in-law was bringing up her four children on her own, my husband was eleven by then.

The place they built their house belonged to their neighbor before. One of the floods of the 40s and 50s washed away their room. So that neighbor gave that area to my husband's parents. They were very kind people who shared their food with that neighbor, probably that's why this neighbor gave his plot to them appreciating their kindness."

When talking to Mrs Penzara it becomes evident that they faced a lot of difficulties living on the riverbank but she doesn't forget to mention Getar's positive influence.

"The river doesn't always flow peacefully. Sometimes we get scared of the sound of the overflowing river during the spring months. The river carries a lot of rubbish. I don't know whether it's people throwing it into the river or the water flowing over its edges and collecting all sorts of rubbish. But it still amazes me how people throw chairs, tables and other large items into the river. When rolling down the water these items make a sharp sound, I can't describe it. Apart from the fear that the river will rise and flood our houses, I'm afraid of that sound too. The sound is so unpleasant, it's a noise made by humans. Nature gives us rain, you can't help it, you can't complain, but when you realize that people deliberately throw all sorts of rubbish into the river, you get very angry.

During the Soviet period tractors cleaned the riverbed four times a year. At the time it was possible to reach the river and clean it up. Its bottom was clearly visible. Nowadays people throw rubbish into the river, and we suffer from it first of all. There are garbage containers, but they are some distance away, so people don't go that far.

Now we are used to the river sound, we don't even hear it, but when I'd just started living with my husband's family, I couldn't tolerate that sound, it was very unusual. But let me tell you

երեխաներին, ամուսինս էդ ժամանակ 11 տարեկան էր:

Տան տեղը հարևանի տան սենյակ ա եղել, 40-50-ականների ջրհեղեղներից մեկի ժամանակ ջուրը քշել, տարել ա: Հարևանը էդ սելավի տարած մի սենյակի տարածքը տվել ա սկեսրայրիս ու սկեսուրիս. իրենք շատ բարի մարդիկ էին, տան եղած սնունդը կիսում էին էդ նույն հարևանի հետ, ու երևի հարևանը էդ բարության դիմաց տարածքը տվել է ամուսնուս ծնողներին»:

Տիկին Փենզարայի հետ զրուցելիս ակնհայտ է դառնում, որ գետի ափին ապրելով՝ բազմաթիվ բարդությունների են բախվել, սակայն նա չի մոռանում նշել նաև Գետառի դրական ազդեցությունը.

«Միշտ չի, որ գետը հանգիստ հոսում է: Գարնան ամիսներին գետի վարարելու ձայնից մեկ-մեկ վախում ենք: Էդ շատ ջուրը ինչ ասես բերում ա վերևներից. չգիտեմ՝ մարդիկ են գցում գետի մեջ, թե՛ ջուրն ա էդքան վարարում, որ կողքերից հավաքում տանում ա ամեն բան: Բայց միշտ զարմացել եմ, թե ո՞նց են էդ աթռները, սեղանները, ուրիշ մեծ ապրանքները մարդիկ քցում գետի մեջ: Էդ իրերը որ գալիս են, ջրի հետ գլորվելով, մի տեսակ կոշտ ձայն են հանում, չգիտեմ՝ ո՞նց նկարագրեմ, էդ ձայնն էլ ա վախացնում, բացի էն, որ վախենում ենք, թե ջուրը կբարձրանա, նորից տները կլցվի, էդ ձայնը էնքան տհաճ ա, դա արդեն մարդ արարածի կողմից առաջացրած ձայնն ա: Անձրևը բնության տվածն ա, չես կարա ոչինչ անես, չես դժգոհի, բայց որ գիտես՝ մարդը գիտակցաբար ինչ ասես քցում ա գետի մեջ, դա ա առաջին հերթին զայրացնում:

Գետառ Սովետի ժամանակ տարին 4 անգամ տրակտոր էր մտնում, հունը մաքրում էր: Էն ժամանակ տեղ կար գետի մեջ մտնելու, ամբողջ աղբը մաքրում էին, Գետառի տակը մաքուր, պարզ երևում էր: Հիմա մարդիկ աղբը թափում են գետի մեջ, ու դրանից առաջին հերթին մենք ենք տուժում: Աղբամաններ կան, բայց մի քիչ հեռու են, մարդիկ չեն քայլում էդքան:

Հիմա արդեն սովոր ենք ձայնին, երևի չենք էլ լսում, բայց որ նոր էի եկել, ու դեռ ամուսնուս ընտանիքի հետ էինք ապրում, չէի դիմանում ջրի ձայնին, անսովոր էր շատ: Բայց մի բան ասեմ. գոհ եմ Աստծուց, որ ինձ ջուրն է բաժին տվել. էդ ջրի հանգիստ քջքացող հոսող ձայնը նյարդեր ա բուժում: Ճակատագրի բերումով կյանքի շատ բարդ շրջաններ եմ ունեցել, բայց որ էս տան լուսամուտը բացում էի ու նստում գետի դիմաց, հոսող գետի ձայնը անջատում էր ինձ ամեն

one thing. I thank God for letting me live by the water. Its peaceful gurgling has a healing power. I suffered many hardships in my life but when I opened the window and sat in front of the river, all the disturbing thoughts disappeared. That's why I tell everyone that the river has a healing power, I recovered thanks to the river. And now when I go to Noratus for a day or two, I can't sleep at night, as if something doesn't belong to you, as if something is missing."

ծանր մտքերից: Դրանից հետո ասում էի բոլորին,
որ բուժիչ հաստկություն ունի գետը. ես իսկապես
դրանով վերականգնվել եմ: Ու արդեն հիմա, երբ
գնում եմ Նորատուա մեկ-երկու օրով, գիշերը չեմ
կարողանում քնել, ոնց որ մի բան քոնը չլինի,
պակաս լինի»:

The Galafyan family
Ara Galafyan, b. 1946
Sofia Galafyan, b. 1949
Elmira Liloyan, b. 1953
2 Getarchai 2 Str, [Khanjyan Str.]

Childhood memories

S.G. We don't have childhood memories, I was 22, when our house was demolished.

A.G. In the winter the river was of course absent in our everyday life, but in the summer we even swam in the river.

S.G. We caught fish, the canal was very clean. We lived on the riverbank. My brother and I were fishing.

E.L. Women were washing their carpets.

A.G. It was very clean.

E.L. Yes, very clean.

A.G. We talk about the early 50s.

The flood

S.G. I wasn't born yet in the 1930s but my mom recalled that there was a flood, heavy rain, the water level rose so much that it washed away the houses and logs, people were rushing through the water. The son of my neighbor's uncle lived on Getar's bank. The river flooded his house, destroying it. Later they got a new house in Ajapnyak.

Գալֆայան ընտանիք
Արա Գալֆայան, 1946 թ.
Սոֆյա Գալֆայան, 1949 թ.
Էլմիրա Լիլոյան 1953 թ.
2-րդ Գետառչայ, տուն 2

Մանկական հիշողություններ

Ս.Գ. Մենակ մանկական
հիշողություններ չունենք, ես արդեն 22
տարեկան էի, երբ քանդեցին մեր
տները:

Ա.Գ. Ձմեռները գետը մեր
առօրյայում ոչ մի ձևի չէր
արտահայտվում, բնականաբար,
իսկ ամառները՝ ընդեղ միջև
անգամ լողացել ենք:

Ս.Գ. Ձուկ ենք բռնել. կանալը շատ
մաքուր էր: Մենք հենց ափին էինք:
Ձուկ էինք բռնում՝ քուր ու ախպեր:

Է.Լ. Գորգ էին լվանում կանայք:

Ս.Գ. Բուրդ էին լվանում, լվացք էին
անում:

Ս.Գ. Շատ մաքուր էր:

Է.Լ. Հնձ, շատ մաքուր էր:

Ս.Գ. Դա 50-ական
թվականների սկիզբն էր:

Ջրհեղեղ

Ս.Գ. 30-ական թվականներին
ես չեմ եղել, բայց իմ մաման հիշում
էր, որ ջրհեղեղ ա եղել, սելավ ա թափել,
ջրի մակարդակն էնքան ա բարձրացել,
որ մարդիկ են եկել մեջը՝ լողալով,
գերաններ են եկել, ամբողջ տները:
Մեր հարևանի քեռու տղան ապրել
ա հենց Գետառչի ափին, գետն էնպես ա
իրենց տունը ողողել, որ տուն չի մնացել,
իրենք հետո տուն են ստացել
Աջափնյակում:

E.L. My mom told me that there was such a devastating flood that it reached my parent's house on Abovyan Street and covered the basement with water.

S.G. The riverbank we lived on was higher than the one on the side of Khanjyan Street. That area was always flooded, not ours. The great flood of 1949 occurred at night. While Astghik's brother-in-law was coming home after the night shift, the flood washed away his house, his wife and four kids were killed. Astgho's sister was his second wife.

A.G. In 1946 and also in 1956. I remember the flood of 1956 very well.

The retaining wall. Diverting the river

E.L. At that time the Khanjyan street was a piece of land, it didn't exist. In 1944-45 the Khanjyan street was completely paved with blocks by the German prisoners of war. It was built so well that even in winter cars were driving smoothly. It's a pity that they demolished the blocks and covered the street with asphalt. There were retaining walls in the upper parts, but there were none in our area.

S.G. Our house was located near the Vardan Mamikonyan Statue. In the Circular Park.

E.L. Your mulberry tree is still standing, isn't it?

S.G. The mulberry tree is there along with other trees except two walnut trees.

Է.Լ. Իմ մամայիս պատմելով
էլ՝ նենց ուժեղ ա եղել ջրհեղեղը,
որ մերոնք ապրել են Աբովյան
փողոցում, ու նույնիսկ իրանց
Նկուղային հարկը լրիվ ծածկված ա
եղել [ջրով]:

Ս.Գ. Մեր ափը ավելի բարձր էր,
քան դիմացի՝ Խանջյանի կողմի ափը, և
էդ հեղեղների ժամանակ էն կողմն
էր լցվում, մեր կողմը չէր լցվում: Էդ 1949
թվականի ջրհեղեղը-սելավը գիշերն ա
եղել: Աստղիկի փեսա Գրիշը, որ եկել ա
смена-ից, ջրհեղեղը իրա տունը սրբել
տարել ա, 4 երեխեն ու կինն էլ զոհվել
են: Աստղոյի քույրը իրա երկրորդ կինն
էր:

Ս.Գ. 1946 թվականին, մեկ էլ՝ 56
թվականին: 56 թվականինը ես լավ
հիշում եմ:

Պատնեշ/ Հունը փոխելը

Է.Լ. Էդ ժամանակ ես Խանջյան
փողոցը հող էր, չկար: 44-45
թվականներին գերմանացի գերիներ
են բերել ու ես Խանջյան փողոցը
ամբողջովին սալահատակ սարքել են:
Էնպես էր սարքած, որ ձմեռը անգամ
մեքենաները շատ հանգիստ գնում
էին: Էնքան ափսոս ա, որ քանդեցին,
ասֆալտեցին: Վերևի հատվածում
պատնեշներ եղել են, բայց մեր
հատվածում չկար:

Ս.Գ. Մամիկոնյանի արձանի
մոտ ա մեր տունը եղել: Էդ այգին որ
կա՝ Օղակաձև:

Է.Լ. Ձեր թթի ծառը կա, չէ՞:

Ս.Գ. Մեր թթի ծառն էլ կա,
բոլոր ծառերն էլ կան, բացի երկու
պոպոթի ծառից:

Է.Լ. Մերից բան չի մնացել, բոլորը
կտրեցին:

E.L. Only a few of our trees are left, most of them were cut.

S.G. They seized a large part of our land to divert the river and prevent a new flood, etc, etc. There was a madhouse on that side, I remember how it was demolished, I didn't learn about it from my mother, I saw it myself. So they diverted the river, a large part of our yard was used for that purpose, so yes, we lost our piece of land. We had a dog in the yard. They dug a ditch there and as we didn't put a fence around our yard, the dog accidentally fell into the ditch and drowned. I remember it so well, we buried the dog. I was deeply affected by it.

E.L. I remember those retaining walls. On our way to kindergarten, we used to cross a small bridge next to the cableway, and there were high retaining walls, and rats running around, I remember that.

S.G. We planted sunflowers in our yard, next to the fence. My sister and I used to cut one from the bottom so that nobody would notice, throw the stem into the river, share the seeds and eat them sitting under the walnut tree. Our house was demolished to build the garden marking the 50th anniversary or some anniversary of something, otherwise it was in a good condition.

E.L. It was demolished in 1970. They dug a new riverbed, covering the old one.

Մ.Գ. Իրանք ահագին մեր տնից վերցրեցին՝ գետի հունը փոխելու համար, որ չլինի ջրհեղեղ և այլն, և այլն: Էն կողմի վրա գծանոց կար, էդ գծանոցը քանդեցին, էդ ես հիշում եմ արդեն, արդեն մամայի պատմելով չի: Էդպես հունը փոխեցին, մեր բակից էլ ահագին տարածք գնաց, հողատարածք ունեինք այսպես ասած, հա, գնաց: Մենք շուն ունեինք բակում, որ փոս էին փորել, մտել էին, դեռ չունեինք ցանկապատած մաս, ինքը հետ-հետ էր գնացել, կախվել ու խեղդվել: Նենց հիշում եմ, հմ, թաղեցինք, շատ ազդել ա էլի վրես:

Է.Լ. Պատները ես եմ հիշում, որովհետև մանկապարտեզ [գնալիս] մենք անցնում էինք, սենց փոքր կամուրջ կար ճոպանուղու հատվածում, պատները էին խորը, բայց միայն առնետներ էին վազվզում, ես հիշում եմ:

Մ.Գ. Մեր բակի մեջ, ցանկապատի կողքն արևածաղիկներ էին տնկած: Քուր ու ախպեր գնում էինք, մի հատը հանում էինք, որ չերևար, որ մի հատը հանել ենք մեջից, պոչը գցում էինք Գետառը, բաթաթը կիսում էինք, գնում էինք պոպոքի ծառի տակ, երկուսով ուտում էինք: Մեր տները 50-ամյակի, թե քանի ամյակի ժամանակ այգին սարքելու համար քանդեցին, թե չէ մեր տունը շատ լավն էր:

Է.Լ. 70 թվին են քանդել: Ես նոր հունը փորեցին, փակեցին ևն հին հունը:

Մ.Գ. Պատճառաբանության մասին խոսք չկար, եթե կար էլ՝ մեզ հասանելի չէր, որովհետև էն ժամանակ մեր տարիքն էն չէր, որ լսեինք, հլը մի հատ էլ էդ քննարկմանը մասնակցեցինք: Էն ժամանակ հաշվետու էլ չէին մեզ՝

A.G. They gave no explanation for why it was demolished, if they did, it wasn't available for us, we were too young to ask for an explanation or participate in a discussion. At the time they weren't accountable to us, they did whatever they wanted, thinking that the state is always right. Getar ran through the other side of the street, near the Vernissage [market], 10-12 meters away from here, to the Rossiya cinema, then it ran beneath the ground and then emerged again in the narrow street behind the Rossiya cinema, near the flour mill, which is the business area of... Grzo. But as kids we weren't familiar with those places.

The contours of Getar.

The Turks

S.G. And besides, I remember that we were not allowed to go across the bridge. There was a married couple selling sunflower seeds, we were not allowed to go further from their house, because Turks lived nearby, there was a mosque.

E.L. They settled both near the industrial enterprise of the blind and here.

S.G. The Turks lived across the street from the ministry building and beyond.

A.G. They weren't all Turks.

S.G. Mostly Turks.

E.L. Their houses were located behind today's court building.

ինչ ուզում էին, անում էին, հաշվում էին, որ պետությունը միշտ ճիշտ ա: Ուրեմն Գետառը գնում էր, էս խանջյան փողոցի մյուս մայթը, որ գիտեք, չէ՞, Վերնխսաժի մայթը, այ ըտեղից մոտավորապես մի 10-12 մետր էս կողմ, Գետառն ամբողջությամբ տենց գնում էր մինչև կինո «Ռոսիա», էստեղ մտնում էր տակով, դուրս էր գալիս կինո «Ռոսիայի» հետևը մի հատ նեղ փողոց կա, որ հմի բանենցն ա, հըլ ալրադաց չհասած, էս Գռզոյենց հիմնարկն ա: Մենք էդ կողմերին արդեն ծանոթ չենք, որովհետև փոքր էինք:

Գետառի սահմանները և թուրքերը

Ս.Գ. Բացի դրանից, էս հիշում եմ, որ կամուրջից էն կողմ մեզ արգելում էին գնալ: Ամուսիներ կային, որ արևածաղիկ էին վաճառում, ամենահեռու տեղը, որ իրավունք ունեինք գնալու՝ իրանց տունն էր, որովհետև թուրքեր էին ապրում, մզկիթ կար:

Է.Լ. Նամ Կոյրերի կոմբինատի մոտ կար իրենց թաղը, համ՝ ստեղ:

Ս.Գ. Էն կոմունալ նախարարության շենքը կար, չէ՞, դրանից դիմաց ու էս կողմ արդեն թուրքեր էին:

Ս.Գ. Բոլորը չէին թուրք:

Ս.Գ. Բոլորը չէ, բայց՝ շատերը:

Է.Լ. Այ էս հիմիկվա դատարանի մոտ էլի թուրքերի տներ էին:

Ջրհեղեղ

Ս.Գ. 56 թվին որ ջրհեղեղն եղավ, նենց գմփգմփոց էր գալիս: Ահռելի քարեր էր գլորում, բերում, էլ ծառեր, էլ մարդիկ, էլ կենդանիներ տարբեր՝

The flood

A.G. During the flood of 1956 loud sounds were coming from outside. Huge rocks, trees, people and animals – cows and pigs, etc – were floating down the street. We were standing near the bank and watching but the adults didn't let us look at it too long, they said we would feel dizzy and fall into the stream. They were right. If you looked at the stream a little bit longer, you mechanically wanted to jump into it.

S.G. When Rosa and I heard a loud bang, we rushed out into the riverbank. We saw that it was quiet around, the river was flowing calmly but from the other side of the road a huge two-meter-high water wall was coming towards us. Then the mudflow followed.

A.G. Corpses were floating down the street, there were two as I recall. People brought long two-meter sticks and tried to pull the bodies out with hooks.

E.L. Do you recall that grandpa Samvel fell into the water? Ha-ha.

A.G. Our neighbor looked around for a while and then fell into the water. People pulled him out. Yes, the morgue was flooded too. Do you recall that there was a house near the madhouse, on the riverbank, next to the trees? It collapsed into the river. My mother used to tell us a story about our tenant, and my father joked about it too. Our tenant had money in his suitcase, he kept it in the shed. The flood soaked his money and he was drying the banknotes in the shed for a month. The building on Abovyan 46 still exists. The flood reached there.

կով, խոզ, ինչ որ պատահում էր ճանապարհին, առնում բերում էր: Մենք գնում էինք Գետառի ափ, կանգնում, նայում էինք, և մեծերը մեզ չէին թողնում երկար նայել, ասում էին. «Գլուխներդ կֆռռա, կընկնեք ընդեղ»: Ճիշտ էին ասում. մի քիչ երկար որ նայում էիր, անկախ քեզնից ուզում էիր քցվել մեջը:

Ս.Գ. Ես ու Ռոզան, ուրեմն, դմփդմփոցը լսեցինք, վազեցինք ափ: Վազեցինք, տեսանք՝ մեր մոտ դեռ խաղաղ ա: Հանգիստ, գետը սենց շատ քիչ ջրով գալիս ա, բայց էն կողմից՝ այ սենց ջրի պատ ա գալիս՝ 2 մետրանոց: Հետո արդեն սելավն եկավ:

Ս.Գ. Հետո էդ ժամանակ, որ դիակներ էր բերում, 2 հոգի կար, 2 հոգու եմ հիշում, սենց շատ երկար՝ համարյա 2 մետրանոց ձողեր ունեին, կեռիկները գցում էին, որ էդ դիակները հանեին:

Է.Լ. Սամվել պապը, հիշում ես, որ ընկավ: Հա, հա, հա:

Ս.Գ. Մեր հարևանն եկավ, նայեց-նայեց, վերջում ինքն ընկավ, եկան, հանեցին: Այո, Անատոմիկն էլ ա ողողել, իսկ էդ գժանոցի կողքը՝ հենց գետի ափին, մի հատ տուն կար, հիշում եք՝ ծառերի կողքը, դուրս էր եկել հենց գետի վրա: Մաման պատմում ա, պապան էր հա ձեռ առնում, մեր տնվորը, ուրեմն, ճամպրուկով փողեր ուներ, մեր ամբարում էր պահում, սելավը որ գալիս ա, դրա փողերը սաղ թրջում ա, հետո մի ամիս ամբարի վրա փողերը չորացնում էր: Էդ Աբովյան 46-ը մինչև հիմա կա, այսինքն՝ մինչև էդտեղ հասել ա գետը:

Ս.Գ. Բանտարկվածներին, գերիներին են հանել, որ չխեղդվեն, հա, պապաս էր պատմում:

S.G. Prisoners of war and convicts were evacuated so that they wouldn't drown. My father told me that.

The contours of Getar

A.G. So the river ran through the Circular Park alongside the Chess House and the Khanjyan street then headed towards our area flowing past the walls of our house. We went to school following that route. Then they changed the river's direction. It ran past the Vardan Mamikonyan Statue towards the Griboyedov Statue. That's what I remember. Then it disappeared near the market.

S.G. When I was in 3rd grade at a school focusing on math, I had to cross the river on the way home, and there was only one bridge.

E.L. The wooden bridge.

E.L. Was there a bridge on Gnuni Street?

S.G. There was a big one.

A.G. It was next to Getar, near the private gardens and houses bordering on the Circular Park, not far from the Rossiya cinema. Those were ramshackle houses, but the gardens were excellent.

S.G. We cultivated white apricots in our garden, we had plenty of plants – eggplant, peppers, and tomatoes. We picked up so many strawberries that my brother and I gave them away to our neighbors, at the time you couldn't find anything in the market. We harvested our crops, we couldn't eat all of them.

Գետառի սահմանները

Ա.Գ. Ուրեմն ինքը գալիս էր՝ էս Օղակաձև այգին որ կա, Շախմատի տան՝ էս դեպի փողոց պատի կողմով դրա տակով գալիս էր, այգու դեպի Խանջյան փողոցի կողմով, սենց գալիս էր, հետո մի փոքր թեքվում էր դեպի մեր տները՝ տների պատի տակով էր գալիս: Մենք որ էդ տեղերով էինք գնում դպրոց, տեղ-տեղ պատի տակով էինք գնում: Հետո որ մեր կողմի թեքությունը ուղղեցին, էս Վարդան Մամիկոնյանի արձանի տակով գնում էր մինչև Գրիբոյեդովի արձան: Էդքանը հիշում եմ: Ընդեղից արդեն կորում էր, ընդեղ արդեն շուկան էր:

Ս.Գ. Ես 3-րդ դպրոցում [այժմ՝ Մանուկ Աբեղյանի անվան] էի սովորում՝ մաթեմատիկայի թեքումով, ընդեղից որպեսզի անցնեիր էս կողմ, որ գայիր տուն, մի տեղ կար կամուրջ մենակ:

Է.Լ. Էն փայտե կամուրջը:

Է.Լ. Բա Գնունու վրա [այժմ՝ Վարդանանց] ի՞նչ կամուրջ կար:

Ս.Գ. Գնունու վրա արդեն մեծ կամուրջ կար:

Ա.Գ. Ըտեղ, էդ Գետառի կողքը, էս այգու շարունակությունը որ կա մինչև կինո «Ռոսիա», ըտեղ սեփական այգիներ էին, սեփական տներ էին, մի քիչ խարխուլ տներ էին, բայց շատ լավ այգիներ կային:

Ս.Գ. Սպիտակ ծիրան կար, ինչ ասես մենք ունեինք մեր այգում՝ բադրջան, բիբար, պոմիդոր, էնքան կլուբնիկա ունեինք, որ հավաքում էինք, քուր-ախպեր բաժանում էինք հարևաններին, դե էն ժամանակ ո՞վ էր շուկաներում բան ծախում: Մեր այգու բերքը մենք էինք հավաքում, էդքան ուտել հնարավոր չէր:

The cleanliness of the river

S.G. The river used to be very clean, then people threw a lot of rubbish into it. Then the water level was low.

A.G. It was low in summer, but high in spring and in autumn.

S.G. My dad used the river water for irrigating our garden. He used a pump which was clogged with debris from time to time. Then my dad installed a pump strainer or something like that, which filtered the water.

Daily practices

E.L. There was a channel called Mamur [moss] in the upper part of the river, boys used to swim there, it no longer exists. The brook next to our house was not deep, we used to soak our feet in the water.

A.G. I also recall that the brook was so shallow that we built barricades from both sides, made it deeper and swam in this pool.

E.L. They built stone walls and swam.

A.G. We used to lie down on big rocks after swimming.

On cleaning and covering Getar

A.G. I don't recall that there was talk of covering the river after the flood, there was talk of cleaning it. I remember that.

Գետի մաքրությունը

Մ.Գ. Գետը սկզբում շատ մաքուր էր, հետո՝ ինչ աղբ ասես մեջը կար: Հետո՝ ջուրն էր շատ քիչ:

Ա.Գ. Ամառն էր քիչ, բայց գարունն ու աշունը՝ լիքը կար:

Մ.Գ. Իմ պապան մեր այգին ոռոգում էր գետի ջրով: Նասուս էր դրել ներքևը, որը ժամանակ առ ժամանակ խցանվում էր, որովհետև ինչ ասես չէր լցվում մեջը: Հետո պապան որոշեց, սետկայով տենց բան կապեցին, ցանցի նման բան արեցին, ու մաքուր ջուրն էր գալիս արդեն:

Առօրեական պրակտիկաներ

Է.Լ. Մամուռը վերևում կանալ էր, էդ Մամուռում գնում լողանում էին տղերքով, էդ կանալը հիմա չկա: Մեր մոտի ամուն խորը չէր, ոտներս մտցնում թրջում էինք:

Ա.Գ. Ես նաև հիշում եմ, որ ջուրն էնտեղ էդքան քիչ չէր գալիս. մենք պատ էինք կապում, գյուլ էինք կապում ու լողանում էինք:

Է.Լ. Քարեր էինք շարում պատներ Նման ու լողանում էինք:

Ա.Գ. Մեծ-մեծ քարերի վրա պառկում էինք լողանալուց հետո:

Գետառը փակելու և մաքրելու մասին

Ա.Գ. Զրհեղեղից հետո փակելու մասին խոսակցություններ չեմ հիշում, բայց մաքրելու մասին հիշում եմ: Ես հիշում եմ:

Մ.Գ. Հետո տեսան, որ մաքրել չի լինում, խողովակի մեջ մտցրեցին հունն ու վրայից փակեցին:

S.G. So when they saw that it was impossible to clean it, they channeled it into the pipes and covered it.

A.G. After [19]70.

S.G. They brought very large pipes and channeled the stream into them. Then they covered the surface with cement and concrete as one does while building a house.

E.L. Last time they covered it for building the Multi [wellness center]. The wonderful Khanjyan street with its paving blocks was destroyed in vain.

A.G. It seems it was beneficial for widening the street but harmful to the environment. The weather didn't become less cold. And besides, humidity was also good at trapping dust particles kicked up in the air. We complain that the dust level rose after cutting down the forest in Sari Tagh [district]. It's true.

But the river trapped dust particles too.

S.G. Do you recall that Getar [a segment] was paved with the same blocks from both sides.

E.L. No, I don't. I remember there was a wall near the Bournaz's *krug* [near the intersection where the Bournazyan family lived], like the Monument's wall [Victory Park] built by the Germans, the riverbed was quite wide at the roundabout. We used to build barricades [across the river] not far from that wall and swim in the water. We sunbathed lying down on the big rocks that

Ա.Գ. Խողովակներ բերեցին՝
մեծ-մեծ, շարեցին, գետը մտավ
դրա մեջ, ու վերևից սենց, ոնց
տների վրա որ շարում են, տենց
վրայից ցեմենտ, բետոն շարեցին ու
փակեցին:

Է.Լ. Էս վերջին փակվելը, դե, արդեն
«Մուլտի»-ի համար [«Մուլտի վելնետս
կենտրոն» մարզաառողջարարական
համալիր] փակվեց, որ «Մուլտի»-ն
կառուցեն: Անիմաստ էդ գյոգավ
Խանջյան փողոցն իր սալահատակով
վերացավ:

Ա.Գ. Փողոցը լայնացնելու
հարցը ոնց որ դրական լուծվեց,
բայց էկոլոգիայինը՝ չէ, հով ու
ցուրտի հարցը շատ վատ լուծվեց,
չէ՞ որ էդ խոնավությունն օգնում էր,
որ շատ փոշի չբարձրանար: Ասում
ենք՝ էս Սարի թաղի անտառները
վերացրեցինք, փոշին շատացավ:
Հա, բայց [գետն] էլ էր ազդում, որ
փոշի չբարձրանար:

Ա.Գ. Նիշում էս, որ Գետառի երկու
կողմից էդ նույն սալահատակով շարված
էր Գետառի հունը:

Է.Լ. Չէ, էս հիշում եմ էն
Բուռնագենց մեր կռուգի վրա
սենց պատ էր շարած, էդ
գերմանացիներն էս Մոնումենտի
պատը որ շարել են, չէ՞, այ դրա
տենց էդ քարերով պատ էր շարած,
ու բավական լայն էր Գետառի
հունը, չէ՞: Էդ պավառոտի վրեն
բավական լեն էր Գետառի հունը, այ
դրանից մի քիչ ներքև մենք պատ
էինք կապում ու ընդեղ լողանում
էինք: Ու էդ մեծ-մեծ քարերի վրա, որ
գյուղից դուրս էին մնում, պառկում
էինք, արևի վաննա էինք ընդունում:
Նետո էդ կռիսները որ մեջտեղ
եկան, արդեն կամաց-կամաց համ
ծնողները մեզ չէին թողնում, համ
մեզ էլ էր տհաճ, էլի, լողանալը կռիսի կողքը:

were outside the pool. When the rats abounded in the area, our parents didn't let us swim there, besides it was unpleasant to swim next to the rats.

S.G. Then they started discharging sewage into the river. When the area was less populated, there wasn't much sewage. There were no sewers in the beginning, only pit toilets.

A.G. They used bulldozers to clean up the river. I observed it several times, but they didn't finish the clean up, I can't explain the reason behind it. Maybe they did their job but the area was polluted again, I'm not sure.

E.L. The rubbish wasn't collected. We didn't know where to dump the trash. In recent years we've been dumping it into the river.

A.G. To tell the truth, I don't recall either that the rubbish was collected by then. There was no such thing. There was no garbage truck or garbage bin. And nobody told us off for throwing the garbage into the river.

E.L. In recent years they kept telling us that the houses will be torn down, don't you remember that they collected our passports several times? At that time they stopped collecting the garbage. I recall that prior to that the garbage truck made its rounds ringing a small bell.

A.G. No way, it was the oil truck.

Մ.Գ. Կոյուղի-բան արդեն սկսեցին լցնել մեջը, առաջ էդքան բնակեցված չէր, էդքան կոյուղի չկար: Սկզբում կոյուղի չկար դե, փորած զուգարաններ էին, հողի մեջ էր լցվում:

Մ.Գ. Որ ուզում էին մաքրել Գետառը, մի 2-3 անգամ ես տեսել եմ, բուլդոզեր են իջացրել մեջը, որ մաքրեն, բայց էտի կիսատ ա մնացել, չգիտեմ՝ պատճառն ինչ ա եղել, տեսել են՝ իրանք մաքրում են, էլի լցվում ա, թե՛ ինչ՝ չեմ կարա ասեմ:

Է.Լ. Աղբահանություն չկար: չիմա մեր զիբիլն ո՞ր պիտի տանեինք: Վերջին տարիներն արդեն գետն էինք գցում:

Մ.Գ. Ճիշտն ասած, ես էլ չեմ հիշում: Աղբահանություն հասկացությունն էն ժամանակ չկար, ոչ զիբիլի ավտո կար, ոչ զիբիլի արկղեր կային դրած, որ տանես ընդեղ լցնես: Որ մենք տանում էինք Գետառը թափում էինք, ոչ էլ մեզ դիտողություն անող կար:

Է.Լ. Էդ վերջին տարիները, որ արդեն սկսեցին ասել՝ «քանդում ենք տները, քանդում ենք տները», եթե հիշում ես, քանի անգամ անձնագրերը հավաքեցին, էդ ժամանակ աղբահանությունը դադարեցվեց արդեն, մինչև էդ գալիս էր, մեքենա էր գալիս, ծլնգացնում էր էդ փոքր զանգով, ես հիշում եմ:

Մ.Գ. Արա՛, էդ նավթի ավտոն էր գալիս:

Կանայք միաժամանակ.
Չէ՛, նավթի բուդկա կար:

Է.Լ. Մի հատ նենց մարդ էր՝ դեմքով մեծ, ականջները՝ մեծ: Զնգնգալով, ասել չասմիկի, կար, հետո դադարեցվեց, որ սկսեցին ասել՝ «քանդում ենք, քանդում ենք»: Ու, դե, ժողովուրդն ինչ պիտի աներ:

Women, exclaiming simultaneously.

No, there was a booth where you could buy oil.

E.L. The salesman had a broad face and big ears. The truck really rang a bell, Hasmik is right, but it [garbage collection] stopped when a rumor spread that the houses would be torn down. What else could the people do?

S.G. But the truck didn't make its rounds every day. Sometimes you didn't know where to dump the trash. We built an [outdoor] fireplace with bricks, the one used for making *khorovats* [Armenian barbeque], we used to cook a lot of meat, skewered on at least 20 *shishes* [swords]. We also used the fireplace for distilling homemade vodka and making vegetable caviar, etc, etc.

When the river was covered after all

S.G. We were filled with pity. As a human I'm made of clay, I love water and moisture very much, apparently they deprived us of it. This change didn't affect us, we're in good health, as we're attached to the land. The new generation will be affected much more by this change. They have health problems, because they lack what we had.

A.G. I want to express what my consciousness says, not my feelings, and my consciousness says the following. At the time when we lived in our old house, we had problems with toilets and waste collection, we had to walk through muddy streets on a rainy

Մ.Գ. Մեքենան ամեն օր չի, որ գալիս էր. լինում էր, որ դու հավաքում էիր, չգիտեիր՝ ինչ անել: Բան էինք սարքում, խորովածի պես, որ դնում էս վրեն, իսկ մենք որ սարքում էինք, մի շօ հատ շիշ միանգամից շարվում էր վրեն, աղյուսները դնում էինք, խորովածի պես սարքում էին, հա, արաղ էին քաշում վրեն, իկռա էինք սարքում, վերջը, ինչ ասես անում էինք, էլի:

Գետի վերջնական փակումը

Մ.Գ. Ափսոսանք էինք զգում: Ես որ հող եմ ինքս ծնունդով, ջուր շատ եմ սիրում, խոնավություն, ու եղ գլխներիցս կտրեցին էլի ոնց որ: Մենք էդքան չենք զգացել էդ փոփոխությունը, որովհետև հողի վրա ենք մեծացել, առողջ ենք, այ՛ն հիմիկվա սերունդն ավելի շատ էդ փոփոխությունը կզգա: Իրանք առողջական խնդիրներ ունեն հենց էն բանի համար, որ չկա էն, ինչ մենք ենք տեսել:

Մ.Գ. Ես ուզում եմ ասել էն, ինչ գիտակցությունս ա ասում, ոչ թե զգացմունքներս, իսկ գիտակցությունս ասում ա հետևյալը. էն ժամանակ, որ մենք բակում էինք ապրում, որոշակի դժվարություններ ունեինք՝ զուգարանի դժվարություն, զիբիլ թափելու դժվարություն, անձրևը որ գալիս էր՝ ցեխի միջով գնալ-գալու դժվարություն և այլն, կենսական դժվարություններ: Ովքեր որ էդ բնակարաններում էին ապրում, երազում էին, որ մի տուն տային, գնային, ապրեին: Հետո մարդկանց քանակությունը շատացել էր, չէին կարողանում նորմալ ապրել: Ուրեմն, մեր ընտանիքը, ծնողներիս ընտանիքը, եղբայրներիցս մեկի ընտանիքը, պատահեց մի շրջան, որ էն մյուս եղբորս ընտանիքն էլ մի տեղ էինք ապրում՝ ընդամենն էդ 2 սենյակի

day, we had other major issues. People who lived in those houses dreamed of getting an apartment. The houses were overcrowded, people couldn't lead a normal life. At one time my family, my parents, my brother's family and for a while my other brother's family lived under the same roof sharing two rooms. Was it a pleasant experience? Of course, not. All these difficulties were resolved, when the houses were torn down and we got our separate apartments. We got a three room apartment, one brother got a three room apartment, the other got a two room apartment. So we got 8 rooms in exchange for 2 rooms. Each apartment has its own bathroom. That's the happy part of the story. Many years later, when we started comparing our life today with the one in the past, we concluded that today we also face different problems. It happens that the power goes out, the elevator breaks down, etc. These problems made us think which way of life was better. So we came to the conclusion that life had been far better there. When it was decided to cover the river we didn't think much of its good and bad effects, we just thought that we would get rid of the trash, or of this rathole. Maybe they [the government] deliberately turned it into a filthy place so that people would be fed up with the situation and let them do whatever they wanted to. Maybe it all started by accident.

E.L. At the time there was a lot of debate on the need to keep the river

մեջ: Ինչքանով ա դա հաճելի, բնական ա՝ հաճելի չի: Այ եդ բոլոր նեղությունները հաղթահարվեցին, երբ տները որոշեցին քանդել և մեզ բնակարան տալ, և այդ բնակարանները բոլորիս առանձին տվեցին: շատկապես որ մեզ 3 սենյակ տվեցին, էն մյուս եղբորս էլ 3 սենյակ տվեցին, էն մեկին՝ 2 սենյակ, 2 սենյակ տվեցինք, 8-ը վերցրեցինք՝ ամեն մեկն իր գուգարանով ու լողարանով: Էդքան տեղն ուրախալի էր: Բայց երբ որ տարիներ անցան, ու մենք իրար հետ համեմատեցինք էն ժամանակվա կենսակերպն ու հիմիկվա կենսակերպը, ժամանակը մեզ բերեց, հանգեցրեց նրան, որ ստեղ էլ տհաճություններ կան, չէ՛, լիֆտը փչանում ա, լույսերը հանգում են և այլն, տարբեր տեսակի: Էդ ամեն ինչը մեզ ստիպեց համեմատել՝ ընդեդ էր լավ, թե՛ ըստեդ: Ու էն եզրակացության եկանք, որ ընդեդ հազար անգամ լավ էր, քանց թե ստեդ: Ուզում եմ ասել՝ փակելուց լավ ու վատի մասին չմտածեցինք, խելքներս չէր հասնում, էլի, մտածեցինք՝ էս գիբիլից կարծնենք, էս կռիսներից: Կամ միտումնավոր բերեցին հասցրեցին նրան, որ ժողովուրդը զգվի էդ վիճակից ու հետո էդ գործողություններն անելուց չխոչընդոտի, կամ էլ թե չէ՝ տենց ստացվեց:

Է.Լ. Էն ժամանակ ահագին քննարկումներ եղան, որ չի կարելի գետը փակել, որովհետև մեր չոր քաղաքում ջուրն անհրաժեշտ ա:

Երրորդ կին. Գետը գեղեցկություն ա քաղաքի համար:

Է.Լ. Դե, էդ գետը գեղեցկություն չէր, բայց:

Երրորդ կին. Կարելի էր դարձնել գեղեցկություն:

open, as the water has particular importance in a dry city.

Woman No. 3. The river adds a touch of beauty to the city.

E.L. That river wasn't a beauty though.

Woman No. 3. One could turn it into a beauty.

S.G. Like the Seine river, the Moskva river, one could build retaining walls all along the river.

E.L. The water level was high there, and it was low here.

Woman No. 3. One could build reservoirs which would supply the river with water.

E.L. On the one hand, the water level was low, on the other, they always said there was a risk.

S.G. A flood risk?

E.L. Yes.

Woman No. 3. If they deepened the riverbed, there would be no risk.

E.L. If there is a flood, the water will surge down the streets as the river is closed. Otherwise, it would flow into the river. Do you remember the year when it snowed heavily? Bulldozers removed the snow from the streets and dumped it into the river where it melted. Now cars are driving over the river.

Ա.Գ. Սենա գետը, Մոսկվա գետը,
կարելի էր պատնեշ սարքել՝ սենց
ծերից ծեր:

Է.Լ. Դե, ընդեղ ջուր էր, ստեղ
ջուր չկար:

Երրորդ կին. Դե, կարելի էր
ջրամբարներ անել ու միշտ
մատակարարել գետին:

Է.Լ. Համենայն դեպս՝ մի
կողմից ջուր չկար, երկրորդն էլ՝
միշտ ասում էին, որ կա վտանգ:

Ա.Գ. Ինչ վտանգ, սելավի՞:

Է.Լ. Հա՛, սելավի վտանգը:

Երրորդ կին. Դե որ խորացնեին
հիմքերը, ինչ վտանգ պիտի լիներ:

Է.Լ. Որ եթե ջրհեղեղ լինի, դե,
գետի հունը փակ ա, էն ժամանակ
լցվում էր քաղաքը, էս ժամանակ
կլցվեր գետը: Մի տարի, հիշո՞ւմ եք,
շատ ձյուն եկավ, բուլդոզերներով
տանում էին, լցնում էին գետը,
հալվում գնում էր, իսկ հիմա
մեքենաներ են գնում:

Ա.Գ. Համենայն դեպս,
Գետառի գոյությունը վատ
հիշողություններ չի թողել, բացի էլ
վերջին տարիների զիբիլ լցնելուց:
Մենք բոլորս էլ խելացի մարդիկ ենք ու
հասկանում ենք, որ եթե երկրի
դեկավարությունն ուզենար դրա
դեմն առնել, էնքան հեշտ էր
լուծելը: Աղբահանություն
կազմակերպեին, ոնց որ հմի
մեքենաները գնում են, գալիս են,
տանում են, թափում են: Էն ժամանակ
էլ թող ասեին. «Ձեր հերն անիծեմ,
մեկը ստեղ աղբ թափի՝ կտուգանեմ»:
Հետո՞ վերջիվերջո կառուցապատեին
ըտեղ, պատ սարքեին:

S.G. Even so, we have good memories of Getar, apart from the dumping of rubbish in recent years. We are all intelligent enough to understand that if the government wanted to deal with this problem, it would fix it easily. They had to organize the garbage collection properly as it is now. Garbage trucks make their rounds collecting the trash. They had to say: "we will fine you, if you don't dump rubbish in the right place, damn it!" Then they had to build retaining walls.

E.L. Is it true that the Circular Park was included in Tamanyan's project? Maybe it also included the river. But then would it remain open?

Woman No. 3. The river couldn't create problems for the park. The river's position didn't change, the park was on one side and Khanjyan street on the other.

E.L. Now the river runs through our garden but it ran alongside the Chess House then, right?

Woman No. 3. Yes, it ran in between the Chess House and Khanjyan street. So? Was it a problem, I don't get it?

A.G. No, it wasn't.

E.L. It was a dirty river, now it has an unpleasant smell.

A.G. I don't want to go into it... it resulted from the wrongdoing of organizations and officials who had influence on how things are done

արոյեկտի մեջ ա, հա՛, եղել: Էնտեղ
երևի գետն էլ կար, բայց էդ դեպքում
գետն ի՛նչ պետք ա լիներ տենաս:

Երրորդ կին. Այ մարդ, գետն այգուն
չէր խանգարում: Գետը մնացել էր իրա
տեղում. էս ափին այգին էր, է՛ն ափին՝
հանջյանը:

Է.Լ. Գետը հիմա մեր այգու
միջով ա անցնում, իսկ է՛ն
ժամանակ՝ Շախմատի տան մոտով, չէ՛:

Երրորդ կին. Հա, Շախմատի տան ու
հանջյանի արանքով էր գնում, ի՛նչ ա
եղել, չեմ հասկանում, ի՛նչ մի խնդիր էր:

Ա.Գ. Ոչ մի:

Է.Լ. Կեղտոտ էր, հիմա էլ որ ասում
ես, էդ հոտը զալիս ա:

Ա.Գ. Ես հիմա որ խորանամ...
Դա չարամտության արդյունք էր: Է՛ն
կազմակերպություններն ու մարդիկ,
որոնք երկրի ձևավորման,
կարգուկանոնի վրա ազդեցություն
են ունեցել, էդ մարդիկ ուզեցել են
մինչև անգամ Սևանը
պակասացնեն:

Չորրորդ կին. Մեր փողոցն էլ
կոչվում էր 2-րդ Գետառչայի,
հետաքրքիր ա՝ 1-ին Գետառչայինը ղրն
էր:

Տղամարդ. Առաջին
Գետառչայինը, երևի, գժանցից
նեղքև:

Գետառն արվեստում/ «Գարո՛ւն Երևան»

Ա.Գ. Բայց ես հիշում եմ, որ մեր
Գետառի մյուս ափի հարևանի՝
Բումնազյան Ռազմիկի քուրը նստում
էր Գետառի պատին, իրանց կողմը
պատ էր սարքած, նստում էր պատին,
ոտքերը կախում էր Գետառի մեջ,
բայց ջուր չկար, ու երգում էր. «Գարո՛ւն
Երևան, սիրո՛ւն Երևան»:

in this country. These people even wanted to lower the level of [lake] Sevan.

Woman No.4. Our street was called 2nd Getarchai, I wonder which was the first one.

Man. 1st Getarchai was near the madhouse.

Getar in art/ Garun Yerevan

A.G. I remember that the sister of Bournazyan Razmik, our neighbor across the river, used to sit on the wall built on the river's edge, dangle her feet in the water and sing "Garun Yerevan, sirun Yerevan" [Armenian song].

Woman No. 4. I don't remember her name because we used to call her Garun Yerevan.

A.G. We had an artist neighbor, Markos, but he didn't paint Getar either.

Vehicles in Getar

A.G. So they were excavating the foundations for Gastronom Arevik [food store], people threw the ambulance and the fire engine into the pit. There was a clash.

E.L. There was a fight because of the unfair referee decision. There were always clashes during the Armenia-Georgia football matches. A police car was once pushed off the bridge during a riot.

Չորրորդ կին. Էդ աղջկա
անունը չեմ էլ հիշում, որովհետև
իրան միշտ Գարուն Երևան էինք
ասում:

Ա.Գ. Մենք նկարիչ հարևան
ունեինք՝ Մարկոսը, բայց նա էլ
[Գետառը] չէր նկարում:

Մեքենաներ Գետառում

Ա.Գ. Այ մարդ, էս «Արևիկ»
գասարոնումի շենքի հիմքն էին
փորել, պաժառնիկի ու շտապօգնության
ավտոն բրթեցին, գցեցին ըտեղ,
ժողովուրդը: Կռիվ էր:

Է.Լ. Սխալ դատ էր եղել, կռիվ
էր, էդ Քութայիսիի, հայ-վրացական
ֆուտբոլային խաղերին միշտ տենց
պատմություններ էին
լինում, ըտենց էդ ուժեղ
խառնաշփոթի ժամանակ
ոստիկանական մեքենա էր
իջել, կամուրջից հրել, գցել էին ցած:

Ա.Գ. Չեմ հիշում ես տենց բան,
բայց էն փոսինը հիշում եմ, որովհետև
գնացել ենք, տեսել ենք:

Կամուրջը

Ա.Գ. Ուրեմն էդ Գետառի ափով որ
բարձրանում էինք Շախմատի տուն,
էնտեղ մի հատ տուն կար, դրա
կողքով Գետառի ափը սենց թեքություն
ունեի, ու էնքան էին ըտեղից իջել-
բարձրացել Գետառ, դարձել էր
արահետ: Էդ արահետով իջնում էինք,
գալիս էինք, հասնում էինք մեր տան
դիմաց, երևի՜ մի 50 մետր, ասենք՝ 50-
60 մետր: Ըտեղ նախ ջուրն էր մաքուր,
քարերի վրա կարողանում էինք
անցնելինք, Գետառի մյուս կողմից
քար տայինք, որ ստեղ պատ շարեինք,
ջուր հավաքվեր, բան, ըտենց բաներ: Էն
ժողովենց տան վերևից էլ, էդ թուրքի
տան դիմաց էլ մի հատ փետից կամուրջ
կար:

A.G. I don't remember this incident, but I recall the first one, we went to see it.

The bridge

A.G. We used to walk to the Chess House alongside an old house. We walked down the riverbank's gentle slope so many times that it turned into a path. We walked 50-60 meters along this path and reached our house. The water was clean there. We could cross over the river walking across the stones and carry stones from the other side to build a wall and make a pool. There was a wooden bridge near Zhoko's place, in front of the Turk's house.

Woman No.4. That bridge was near the house of the Arevshatyan family, in front of Melanya's place.

A.G. I don't know whose house it was, we walked past the house along Khanjyan street and headed to school, now it's the school no 71. There were no cars back then, so our parents didn't worry about us getting hit by a car. But then it was safe.

Չորրորդ կին. Ըստեղ չհասած՝ մեր
Արևշատյանների տան մոտ՝
Մելանյայենց տան դիմաց էր
կամուրջը:

Ա.Գ. Չեմ իմանում՝ ում տան
դիմացն էր, անցնում էինք տան
դիմացից, գալիս էինք Խանջյանով,
գնում էինք հիմիկվա 71-րդ դպրոց,
դասի էինք գալիս: Էն ժամանակ
մեքենա չկար, բան չկար, որ ծնողները
վախենային, թե մեքենայի տակ
կընկնենք: Զատո ապահով էր:

Appearance//
Disappearance//
Reappearance:
Reflections on a river

Garine Boghossian

Հայտնվելը//
Անհետանալը//
Վերստին հայտնվելը.
Ստորումներ գետի մասին





I get claustrophobic after a few weeks in Yerevan. As a child, I did not understand what made me feel that way about a city I was becoming very fond of. Growing up in Beirut along the Mediterranean coast, I had been used to the different hues of the horizon at the backdrop of the mundane everyday life. In Armenia, I was yearning for that endlessness. Spending my time between the two cities throughout the mid-90s and 2000s seemed like the perfect set-up. Yerevan was full of cultural and public spaces we could access and enjoy, thanks to the institutional remnants of the Soviet Union. Beirut, on the other hand, in the lack of those spaces, had the sea for our respite.

In a conversation with a friend based in Armenia, as he was reflecting on the harshest days of the pandemic, he mentioned that his escape from the seemingly stagnant and dead city was to walk alongside Getar, the river that secretly runs – or rather tiptoes – through Yerevan’s city center. In his experience, while urban life was on pause or happening behind closed doors of private spaces, the flowing waters, however shy, were able to lift up his soul. In my case, sitting in the epicenter of the pandemic in Brooklyn, New York, it was the East River and the Atlantic Ocean that offered some consolation. As for Getar, it was the first time I heard about it. This river that originates in the western parts of the Geghama Mountains and joins the Hrazdan River at the outskirts of Yerevan, seems to remain fairly unknown, even to *Yerevantsis*.

How do you write about something that has rarely been studied or written about? How do you do it with no historical documents at hand? Is it a coincidence that there has been no serious attempt to map out, draw, or archive Getar? Why has it been excluded from research? How come city officials were shocked by my inquiry of it? As I went on knocking doors in an attempt to find any knowledge produced on Getar, I realized some people did not even think it was a river. And yet, when I mentioned that, granted proper planning and design, it could become a great urban space and an asset to the city, they seemed to agree. If an archive is ultimately a “corpus of selective forgettings and collections”¹ as Ann Stoler

¹ Ann Laura Stoler, *Colonial Archives and the Arts of Governance: On the Content in the Form*, in Hamilton et al., *Refiguring the Archive*.

Երևանում մի քանի շաբաթից սկսում են վախենալ փակ տարածությունից: Երբ երեխա էի, չէի հասկանում՝ ինչու են այս զգացումն ունենում մի քաղաքում, որն օրեցօր ավելի սրտամոտ էր դառնում: Մեծանալով Բեյրութում՝ Միջերկրական ծովի ափին, ընտելացել էի մեր ամենօրյա կյանքից անբաժան երվներանգ հորիզոնին: Հայաստանում այդ անծայրածիրությանն էի կարոտում: 1990-ականների կեսերին և 2000-ականներին միաժամանակ երկու քաղաքներում ապրելը կարծես ամենաճիշտ լուծումն էր: Խորհրդային ժառանգության մնացորդների շնորհիվ Երևանում բոլորիս հասանելի ու սիրելի հանրային վայրերի պակաս չկար: Բեյրութում էլ այդ տարածության փոխարեն ծովն էր մեր ապավենը:

Մի զրույցի ժամանակ Հայաստանում հաստատված ընկերներիցս մեկը, վերհիշելով համավարակի դժնդակ օրերը, պատմեց, որ ասես անշարժացած ու մեռյալ քաղաքից ազատվելու համար շրջում էր Գետառի երկայնքով, մի գետ, որ գաղտագողի հոսում կամ, ավելի ճիշտ՝ ոտքի ծայրերի վրայով անցնում է Երևանի կենտրոնական մասով: Իր փորձից գիտեր, որ քանի դեռ քաղաքային կյանքը կանգ էր առել կամ ընթանում էր մասնավոր ու դժնդակ տարածքներից այն կողմ, սահուն ջրերը, թեկուզ երկչոտաբար, գոտեպնդում էին իրեն: Ես էլ, որ համավարակի բուռն շրջանում մեկուսացել էի Նյու Յորքում՝ Բրուքլինում, սփոփվում էի Իսթ Ռիվերով ու Ատլանտյան օվկիանոսով: Ինչ վերաբերում է Գետառին, առաջին անգամ էի լսում դրա մասին: Այս գետը, որ սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերից ու միանում Հրազդան գետին Երևանի մատույցներում, կարծես դեռ միանգամայն անծանոթ է նույնիսկ *երևանցիներին*:

Ինչպէս գրել մի բանի մասին, որը համարյա չի ուսումնասիրվել, եղած նյութերն էլ սակավաթիվ են: Ինչպէս սկսել այդ գործը, երբ ձեռքիդ տակ ոչ մի պատմական փաստաթուղթ չկա: Պատահական բան է, որ դեռևս լրջորեն չեն զբաղվել Գետառի մասին ծրագիր մշակելով, նյութեր հավաքելով կամ տեղանքը քարտեզագրելով: Ինչո՞ւ է գետն անտեսվել որպես հետազոտության առարկա: Ինչո՞ւ պիտի քաղաքային իշխանության ներկայացուցիչները անհարմար վիճակի մեջ ընկնեին, երբ իրենցից հարցուփորձ էի անում Գետառի մասին: Տեղեկություն հավաքելու համար տեղից տեղ գնալով հասկացա, որ որոշ մարդիկ նույնիսկ չգիտեն, որ Գետառը գետ է: Ու այդուհանդերձ, երբ ասում էի, որ ճիշտ նախագծելու դեպքում տեղանքը կարող է քաղաքի տեսարժան վայրերից մեկը դառնալ, զրուցակիցներս կարծես համամիտ էին: Եթե վերջին

notes, in what ways, then, have ordinary citizens and historians alike remembered, forgotten or imagined Getar?

Appearance

Remembering Getar

Human history is often defined by great milestones that took place by the banks of rivers. The first civilizations emerged in the third millennium BC along the Euphrates, Tigris, Nile and Indus, and a little later along the Yellow (Huang He). These civilizations existed benefiting from what the rivers offered: an abundant supply of fresh water, fertile alluvial soils, and a transport corridor for trade and travelers. The earliest depictions^❶ of Yerevan in the 18th century render Getar and Hrazdan rivers fundamental to the establishment of settlements at this location. The building footprint stretching between these two sources of water suggests that a relationship was developing between the sedentary life and the flowing rivers. Water from Getar was most likely used both for domestic use in private residences and to irrigate the gardens and agricultural lands surrounding the settlement. Later on in the 19th century, Shahar (the old city), Demir-bulagh (Karahank) and Tapabashi (Kond), the three quarters of the Yerevan Khanate during the Safavid rule, emerged because of their proximity and relationship to the two rivers.

In the 20th century, as Yerevan grew demographically to become a capital city, modernization efforts were carried on. Maps^❷ from the Soviet era begin to depict a morphological structure to the grid of Yerevan that relates to the position of Getar. In the 1930s, as the city got electrified, and sewers were built, running water was also introduced, streets were paved, and Getar was embanked with stone.^❸ The urban grid that starts to

❶ See map reproduced by the author herself based on a map of Yerevan accessed on Armenica.org.

❷ See map reproduced by the author herself based on a map of Yerevan accessed on Armenica.org.

❸ P. Mesrobian, ed. and tr., *Getting around Yerevan*, Erevan, 1960.

հաշվով արխիվը, ինչպես էլն Սթորեյն է գրում, «ընտրողաբար ժողովված նյութերի և մոռացությունների ամբողջություն» է, ապա ինչ եղանակով են հասարակ քաղաքացիները ու պատմաբանները հիշել, մոռացել կամ պատկերացրել Գետառը: ❶

Հայտնվելը Հիշելով Գետառը

Մարդկության պատմությունը հաճախ գրվում է այն բեկումնային իրադարձությունների միջոցով, որոնք ծավալվել են գետեզերքին: Ք.ա. 3-րդ հազարամյակում առաջին քաղաքակրթությունները ձևավորվել են Եփրատ, Տիգրիս, Ինդոս, կարճ ժամանակ անց նաև Հուանհե (Դեղին) գետերի երկայնքով: Այս քաղաքակրթությունները գոյատևել են՝ օգտվելով գետերի ընձեռած բարենպաստ պայմաններից՝ խմելու ջրի առատ պաշարներից, բարեբեր հողից, ինչպես նաև տրանսպորտային միջանցքից, որից շահել են վաճառականներն ու ճանապարհորդները: Երևանի ամենավաղ նկարագրություններում ❷ (XVIII դար) ակներև է Գետառի ու Հրազդանի որոշիչ դերը այս տեղանքում բնակավայրերի կազմավորման գործում: Այս երկու ջրավազանների միջև ձգվող շինությունների մակերևույթից կարելի է ենթադրել, որ նստակյաց կյանքի ու հոսող գետերի միջև կապն անընդհատ մեծանում էր: Գետառի ջուրը հիմնականում օգտագործվում էր մասնավոր տների կարիքների, ինչպես նաև բնակավայրին կից դաշտերի ու այգիների ոռոգման համար: Ավելի ուշ՝ XIX դարում, այս երկու գետերին մոտ լինելու շնորհիվ ձևավորվեցին Սեֆյանների տիրապետության տակ գտնվող Երևանի խանության երեք թաղամասերը՝ Շահարը (Հին թաղ), Դեմիրբուլաղը (Քարահանք) և Թափաբաշը (Կոնդ):

XX դարում, երբ ժողովրդագրական զարգացմամբ պայմանավորված՝ Երևանը դարձավ մայրաքաղաք, նոր զարկ տրվեց արդիականացման գործընթացին: Խորհրդային շրջանի քարտեզները ❸ պատկերում

❶ Ann Laura Stoler, *Colonial Archives and the Arts of Governance: On the Content in the Form*, in Hamilton et al., *Refiguring the Archive*.

❷ Տե՛ս հոդվածի հեղինակի կազմած քարտեզը՝ հիմնված Armenia.org կայքում Երևանի քարտեզի վրա:

❸ Տե՛ս հոդվածի հեղինակի կազմած քարտեզը՝ հիմնված Armenia.org կայքում հասանելի Երևանի քարտեզի վրա:

shape up suggests that Getar had an infrastructural importance in planning the modern city of Yerevan. Streets running from North-West to South-East such as present-day Sayat-Nova and Tumanyan ended on the banks of Getar. This NW/SE street orientation implies that any surface runoff would fall into and be captured by Getar.❶ Outside the urban core, green areas and agricultural lands surrounding the city benefited from the river as water was likely used for irrigation. Beyond the functional role, the physical relationship between the streets and Getar – two public spaces – created a particular urban condition, assigning to Getar a formal and symbolic character as well. Different physical forms, such as paths, edges, districts, nodes and landmarks make up city images. These organizing features, as Kevin Lynch discusses in his book *The image of the City*, make the city easier to recognize, relate to and navigate. In the case of Yerevan's city center, Getar once created its outline from the East, acting as an *edge* that held different adjacent areas together. An edge that helped people navigating the streets of Yerevan develop their mental map. An edge that perhaps acted as a horizon, forever moving, never stagnant.

Legend and historical records❷ registered that on May 25, 1946, at eight pm, a major flood that lasted five hours caused substantial destruction both in terms of human lives, and material damage. Sources mention two-hundred victims, eight-hundred houses destroyed fully, and six-hundred thirty destroyed partially. Flood legends exist in cultures all around the world. Here, one story recalls kids collecting fish from the streets of Yerevan meters away from the river, the morning after the flood. It somehow captures the duality of water – it makes and takes life, and participates both in the production and destruction of cities, infrastructures, and landscapes. A duality that is timeless. As the climate crisis hits different territories around the world today, from the droughts of the Iraqi marshlands between the Tigris and Euphrates rivers, water shortages in Jackson, Mississippi, to

❶ See diagram produced by the author.

❷ → https://www.prevention-web.net/files/30429_armeniareportdis-asterrisksarrangeme.pdf

Են Երևանի հատակագծի ցանցաձև կառուցվածքը, որը կապ ունի Գետառի դիրքի հետ: 1930-ականներին քաղաքն էլեկտրիֆիկացնելուն և կոյուղի անցկացնելուն զուգահեռ ջրամատակարարման համակարգ ներդրվեց, մայթեր կառուցվեցին, Գետառի երկայնքով պատվար կանգնեցվեց: ❶ Դատելով քաղաքի նոր ցանցաձև հատակագծից՝ ժամանակակից Երևանը նախագծելիս հաշվի է առնվել Գետառի կարևոր նշանակությունը ենթակառուցվածքների զարգացման հարցում: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող փողոցները (ինչպիսիք են ներկայիս Թումանյան և Սայաթ-Նովայի փողոցները) ավարտվում են Գետառի ափերի մոտ: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ուղղվածությունը ենթադրում է, որ ցանկացած մակերեսային հոսք թափվում է Գետառը: ❷ Քաղաքի միջուկին հարակից կանաչ գոտիներն ու գյուղատնտեսական հողերը նույնպես շահել են՝ զգտի ջուրն ըստ երևույթին օգտագործելով ոռոգման նպատակով: Գործառնական նշանակությունից զատ այս երկու հանրային տարածքների՝ գետի և փողոցների անմիջական կապը քաղաքային հատուկ մի միջավայր ստեղծեց, որում Գետառը նաև ֆորմալ և խորհրդանշական բնույթ ստացավ: Մի շարք քաղաքային տարրեր, ինչպիսիք են ճանապարհները, սահմանները, թաղամասերը, հանգույցները և կողմնորոշիչ օբյեկտները ամբողջացնում են քաղաքի նկարագիրը: Ինչպես Քևին Լինչն է մանրամասնում իր «Քաղաքի կերպարը» աշխատության մեջ, հենց այս առանձնահատուկ գծերի շնորհիվ ավելի հեշտ ենք ճանաչում քաղաքը, հարմարվում ու կողմնորոշվում այնտեղ: Ինչ վերաբերում է Երևանի կենտրոնին, Գետառը ժամանակին եզերում էր վերջինիս արևելյան հատվածը՝ ծառայելով որպես սահման, որ միավորում էր հարակից տարածքները: Սահման, որ օգնում էր Երևանում տեղաշարժվող մարդկանց կազմելու սեփական մտաքարտեզը: Սահման, որ միգուցե նաև հորիզոն էր՝ հարափոփոխ ու ոչ երբեք անշարժ:

Ավանդության, ինչպես նաև պատմական աղբյուրների ❸ համաձայն՝ 1946-ի մայիսի 25-ին երեկոյան ժամը ութի սահմաններում սկսված և հինգ ժամ տևած մեծ ջրհեղեղը հսկայական ավերածությունների պատճառ դարձավ՝ թե՛ մարդկային կյանքեր խլելով, թե՛ նյութական

❶ P. Mesrobian, ed. and tr., *Getting around Yerevan*, Erevan, 1960.

❷ Տե՛ս հեղինակի կազմած գծապատկերը:

❸ → https://www.preventionweb.net/files/30429_armeniareportdisasterrisksarrange.me.pdf

the devastating floods across Pakistan, we are not only reminded of it, but faced with its the most contemporary enactment.

Disappearance

Forgetting Getar

In the aftermath of the flood, as was the case with countless other rivers flooding, the process of controlling *nature* and managing the *crisis* began – banks were reinforced and higher breast walls were built along Getar. And, thus, began the dissociation of the river from its spatial and ecological reality, becoming merely a flow of water that should be contained. During the 1950s, to prevent future mudflows in Yerevan, a series of hydro-technical and afforestation projects were implemented including a tunnel linking Getar to the Hrazdan River. In the 1960s, the construction of the circular park began. The stretch of Getar that runs through the city center and primarily through where the circular park was built had to be dissected, controlled and programmed. It meant that the flow of water had to be fit into the park and its programmatic layout.

The most recent operations on Getar came through the post-soviet urban developments in the city. Neoliberal policies were put in place to capture the public domain and privatize more space. They prioritized real estate development and the automobile through the commodification of open space. The stretch of air and land around Getar, particularly as it entered the city center, was encroached on for various urban development projects. The circular park, which was once a continuous green corridor and a much-needed ecological buffer in the city, transformed into a series of measurable and leasable land. The impact on Getar was drastic: from a living ecosystem to a canal, an open-air sewage conduit in service of the many cafes and commercial establishments that grew along its whole stretch. Some parts of the river were covered in concrete, forever hiding it from sight, other parts became a de-facto “backyard” and dump site for these establishments encroached along its banks. Getar morphed from a flowing river into a series of almost stagnant channelized water bodies, transporting refuse into Hrazdan. This

վնասներ հասցնելով: Որոշ արքայուհիներ նշում են 200 զոհի, 800 ավերված և 630 վնասված տների մասին:

Ջրհեղեղի մասին առասպելական պատմություններ կան աշխարհի բոլոր մշակույթներում: Ըստ նման մի պատումի՝ հեղեղի հաջորդ օրը երեխաները ձուկ էին հավաքում Երևանի փողոցներում: Այս պատմությունն ընդգծում է ջրի երկակի բնույթը՝ այն թե կյանք է տալիս, թե խլում, քաղաքների, ենթակառուցվածքների ու լանդշաֆտի թե կերտման, թե կործանման մասնակիցն է: Հավերժ երկակիություն: Այսօր, երբ կլիմայական ճգնաժամը վնասներ է բերում աշխարհի չորս կողմը՝ սկսած Իրաքում Տիգրիս և Եփրատ գետերի միջև ընկած ճահճահողերում երաշտից, Միսիսիպի նահանգի Ջեքսոն քաղաքում ջրի սակավությունից մինչև Պակիստանի ամբողջ տարածքով մեկ արեւտալի հեղեղները, այդ երկակիությունը ոչ միայն հիշեցնում է իր գոյությունը, այլև արտահայտվում նոր մարտահրավերների տեսքով:

Անհետանալը Մոռանալով Գետառը

Ինչպես նմանօրինակ այլ դեպքերում է լինում, հեղեղին հաջորդեց «բնությունը» զսպելով «ճգնաժամը» կառավարելու գործընթացը. ամրացվեցին գետի ափերը, ու Գետառի երկայնքով ավելի բարձր հենապատեր կառուցվեցին: Այդպես Գետառը սկսեց կտրվել իր տարածական և բնական միջավայրից՝ ուղղակի վերածվելով ջրային մի հոսքի, որը պիտի կառավարելի լինի: 1950-ականներին Երևանում սելավներից խուսափելու համար մի շարք ջրատեխնիկական կառույցների և անտառապատման նախագծեր իրագործվեցին, այդ թվում՝ Գետառը Հրազդանին կապող թունելը: 1960-ականներին սկսվեց Օղակաձև այգու շինարարությունը: Գետառի այն հատվածները, որոնք անցնում էին քաղաքի կենտրոնի, մասնավորապես՝ կառուցվող այգու տարածքով, մասամբ փակվեցին ու փոխակերպվեցին: Սա նշանակում էր, որ գետի հոսքը պիտի հարմարեցվեր այգու նախագծին ու չխոչընդոտեր կառուցապատումը:

Գետառի վրա վերջին փորձարկումներն արվում էին հետխորհրդային քաղաքային զարգացմանը զուգահեռ: Նեոլիթերալ քաղաքականության նպատակը հանրային սեփականությունը զավթելն ու ավելի շատ տարածքներ սեփականացնելն էր: Հանրային վայրերի ապրանքայնացման ժամանակ առաջնահերթությունը տրվում էր անշարժ գույքի զարգացմանը և մեքենաներին:

troubled relationship between an attempted modernity, urbanism, and ecology not just created an unfortunate spatiality for Getar, but also a socio-economic and environmental reality for those living in and around it. These morphological mutations not only impacted the river indefinitely, but also altered the relationship of the river to the city, making it impossible for residents of Yerevan to access the banks of Getar, to relate to it as a major element in the city. In other words, Getar lost its role in the formation of the image of the city.

In *The Fabric of Space*, Matthew Gandy notes how modernist responses to the water's uncertainties – those formed by urban infrastructures themselves such as roads and infills – produce “landscapes of disaster” in cities around the world. Getar is no exception here: what happened to Getar following its disastrous flood is a disaster in itself. Yet, what seems to have occurred, borrowing Marshall Berman's words, is a modernization plan outside of modernity. Meaning, an attempt to respond to the social and environmental shortcomings of the nineteenth-century city through a misguided application of design and planning principles.

In fact, it is no surprise that Getar has mostly been excluded from the urban imaginary and artistic depictions of the century. As artists struggled to relate to the physical reality of their modernized new world, such as Getar, they distanced themselves from it and sought inspiration elsewhere.

Reappearance

Imagining Getar

Not all rivers flow into the sea or a lake. Some rivers disappear into the ground or dry up completely before reaching another body of water. Others appear seasonally. Some flow consistently, and others have a fluctuating stream. Reflecting on the relationship between time and rivers, German-Swiss poet and painter Herman Hesse writes: *The river is everywhere at the same time, at the source and at the mouth, at the waterfall, at the ferry, at the current, in the ocean and in the mountains, everywhere and that the present only exists for it, not the shadow of the past nor the*

Գետառի շուրջն ամեն ինչ (հատկապես կենտրոնական հատվածում) դարձավ տարբեր քաղաքաշինական նախագծերի առարկա: Օղակաձև այգին, որ ժամանակին չընդհատվող կանաչ միջանցք էր ու քաղաքի համար խիստ անհրաժեշտ էկոլոգիական գոտի, վերածվեց մասերի բաժանված ու վարձակալությամբ տրվող հողակտորների: Ծանր հետևանքները չուշացան. Գետառը կենսունակ էկոհամակարգից փոխակերպվեց ուղղակի մի ջրանցքի, բացօթյա մի կոյուղու, որն օգտագործվում էր գետի ամբողջ երկայնքով օրեցօր ավելացող սրճարանների և առևտրի օբյեկտների կարիքների բավարարման համար: Գետի որոշ հատվածներ ընդմիջտ անհետացան բետոնի շերտի տակ, որոշ հատվածներ էլ փաստացի դարձան ափով մեկ շարված շինությունների «հետնամասերն» ու աղբատեղին: Գետառը վարարուն գետից վերածվեց մի կերպ և նորոգվեց ջրանցքի, որտեղ կուտակված թափոնը լցվում է շրագլան գետը: Արդիականացման փորձերի, ուրբանիստական և բնապահպանական խնդիրների առճակատումը ոչ միայն անբարենպաստ տարածական միջավայր ստեղծեց Գետառի համար, այլև բացասաբար անդրադարձավ շրջակա միջավայրի և գետի հարևանությամբ ապրող մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Այս կազմաբանական փոփոխությունները ոչ միայն խաթարիչ ազդեցություն ունեցան գետի վրա, այլև խախտեցին քաղաքի ու գետի ներդաշնակությունը՝ Գետառի ափերը երևանի բնակիչների համար ոչ մատչելի դարձնելով, գետը քաղաքի սրտից հեռացնելով: Այլ խոսքով՝ Գետառը կորցրեց իր նշանակությունը քաղաքի դիմագծի ձևավորման գործում:

Մեթյու Գանդին իր *Տարածության հյուսվածքը* գրքում ցույց է տալիս, թե ինչպես են ջրի տարերքի դեմ ուղղված արդի միջոցառումները (քաղաքային ենթակառուցվածքների՝ ճանապարհների և այլ շինությունների ստեղծումը) աշխարհի տարբեր քաղաքներում *աղետի գոտիներ* գոյացնում: Գետառը բացառություն չէ. այն, ինչ հաջորդեց աղետալի հեղեղին, ինքնին աղետ էր: Միևնույն ժամանակ, հավանաբար տեղի ունեցածը, Մարշալ Բերմանի խոսքով՝ արդիականությունից դուրս արդիականացման ծրագիր էր: Այսինքն՝ XIX դարի քաղաքի սոցիալական ու բնապահպանական հիմնախնդիրները լուծելու համար նախագծման և կառուցապատման անհաջող սկզբունքներ էին ընտրվել:

Ջարմանալի չէ, որ անցած դարում Գետառը գրեթե չի արտացոլվել քաղաքի մասին մարդկանց պատկերացումներում ու գեղարվեստական արձակում: Ստեղծագործող մարդիկ, չհամակերպվելով նոր

shadow of the future^❶. As for land, all land is part of a watershed or river basin and all is shaped by the water which flows over it and through it. Indeed, rivers are such an integral part of the land that in many places it would be as appropriate to talk of riverscapes as it would be of landscapes. Getar, a 24-kilometer flow of water, originates near the village of Mayakovsky and carves through different parts of the city, from entertainment and leisure areas (the Yerevan Zoo and the circular park), to residential areas and industrial districts (such as the one near the metro station of Zoravar Andranik and the wholesale market Petak). Despite the many attempts to dissect it, Getar still acts – to a certain extent – as a unifying element among these distinct urban realities. The river *can* be an urban space for its citizens, a space for reflection and repose. It *can* be an economic asset and a spine for cultural and social events. It *can* be an ecological buffer and a hub for the flora and fauna of Yerevan. All of these are possible scenarios, if the river is treated as *the* site, not the backdrop of it.

One would think that a landlocked country with no access to the sea's endless waters would handle its rivers with kindness and care. Celebrate it, not silence it. As Giulio Boccaletti eloquently writes: *our struggle to master water defines us as humans*. In Ancient Egypt, the floods of the Nile were considered the tears of the goddess Isis. Would announcing the waters of Getar the drying tears of Tsovinar, the goddess of water, rain and sea save it from further destruction? Can we imagine a future for Getar, one that does not reject modernity, retreat from the city, or propose technological fixes? A space that is socially and ecologically balanced, through a political reality that is able to offer a different aesthetic order.

Talking about the importance of recognizing the work of artists who imagine different futures, Ursula Le Guin says, *We live in capitalism. Its power seems inescapable. But then so did the divine right of kings*. One of the last weapons of neoliberalism is the hijacking and control of our imaginations.

❶ Hermann Hesse, Siddhartha. an Indian poem.

միջավայրին ու խոսափելով այդ իրականությունից, այդ թվում՝ Գետառից, ոգեշնչումն այլ վայրերում էին փնտրում:

Վերստին հայտնվելը Պատկերացնելով Գետառը

Ոչ բոլոր գետերն են հոսում դեպի ծով կամ լիճ: Որոշ գետեր անհետանում են ցամաքի վրա կամ ամբողջությամբ չորանում՝ մեկ այլ ջրավազան չիասած: Որոշ գետեր էլ կենդանանում են սեզոնը մեկ: Մեկը մշտապես է, մյուսը՝ երբեմն: Խորհրդածելով գետի և ժամանակի փոխհարաբերության մասին՝ շվեյցարաբնակ գերմանացի բանաստեղծ և նկարիչ Հերման Հեսսեն գրում է. ... *Գետը ամենուր և ամեն անգամ նույնն է՝ իր ակունքում ու գետաբերանին, վարար ջրվեժի հատվածում, գետանցումին, ծովին հանդիպելիս, լեռներում, ամենայն պահի ու ամեն տեղ նույնն է, քանի որ նրա համար միայն ներկան գոյություն ունի, ոչ թե անցյալի սովերները կամ ապագայի սովերները:*^❶ Ցամաքն էլ իր հերթին գետավազանի կամ ջրբաժանի մաս է, ամեն բան ձև ու մարմին է առնում երկրի մակերևույթի վրայով հոսող ջրերի միջոցով: Գետերն իսկապես երկրի անբաժան մասն են, բազմաթիվ վայրերի դեպքում տեղին է խոսելու ոչ միայն բնանկարի, այլև գետանկարի մասին: 24 կմ երկարություն ունեցող Գետառը սկիզբ է առնում Մայակովսկի գյուղի մոտից ու ձգվում քաղաքի տարբեր հատվածներով՝ զվարճանքի ու հանգստի վայրերից (Երևանի կենդանաբանական այգի, Օղակաձև այգի) մինչև բնակելի և արդյունաբերական մասեր (օրինակ՝ մետրոյի *Զորավար Անդրանիկ* կայարանի, ինչպես նաև *Փեթակ* առևտրի կենտրոնի մերձակայք): Չնայած Գետառը մասնատելու բազմաթիվ փորձերին՝ այս առանձնահատուկ քաղաքային միջավայրում գետը քիչ թե շատ միավորող գործառույթ ունի: Գետառը քաղաքացիների համար լիարժեք հանգստավայր դառնալու ներուժ ունի: Մշակութային ու սոցիալական միջոցառումների անցկացման վայր դառնալու, ինչպես նաև տնտեսական ներուժ: Երևանի բուսական և կենդանական աշխարհի համար

❶ Հերման Հեսսե,
*Միդհարթա. Ննդկական
բանաստեղծություն* (թարգմանիչ՝
Աշոտ Ալեքսանյան):

As urbanists, artists, writers, city officials and citizens, imagining a different future for Getar and the residents of Yerevan should be our imperative.


բնապահպանական գոտի կամ կենտրոն դառնալու ներուժ: Այս ամենն իրագործելի է, եթե գետը համարեն լիարժեք վայր, այլ ոչ թե իբրև ֆոն ծառայող մի բան:

Թվում է՝ դեպի ծովի անսահման ջրեր ելք չունեցող երկիրը պիտի խնամքով և հոգատարությամբ վերաբերվի սեփական գետերին: Տնծա դրանց գոյությամբ, ոչ թե անուշադրության մատնի: Ինչպես Զուլիո Բոկալետին է հստակ ձևակերպում, *ջրային պաշարները կառավարելու ջանքերն են մեզ դարձնում մարդ արարած*: Հին Եգիպտոսում Նեղոսի վարարումը համարում էին Իսիդա աստվածուհու արտասուքը: Գետառի հոսանքը ջրի, ծովի և անձրևի աստվածուհի Մովինարի ցամաքող արտասուք կոչելով արդյոք կփրկենք գետը կործանումից: Կարող ենք արդյոք Գետառի համար մի ապագա պատկերացնել, որը կտրված չէ արդիականությունից, չի անջատում գետը քաղաքից ու չի ենթադրում տեխնոլոգիական միջամտություն: Մի տարածք, որտեղ սոցիալական և բնապահպանական խնդիրները հավասարազոր կարևորություն ունեն բոլորովին այլ գեղագիտական ճաշակ ձևավորող քաղաքական միջավայրի շնորհիվ:

Շեշտելով ուրիշ ապագայի տեսլական ունեցող արվեստագետների աշխատանքը արժևորելու կարևորությունը՝ Ուրսուլա Լե Գուինը գրում է. *Մենք սպրում ենք կապիտալիզմի դարաշրջանում: Դրա գերիշխանությունը կարծես անխուսափելի լինի: Բայց չէ՞ որ անհերքելի էր թվում նաև թագավորների աստվածային իրավունքը: Նեոլիթերալիզմի վերջին զենքերից մեկը մեր երևակայությունը նվաճելն ու կառավարելն է: Մեր՝ ուրբանիստներիս, արվեստագետներիս, գրողներիս, քաղաքային իշխանության ներկայացուցիչներիս և քաղաքացիներիս գերխնդիրը Գետառի համար ուրիշ ապագա պատկերացնելն է:*


The Spatiality of the River


Գեորգի
Տարածականությունը



The irrigation system of Yerevan gardens, formed by tributaries of the Getar river, 1856.


Գետառի վտակներով ձևավորված Երևանի այգիների ոռոգման համակարգը, 1856 թ.






The Getar River, which originates from the hill, passes through the fortress city and flows into the Hrazdan River. Panoramas of Yerevan from "The Six Voyages" by Jean-Baptiste Tavernier, 1631-33.

Բլուրից սկիզբ առնող Գետաքը շրջանցում է բերդաքաղաքը և թափվում Հրազդան գետը: Երևանի համայնապատկերներ ժան-Բատիստ Տավերնիեի «Վեց ճանապարհորդություն» գրքից, 1631-33թ.





The outline of Yerevan's rivers and canals on the master plan of the city, 1944.

Երևանի գետերի և ջրանցքների ուրվագիծը քաղաքի գլխավոր հատակագծում, 1944 թ.



Map of Yerevan, author: Architect Boris Mehrabyan (Mehrabov), 1906-1911.


Երևանի քարտեզը, հեղինակ՝ ճարտարապետ Բորիս Մեհրաբյան (Մեհրաբով), 1906-1911թթ.



The open sections of Getar and public green areas of Yerevan, 2006-2014.

Գետառի բաց հատվածները և երևանի հանրային կանաչ տարածքները, 2006-2014թ.





Map of Yerevan developed by the government of the First Republic of Armenia, 1920.


Երևանի քարտեզը մշակված Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության կողմից, 1920 թ.





The open sections of Getar on the master plan of Yerevan, 2023.

Գետառի բաց հատվածների ուրվագիծը Երևանի գլխավոր հատակագծում, 2023 թ.



The rivers and canals of Yerevan (closed parts are also included), early 20th century.

From Sedrak Mkrtchyan's Twitter page.

Երևանի գետերը և ջրանցքները (փակ հատվածները նույնպես ներառված են), 20-րդ դարի սկիզբ:
Սեդրակ Մկրտչյանի թվիթերյան էջից:

Getar:
The Taste for Dériving
Vernacular Meditation

Andrey Ivanov

Գետառ-դրեյֆը.
Վերնակույթար
խոհեր

Architecture... as I see it, is the
echo of human destinies
along the river of life.

Alexander Rappaport ❶

❶ A quote from Alexander Rappaport's facebook post (January 20, 2021). I would extend this definition to "vernacular architecture."

Ճարտարապետությունը...
ըստ իս ճակատագրերի արձագանքն
է կենաց գետի ափին:
Ալեքսանդր Ռապապորտ ❶

❶ Հատված
Ա. Ռապապորտի Ֆեյսբուք
սոցիալական ցանցում արված
գրառումից (20.01.2021): Այսպես
կրնութագրելի նաև վերնակուլյար
ճարտարապետությունը:

Prelude

The lines of the Russian poet Boris Pasternak set the poetic tone for this *dérive* (or drift):^❶

As into some unheard-of dogma
I move across into this night,
Where a worn poplar age has grizzled
Screens the moon's strip of fallow light,

Where the pond lies, an open secret,
Where apple bloom is surf and sigh,
And where the garden, a lake dwelling,
Holds out in front of it the sky.

(Translated by Babette Deutsch)

Once the poem is read slightly differently (*where the river lies, an open secret...*), it epitomizes the spirit of Getar.

One hears the rustling, murmuring and whispering of streams – the mellifluous aura of this place is unique (perhaps one can feel the same ambience near the Children's Railway along the banks of the Hrazdan River. That location however has a different story, a different image and different sounds – the rumble of a larger and mightier central river). The visual layer of the environment is more usual. The few well-kept houses at the water's edge are interspersed with illegal constructions, sheds and garages. Here the water's edge does the trick. The most mediocre buildings coupled with the flowing, gurgling and sparkling substance look impressive. It seems that they are not yet in danger of being destroyed.

Yerevan's Northern Avenue, as I wrote 10 years ago, still leads to Kond thus threatening the survival of the old

❶ One of the basic situationist practices is the *dérive*, a technique of rapid passage through varied ambiances. *Dérives* involve playful-constructive behavior and awareness of psychogeographical effects, and are thus quite different from the classic notions of journey or stroll. In a *dérive* one or more persons during a certain period drop their relations, their work and leisure activities, and all their other usual motives for movement and action, and let themselves be drawn by the attractions of the terrain and the encounters they find there. (Debord, Guy (1958). *Theory of the Dérive*,

Internationale Situationniste #2). The author's physical experience of *dérive* through Getar occurred on the morning of March 16, 2022. Its sensuous effects still linger on.

Նախերգանք

Այս դրեյֆի^❶ բանաստեղծական ելակետը Բորիս Պաստերնակի տողերն էին.

Անես մի անլուր հավատի անսալով՝
Հատում եմ ահա գիշերը խավար,
Ուր բարդին է իր գորշ հանդերձով
Պարուրել լուսինը դալկահար:

Ուր լճակն է ծփում՝ իբրև ակներև գաղտնիք,
Ուր խնձորենիին է վետվետում,
Ուր պարտեզը՝ ինչպես բարձրուղեշ մի տուն,
Երկնփին ընդառաջ է ելնում:^❷
(Թարգմանությունը՝ Հովհ. Գալստյանի)

Եթե վերջին քառատողը կարդանք լոկ մի բառ փոխելով (Ուր գետն է ծփում՝ իբրև ակներև գաղտնիք), ապա մեր առջև կհանձնի Գետառը:

Շուրջդ խոխոջում ու շառաչում են ջրերը. ձայներն այստեղ նմանը չունեն (գուցե Հրազդանի ափին մանկական երկաթուղու երկայնքով շրջելիս համագոր մի բան լսես: Բայց այդ վայրն ուրիշ պատմություն ունի, ուրիշ պատկեր ու ուրիշ եղանակ՝ քաղաքի կենտրոնական լայնահուն գետի թնդյունը): Տեղանքն արտաքուստ ավելի հասարակ է: Կոկիկ տնակների

❶ Դրեյֆը տարբեր միջավայրերով արագ տեղաշարժվելու տեխնիկան է՝ սիտուացիոնիստական առանցքային հմտություններից մեկը: Այն խաղային ու ստեղծարար հատկանիշներ ունեցող վարքագիծ է, որի անբակտելի մասն է նաև հոգեաշխարհագրական ներգործության մասին իմացությունը: Այդպիսով դրեյֆը հակադրվում է ճանապարհորդության կամ զբոսանքի դասական հասկացություններին: Դրեյֆը ենթադրում է, որ մեկ կամ մի քանի մարդ, ժամանակավորապես կտրվելով իրենց աշխատանքից, առօրյա զբաղմունքից, ամենօրյա շփումներից, այլ անելիքներից ու պարտականություններից, տարվում են ստեղծարար գրավչությանը ու նոր ծանոթություններով (Debord, Guy (1958). *Theory of the Dérive*, Internationale Situationniste #2): Այս էսսեի հեղինակի դրեյֆը Գետառում կայացավ 2022 թվականի մարտի 16-ի առավոտյան: Այդ փորձառության ուժը դեռ չի պակասել:

❷ И, как в неслыханную веру,
Я в эту ночь перехожу,
Где тополь обветшало-серый
Завесил лунную между,

Где пруд, как явленная тайна,
Где шепчет яблоны приборь,
Где сад висит постройкой свайной
И держит небо пред собой.

quarter.❶ It also reached Firdus which is being destroyed now before our eyes. Tigran Mets Avenue fortunately bypassed the remnants of Getar. The danger passed. It failed to notice and hit Getar.

A couple of *blue-green* features – the unburied fragments of the river along with the vernacular banks – stand out amid the dreary, chaotic, noisy and somewhat shabby environment of the *southern center*.

The native proto-Yerevanian realm emerges from the two crevices behind the western front of the avenue. Elsewhere it is stifled by asphalt, concrete and iron...

One recalls the semi-mythical Filipino healers and their alleged powers to penetrate the human body without using a surgical instrument...

However, nothing has been altered here. On the contrary, there was no time to squeeze and fill up the remains of pre-urban life with concrete and asphalt, to hide these remains from citizens...

In the neighborhood there are no telltale signs that one approaches an unusual place (on the southern side of the former *Cinema Rossiya*, along Tigran Mets Avenue). Getar is inconspicuous. It is an opening in the invisible proto-city.

Getar is illogical. Getar is a surprise. Or maybe one can explain its existence in terms of non-linear, non-superficial and chthonic logic.

Getar is a heretic, an urban fool.

Already, within the grid pattern of functionalist planners, obstacles sprang up, *resistances* from a stubborn past. But the technicians were supposed to make a tabula rasa of the opacities that disrupted the plans for a city of glass. The watchword: *I don't want to know about it*. The remnants had to be eliminated in order to be replaced. This urban planning destroyed even more than war had. Yet, some old buildings survived, even if they were caught in its nets. These seemingly sleepy, old-fashioned things, defaced houses, closed-down factories, the debris of shipwrecked

❶ Ivanov, Andrey (2011, December 19). *Northern Avenue leads to Kond. Études on the spirit of place* [in Russian]-

→ <https://archi.ru/world/37058/severnyi-prospekt-vedet-v-kond-etyudy-o-duhe-mesta-chast-i> (part one),

→ <https://archi.ru/world/37059/severnyi-prospekt-vedet-v-kond-etyudy-o-duhe-mesta-chast-ii> (part two).

հաջորդում են ինքնաշեն կառույցներն ու ավտոտնակները: Բայց գետն այստեղ նաև հնարագետ է. արագահոս ու կայտառ ջրերի հետ հաղորդակցվելիս ամենաշարքային շինությունները նոր կերպարանք են առնում: Նրանց դեռ փորձանք չի սպառնում:

Երևանի չյուսիսային պողոտան, ինչպես գրել եմ տասը տարի առաջ, ձգվում է դեպի Կոնդ՝ վտանգելով հին թաղամասի գոյությունը: ❶ Ու արդեն ընդարձակվել է՝ մինչև մեր աչքի առաջ քանդվող Ֆիրդուս: Իսկ ահա Տիգրան Մեծի պողոտան, բարեբախտաբար, շրջանցեց Գետառի մնացորդները: Վտանգն անցավ: Չդիպավ: Չնկատեց: Գետառի դեղնականաչավուն դիմագիծը գետի վերերկրյա հատվածներն ու վերնակույլար ակերն են, որոնք առանձնանում են *հարավային կենտրոնի* բավականին գորշ, խառնակ, աղմկուն ու անլվա ֆոնին:

Պողոտայի արևմտյան հետնամասում գտնվող այս երկու ճեղքերից սկիզբ է առնում նախաերևանյան աշխարհը, որն այլուր ճզմվել է ասֆալտի, բետոնի ու երկաթի ծանրության տակ...

Միտքդ են գալիս կիսաառասպելական ֆիլիպինցի հեքիմները, որոնք իբր առանց վիրաբուժական նշտարի կարող են մերկ ձեռքով թափանցել մարմնի խորքը...

Ի դեպ, այստեղ ոչնչի ձեռք չեն տվել: Չեն հասցրել քարուքանդ անել ու պատել նախաքաղաքային կյանքի ծվենները բետոնի ու ասֆալտի շերտով՝ թաքցնելով դրանք քաղաքացիներից...

Գետառի մատույցներում (նախկին *Ռոսիա* կինոթատրոնի աջ կողմում, Տիգրան Մեծի պողոտայի երկայնքով) ոչինչ չի հուշում, որ մոտենում ենք անսովոր մի վայրի: Գետառն աննշմարելի է: Դեպի անտեսանելի նախաքաղաք բացված լուսանցք:

Գետառն անտրամաբանական է: Գետառն անակնկալ է: Գուցե Գետառի գոյությունը բացատրվում է ոչ զծային, ոչ մակերեսային, խթոնիկ մի տրամաբանությամբ: Գետառը հերետիկոս է, քաղաքային խելառ:

❶ Иванов, А. Северный проспект ведет в Конд. Этюды о духе места. 19.10.2011.

Մաս առաջին // → <https://archi.ru/world/37058/severnyi-prospekt-vedet-v-kond-etyudy-o-duhe-mesta-chast-i>,
Մաս երկրորդ // → <https://archi.ru/world/37059/severnyi-prospekt-vedet-v-kond-etyudy-o-duhe-mesta-chast-ii>

histories still today raise up the ruins of an unknown, strange city. They burst forth within the modernist, massive, homogeneous city like slips of the tongue from an unknown, perhaps unconscious, language. They surprise. ❶

Here the remnants of Getar miraculously survived.

People living in the faceless multistorey apartment blocks of the neighborhood are lucky to be in close proximity to Getar but apparently they don't rejoice in their good fortune as they shield themselves from the river through a long row of metal garages. Only a few owners open up the back walls of their garages to the river...

Those who live in their small houses built on the banks – there are far fewer of them – perhaps enjoy listening to the river's perpetual and never repeating sounds instead of traffic noise, watching its continuous movement. But are they happy? Is the river's gurgle enough to make them happy?

The lives of Getar's inhabitants could be like this river: light, cheerful, a bit playful, slightly shallow and murky, fast and unstable – taking its predestined course... Isn't that so?

Vernacular Protest.

The Political Philosophy of the Urban Vernacular

The vernacular neighborhoods of the Armenian cities (the little *southern Getar* is one of the last small quarters in the center of Yerevan) are anti-imperial oases. Islets of freedom.

One will find these places not on the other side of the Caucasian Range (within the boundaries of imperial discourse) but rather behind the veil of the Stalinist avenue.

The modern cities of Eastern Armenia (from the capital Yerevan to the smallest towns such as Noyemberyan) are 90 percent imperial after all. First Russian, then Soviet.

Armenian city dwellers are the descendants of empire and imperialness.

Let us recall the paradox of Alexander Tamanyan. The great architect, dreaming of *a real Armenian city* in his Yerevan project and trying to design the ideal capital of Armenia, in fact created the ideal capital of an imperial

❶ de Certeau, Michel (1998). *Ghosts in the City*, in M. de Certeau, L. Giard and P. Mayol (eds.). The

Practice of Everyday Life, Volume 2: Living and Cooking. Minneapolis, University of Minnesota Press, 133

Դեռևս ֆունկցիոնալիստ ճարտարապետների ցանցաձև զծագրերում էր տեսանելի անկոտրում անցյալի դիմադրությունը: Այս մասնագետներին հրահանգվել էր ջնջելու և *tabula rasa*-ի վերածելու անցյալի հետքերը, որոնք աղավաղում են ապակե քաղաքի հատակագիծը: Նրանց կարգախոսն էր՝ *չեմ ուզում իմանալ այդ մասին*: Մնացուկ պիտի ոչնչացվի ու փոխարինվի նորով: Քաղաքաշինության այս տեսակն ավելի ավերիչ էր, քան պատերազմը: Այդուհանդերձ, մի քանի հին շենքեր փրկվեցին, թեև ընկան նոր հատակագծերի ցանցը: Կարծես շմամ ռու հնաշունչ այս կառույցները՝ առանց ճակատամասի տները, չաշխատող գործարանները, խորտակված պատմությունների փշրանքները, պսոթ էլ վեր են խոյանում որպես անհայտ ու օտարոտի քաղաքի մասունքներ: Մոդեռնիստական քաղաքի վիթխարի ու համասեռ տարածության մեջ դրանք դուրս են ցցվում ինչպես լեզու, որ մեզ է ցույց տալիս անձանոթ կամ գուցե չգիտակցված մի երևույթ: Դրանք զարմանք են պատճառում: ❶

Այստեղ հրաշքով փրկվեցին Գետառի մասունքները: Թաղամասի անդեմ բարձրահարկերի բնակիչների բախտը բերել է, որ ապրում են Գետառի հարևանությամբ, բայց նրանք կարծես գոհ չեն դրանից ու մեկուսացել են գետից երկաթե ավտոտնակների երկարածիգ պատնեշով: Միայն մի քանի ավտոտնակի հետևամասն է բացված դեպի գետը...

Սեփական ուժերով գետափին տուն կառուցած սակավաթիվ մարդիկ են երևի ուրախ, որ լսում են ոչ թե փողոցի միալար աղմուկը, այլ կայտառ ու հարափոփոխ ալիքների ծփանքը, հետևում դրանց հոսքին: Գետառոցիների կյանքը կարող էր նմանվել այս գետակի ջրերին՝ թեթև, զվարթ, մի քիչ թռվռուն, մի քիչ էլ ծանծաղ ու պղտոր, արագասահ ու անհաստատ, նախասահմանված հունով ընթացող... Բայց արդյոք այդպես է:

Վերնակույար ընդվզում: Քաղաքային վերնակույարի քաղաքական փիլիսոփայությունը

Շայկական քաղաքների վերնակույար թաղամասերը հակակայսերական օազիսներ են (գողտրիկ «հարավային Գետառը» այդ եզակի վայրերից է Երևանի սրտում): Ազատության կղզյակներ:

Դրանք պատսպարվել են ոչ թե Կովկասյան լեռնաշղթայից անդին (կայսերական խոսույթի ծիրի մեջ), այլ Ստալինյան պողոտայի քողի ներքո:

colony... Not only in the urban space, but also in the minds of its inhabitants, in their worldviews...

Yerevan is different from many other new capitals. It was built not *atop the existing urban (often metropolitan) environment*,^❶ but in its place. *The continuity with the pre-modern culture* was completely ruled out here, only some allusions to the distant 'glorious' past were allowed. Russia's imperial policies violently disrupted *local architectural and urban planning traditions*. Meanwhile, the artificially cultivated Soviet practices never properly took root. They faded away in the post-Soviet period.

Yet, the process of self-colonization continued...

The Soviet regime instilled powerful binary oppositions into the mindset of Yerevan's inhabitants. This system rigidly hierarchizes the environment: the *genuine, modern regular city consistent with Tamanyan's vision*, as opposed to the *slums, dumps and ratholes* of Kond and other enclaves of the authentic old city – *the shame of Yerevan*.

Yet, these enclaves constitute the other 10 percent. This vernacular milieu was not planned by anyone; it was created by its inhabitants who developed local practices of home construction and environmental design.

It is the manifestation of horizontal urban development – an alternative to the vertical imperial one.

The vertical system imposed pompous squares and avenues on the urban structure as if bestowing gifts upon cities from above. However, the outer layers of these officious constructions also served as *veils* concealing the genuine and lively horizontal city.

Concealing the self-sufficient city. Anti-hierarchical. Different. Repellent to city officials and most of the 'normal' citizens.

The imperial power of architecture encircled, encroached and exerted pressure upon a *weak* and privately owned environment – an unworthy subject of the empire which presumably should have been eliminated sooner or later. Together with its author – a simple industrious fellow from Yerevan, or a self-employed bricklayer from Gyumri. Yet, there wasn't enough time to destroy it.

❶ Protsenko, Nikolay (2020, October 8). *How the Authorities Shaped the Image of Modern Capitals* [Review of the book *Cities of Power: The Urban*,

The National, The Popular, The Global by Göran Therborn]-
→ <https://gorky.media/reviews/kak-vlast-formirovala-oblik-sovremennyh-stolits/>

Արևելյան Հայաստանի ժամանակակից քաղաքների (ամենախոշոր Երևանից մինչև ամենափոքրերը, որոնց թվում է, օրինակ՝ Նոյեմբերյանը) երակներում հոսող արյան ցօ տոկոսը կայսերական է՝ նախ՝ ռուսական, հետո՝ խորհրդային:

Հայաստանի քաղաքաբնակները կայսրության ու կայսերականության ժառանգներն են:

Հիշենք Ալեքսանդր Թամանյանի պարադոքսը: Մեծ ճարտարապետը Երևանը նախագծելիս երազում էր կերտել *հայկական քաղաքի նախատիպը*, Հայաստանի մայրաքաղաքի կատարյալ տարբերակը, այնինչ իրականում ստեղծեց մաքուր կայսերական մի քաղաք... Ու ոչ միայն տարածության մեջ, այլև այնտեղ ապրողների աշխարհայացքում ու պատկերացումներում...

Երևանը տարբերվում է նորակերտ մյուս մայրաքաղաքներից: Այն կառուցվել է ոչ թե «արդեն գոյություն ունեցող քաղաքային (հաճախ՝ մայրաքաղաքային) շերտի վրա»^❶, այլ դրա փոխարեն: «Նախամոդեռնիստական շրջանի շարունակականությունն» այստեղ սկզբունքորեն բացառված էր, թույլատրված էր միայն հայացք գցել պանծալի անցյալին: Ռուսական գաղութատիրական քաղաքականությունը ոչնչացրեց «տեղի ճարտարապետական և քաղաքաշինական ավանդույթները», իսկ խորհրդային տարիներին պարտադրվածը արհեստածին էր ու խոր արմատներ երբեք չգցեց: Հետխորհրդայինը իսպառ չորացրեց այդ արմատները...

Մինչդեռ ինքնագաղութացումը կանգ չառավ... խորհրդային կարգերը երևանցու գիտակցության մեջ ձևավորել են բինար հակադրությունների անխախտ մի համակարգ, որը բաժանում է քաղաքային տարածությունը հիերարխիայի սկզբունքով՝ հակադրելով «ճիշտ», «թամանյանական» ժամանակակից բարեկարգ քաղաքը Կոնդի և մյուս հնամենի քաղաքային անկլավների «հետնախորշերին, աղբանոցներին ու առնետանոցներին», որոնք համարվում են Երևանի խարանդ:

Այնինչ սրանք կազմում են քաղաքի երակներում հոսող արյան մնացած 10 տոկոսը:

Այս վերնակուլյար եզերքը ինչ-որ մեկի հիմնածը չէ, այստեղ ապրողներն են այն կերտել սեփական

❶ Проценко, Николай. Как власть сформировала облик современных столиц (о книге Йорана Терборна *Города власти. Город, нация, народ, глобальность*). 08.10.2020 //

→ <https://gorky.media/reviews/kak-vlast-sformirovala-oblik-sovremennyh-stolits/>.

Even today in many large courtyards of Yerevan's small center (within the regular street grid) there are many enclaves with their own tiny yards, gardens, cul-de-sacs, ramshackle buildings. Yes, there are fewer and fewer of them but they still exist reminding inquisitive people or just occasional visitors that there is *another city* unknown to flâneurs...

And then there is Kond. Great. Unconquered.

They are self-governing units that remained unsubdued. Here people, outwardly looking like everyone else, were able to build their small towns from scratch which run parallel to the imperial city. They successfully employed the "tactic of refusal." It serves as a good model not only for Yerevan's inhabitants. When the empire looms large, the tactic of refusal sometimes has to be adopted on a personal level as well... ❶

A 'normal' flâneur walking every day along Mashtots Avenue (built during the Soviet era, formerly known as Stalin Avenue) or Northern Avenue (already post-imperial at the time of its creation; its form imitates imperial styles whereas its spirit is utterly imperial – a manifestation of the very self-colonization), and never transgressing the boundaries of suitable places and ignoring what is concealed behind the façades, imbibes the imperial structures, their aura permeates his skin and his mind at every turn (as if impairing his ability to think). Traces of the colonial past are deeply ingrained in the urban fabric, they pervade the present and run into the future.

As we cheerfully walk down Tverskaya Street... ❷ Indeed cheerfully, and not the other way around. Our favorite cafes and bookstores, our museums and theaters nestled among the foothills of Stalinist buildings; our childhood movies were shot in those places, our first romantic encounters took place on those sidewalks. We were so enchanted by those chimeras. We injected the drug of imperial architecture into our bodies and became addicted...Kyiv's inhabitants strolled along their

❶ Rubinstein, Lev (2019, February 6) *The Poetics of Refusal* [in Russian] → www.inliberty.ru/blog_39/ (We were not at war with the official culture. Our strategy was much more radical than any war; we simply rejected the system outright).

❷ A quote from Bulat Okudzhava's song- → <https://ruverses.com/bulat-okudzhava/the-artists/>.

քրտինքով՝ բանեցնելով տուն և միջավայր կառուցելու իրենց իմացած հնարները: Սա քաղաքային ինքնազարգացման հորիզոնական ուղղությունն է՝ ուղղահայաց կայսերականի այլընտրանքը:

Այս ուղղահայացը քաղաքներին էր պարտադրում փքաշուք հրապարակներ ու պողոտաներ՝ իբրև վերևից շնորհվող պարգևներ: Սակայն դրանց կիսապաշտոնական ճակատամասն իրականում շիտակ ու անկեղծ հորիզոնական քաղաքը քողարկող *ճածկույթ* էր:

Ինքնավար քաղաքը: Հակահիերարխիկ:

Այլընտրանքային: Քաղաքային պաշտոնյաների ու ճիշտ քաղաքացիների մեծամասնության մեջ ատելություն հարուցող:

Կայսերական ճարտարապետությունը պաշարեց ու իր ծանրության տակ ճզմեց *թույլ* ու կայսրության համար անպիտան այս մասնատիրական միջավայրը, որը ենթադրաբար վաղ թե ուշ պիտի ոչնչացվեր: Իր հեղինակի՝ շարքային աշխատավոր երևանցու կամ ապրուստն ինքնուրույն հոգացող գյումրեցի որմնադրի հետ միասին: Բայց բանը դրան չհասավ...

Այսօր էլ Երևանի Փոքր կենտրոնի

ընդարձակ բակերում (փողոցների ցանցաձև դասավորության մեջ) կհանդիպեք վերնակույյար անկլավների՝ իրենց գողտրիկ բակերով, պարտեզներով, փակուղիներով, կիսավեր շենքերով: Օրեցօր քչանում են, բայց դեռ ապրում են՝ քննասերներին ու պատահական անցորդներին պատմելով *առիչ* քաղաքի մասին, որը չի երևում պողոտաներում ճեմողներին:

Կա Կոնդը: Հզոր: Անառիկ:

Կայսրությունն այս ինքնավար միավորների հախից չկարողացավ գալ: Արտաքուստ մնացածից չտարբերվող տեղացիները ցածրից շինեցին իրենց մանրակազմ քաղաքները՝ կայսերականին զուգահեռ: Հաջողությամբ գործի դնելով *հրաժարվելու մարտավարությունը*: Օրինակելի բան է ոչ միայն երևանցիների համար: Երբ կայսերականը վրա է հասնում, դրա հետ երբեմն անձնապես էլ այս խաղը պիտի խաղալ ❶...

Իսկ *նորմալ* քաղաքաբնակը, ամեն օր դանդաղ չափչփեելով խորհրդային տարիներին կառուցված Մաշտոցի պողոտան (անցյալում՝ Ստալինի) կամ հետխորհրդային շրջանում գցված Հյուսիսայինը (արտաքննապես կայսերականի նմանակն

❶ Рубинштейн, Лев.
Поэтика отказа. 06.02.2019
→ https://www.inliberty.ru/blog_39/

(...Մենք ամենևին էլ պատերազմ չէինք մղում պաշտոնական մշակույթի դեմ: Մենք ավելի արմատական կեցվածք էին ընդունել՝ այն ուղղակի մերժելով):

mega-imperial (and surprisingly warm at the same time) Khreshchatyk filled with the same affection...

Does one need missile attacks to rise above the façade colonialism imposed from above and supported by local *high* architecture, to dispel its charm and the fallacy that imperial structures will be reproduced forever? Are there other options?

I believe that there are. If you are in Armenia, visit the courtyards in the center of Yerevan, go to Kond, to Old Nork, Aygestan, Kanaker, Saritagh...

You should definitely visit Gyumri – the most amazing, the most powerful alternative to the imperial chimera – a lively vernacular city which, though founded and largely created by the empire, successfully defied imperial rule from the very beginning. ❶

Why do I believe so? I went through this. It was a gradual awakening and then I could get the picture.

I am deeply indebted to the Armenian vernacular which played such a significant role in my life.

Let's go to Getar. Let's listen to the river. Let's look around. Let's meditate. Let's dream.

Vernacular Project.

Delineating Getar (Reality/Dream)

One day we will construct cities
for *dériving*...with light
retouching, one can utilize
certain zones which already
exist. One can utilize certain
persons who already exist.

Guy Debord, Theory of the Dérive

Anyone drifting around this place can:

- ◇ marvel at the unusual setting and enjoy it;
- ◇ immerse oneself in this unique and human-scale urban milieu, see and hear things that are not found elsewhere in the city;

❶ Ivanov, A. Gyumri (2001). *The Vernacular of Black Tufa*. Yerevan [in Russian]. In his review of this book, Armen Gasparyan, a filmmaker and writer from Gyumri, wrote:
...Vernacular means disobedience, anarchy in stones. This kind of architecture is a gesture of defiance against norms, standards, rules and conventions. This

is a state within a state [Gasparyan, A. (2021, May 12). *The Vernacular of Black Tufa*.

→ <https://telefonbabo.com/vernakulyar-chyornogo-tufa/>.

To be fair, I have to add that the vernacular of Alexandropol-Gyumri was created in accordance with some distinct unwritten rules.

է, իսկ էութեամբ՝ տիպիկ կայսերական, ինչը ինքնագաղութացման վառ օրինակ է), իրեն դուրեկան վայրերից այն կողմ ոտք չդնելով և անտեսելով դրանց հակառակ երեսը, այսպես թե այնպես կլանում ու շնչում է կայսերականը, որը թափանցում է մարմնի ու մտքի (արդեն չքացած) ծակոտիներ: Քաղաքային հյուսվածքը ներծծված է գաղութատիրական բարքերով, որոնք շարունակ տարածվում են՝ միայն ներկայով չսահմանափակվելով:

Ինչպես մենք ենք սիրով համակված զբոսնում Տվերսկայա փողոցով...: ❶ Իսկապես սիրով համակված, ուրիշ էլ ինչպէս: Մեր սիրելի սրճարաններն ու գրախանութները, մեր թատրոններն ու թանգարանները ծվարել են ստալինյան բարձրակառուցների ստորոտին, մեր մանկության ֆիլմերն այդ վայրերում էին նկարահանվել, մեր պատանեկան սերերն այդ մայթերին էին ծնվել: Այդ քիմեռները հմայել էին մեզ. կայսերական ճարտարապետության թմրանյութը ներարկել էինք մեր մարմնի մեջ ու ընկել դրա թակարդը...

Կիւնցիները նույն բերկրանքով էին անցնում իրենց գերկայսերական (ի զարմանս մեր՝ նաև տաքուկ) Կրեշչատիկ փողոցով...

Արդյոք վերևից պարտադրված ու տեղի «բարձր» ճարտապետության միջոցով թևեր առած ֆասադային գաղութականությունից ու դրա կախարդանքից, կայսերական ձևերի վերարտադրության խաբկանքից ազատվելու համար հարկավոր է գնդակոծել ու հրթիռակոծել դրանք: Ուրիշ միջոց չկա:

Կարծում եմ՝ կա: Եթե Հայաստանում ենք, մտնենք Երևանի կենտրոնական բակեր, բարձրանանք Կոնդ, հասնենք Այգեստան, ուղևորվենք Նին Նորք, Քանաքեռ, Սարի թաղ...

Ու անպայման այցելենք Գյումրի, որը կայսերականության ամենախնքնատիպ ու կենսունակ այլընտրանքն է: Կայսրության ծնունդ լինելով հանդերձ՝ այս վերնակույր քաղաքը կարողացավ ի սկզբանե հաջողությամբ դիմակայել իր արարչին ❷:

❶ Մեջբերում Բուլատ Օկուլզավայի «Գեղանկարիչները» երգից:

❷ *Иванов А. Гюмри: вернакуляр черного туфа. Ер.: Коллаж, 2021. Այս գրքի մասին իր գրախոսականում ռեժիսոր և գրող Արմեն Գասպարյանը նշում է. ... վերնակույրը անհնազանդ լինելն է, քարերի անարխիան: Սա ճարտարապետություն է ընդդեմ*

նորմերի, չափանիշների ու պայմանականությունների: Պետություն է պետության մեջ... (Гаспарян А. Вернакуляр черного туфа. 12.05.2021 → <https://telefonbabo.com/vernakulyar-chyornogo-tufa/>): Իբրև դիտողություն հավելեմ, որ այլքսանդրապոլյան ու Գյումրու վերնակույրը ստեղծվել է որոշակի չգրված կանոնների համաձայն:

- ◇ not feel like a stranger (*too familiar* environments sometimes seem alien to us);
- ◇ do something that is impossible elsewhere;
- ◇ encounter the incomprehensible;
- ◇ rejoice in the rare harmony of comfort and freedom that Getar offers to us;
- ◇ gain a bit more freedom and strength, feel a bit more alive, become a bit better Yerevantsi;

Let me name several *attractive features* of the quarter. I'll also fantasize a little about the ways of supporting and reinforcing them, of drawing attention to them, of making the local milieu more discernible. However, I will intentionally skip over the details that describe *how* it could be achieved. Let's start (and possibly finish) with a dream.

Balconies overlooking the river

Several balconies already glide above the waves of Getar. They add a unique touch to this place – one will not find anything like this elsewhere in Yerevan.

One should invite skilled stonemasons and carpenters so that they build a dozen new balconies suiting the taste of the artisans or the owners of the riverside houses. One should also add subtle vernacular practices (the work of *varpets* or masters) to the area instead of increasing the number of illegal constructions.

Tower of Getar

On the left bank, next to the first bridge over the river, there is an old, abandoned three-storey tower that incorporates some historic decorative elements.

One should modernize the tower so that it can function as a public space (café, gallery, meeting room, viewing platform) or perhaps transform it into a small campanile. The chimes of its bells will add to Getar's euphony. Where the river has no beginning or end, a bell tower without a temple is also possible.

Overland link. Street trade

There are already several small businesses (a hair salon, a *food court*, etc.) along the 2nd Lane of Tigran Mets Avenue which connects the two sections of the riverbed (on the left bank, from the *tower of Getar* to Nar-Dos Street). These local enterprises should be supported which will provide

Ինչու եմ կարծում, որ կամ: Իմ փորձից գիտեմ: Աչքերդ, աստիճանաբար են բացվում, բայց վերջում ամեն ինչ պարզորոշ տեսնում ես: Երախտապարտ եմ հայկական վերնակույսարին, որը մեծ իրադարձություն էր իմ կյանքում:

Գետառ էլ գնանք: Լսենք գետին: Նայենք: Խորհենք: Երագենք:

**Վերնակույսար նախագիծ:
Գետառի ուրվանկարը (իրականություն/երագ)**

Մի օր հատուկ դրեյֆի համար քաղաքներ կկառուցվեն: Այդ նպատակին կարող են ծառայել արդեն գոյություն ունեցող քաղաքային տարածքները՝ ենթարկվելով չնչին փոփոխության: Այդ նպատակին կարող են ծառայել արդեն գոյություն ունեցող ումանք:

Գի Դեբոր («Դրեյֆի տեսությունը»)

Դրեյֆով տոգորված ու այստեղ հայտնված քաղաքաբնակը հնարավորություն ունի՝

◊ նոր բան սովորելու և ճաշակելու.

◊ մարդու չափով ստեղծված անսովոր ու մեկուսի միջավայրում ընկղմվելու, լսելու և տեսնելու այն, ինչ ուրիշ տեղ չկա.

◊ իրեն խորթ չզգալու, ինչը երբեմն պատահում է չափից դուրս ծանոթ վայրերում.

◊ անելու այն, ինչ այլուր անկարելի է.

◊ շոշափելու անշոշափելին.

◊ գոհանալու հանգստավետության ու ազատության ներդաշնակությամբ, որ պարզևս է Գետառը.

◊ դառնալու մի քիչ ավելի ազատ, մի քիչ ավելի տոկուն, մի քիչ ավելի կենսուրախ, մի քիչ ավելի երևանցի:

Թվեմ այս թաղամասի «ուժեղ կողմերից» մի քանիսը:

Մի քիչ էլ երևակայությանն անձնատուր լինեմ՝ ցույց տալու, թե ինչպես կարելի է դրանք ավելի գրավիչ դարձնել, ինչպես ուշադրության արժանացնել ու հղկել տեղայինը:

Բայց միտումնավոր չեմ գրելու այն մասին, թե *ինչպես* պիտի իրականություն դառնան ասածներս: Ուրեմն սկսենք (ու հավանաբար ավարտենք) երագելով:

Դեպի գետ բացվող պատշգամբներ

Մի քանիսն արդեն թևածում են Գետառի վերևում՝ իրենց ինքնատիպ դրոշմը դնելով

a useful link between the two eco-segments (coffee shops, souvenir shops, a mini-market, etc.).

Garages: Selective conversion

Today the river is partially isolated from the city by private garages. In Yerevan there is an inspiring example of an ordinary iron garage transformed into a stylish art gallery (*Oror* ❶) by Alexander Mereskin and Mariam Khachatryan. Others should follow their example.

Riverside boulevard

In the long run, the row of garages should be replaced with a public boulevard on the left bank (to the west of the 2nd Lane of Tigran Mets Avenue, between Nar-Dos and Kristapor streets).

Bridges

The modern minimalist design of railings is ideal for vernacular quarters; it could improve the image of a long neglected environment at minimal cost. That's what happened in Kond in 2021-2022 after the renovation of several stairs leading to the neighborhood from Saryan and Leo streets. It could happen here as well.

Paths leading down to the water's edge

Now the river is inaccessible to visitors (one can get there only through the gates of a few privately owned houses). It's necessary to build at least three or four publicly accessible pathways leading to the river and if possible, picnic spots along the riverbanks.

Fords. Wading across the water

Getar is shallow and stony. The rental of colorful and wide width rubber boots (plus street lights with garlands) gives citizens a rare opportunity to stroll along the shallows – slowly, unhurriedly, unlike our walking pace down the streets – and have a lovely time.

❶ → <https://www.buro247.ru/lifestyle/travel/5-nov-2020-oror-shop-in-yerevan.html>

տեղանքի վրա, որը Երևանի մյուս անկյուններում չես գտնի:

Հրավիրել հմուտ քարագործների ու ատաղձագործների, որ իրենց կամ գետամերձ շինությունների տերերի ճաշակին համահունչ տասնյակ նոր պատշգամբներ էլ պատրաստեն:

Թաղամասում շատացնել ճկուն վերնակույր պրակտիկան (վարպետների գործերը) ինքնակամ կառուցապատման փոխարեն:

Գետառի աշտարակը

Ձախ ափին՝ գետի վրայով գցված առաջին կամրջի հարևանությամբ, եռահարկ լքված մի շինություն կա՝ պատմական զարդարանքի տարրերով:

Արդիականացնել և օժտել հանրօգուտ գործառնություններով (սրճարան, պատկերասրահ, հանդիպումների սրահ, տեղանքը վերևից դիտելու հարթակ): Իսկ տանիքին թերևս զանգակատուն կառուցել: Գետառի բազմաձայնությանը մի հնչյուն էլ ավելացնել: Եթե մի տեղ գետը անսկիզբ ու անվերջ է, զանգակատունն էլ կարող է անտաճար լինել:

Ցամաքային կապ: Փողոցային առևտուր

Գետի չփակված երկու հատվածները միացնող Տիգրան Մեծի պողոտայի Երկրորդ նրբանցքի երկայնքով ծառայություններ մատուցող մի քանի ոչ մեծ օբյեկտներ կան (վարսավիրանոց, «Ֆուդկորտ», էլի ինչ-որ բան): Հարկավոր է շատացնել ծառայությունները՝ գործառնական կապ ապահովելով այս երկու էկոսեգմենտների միջև (սրճարաններ, հուշանվերների կրպակներ, մինի շուկա և այլն):

Ավտոտնակները: Մասնակի փոխակերպում

Այսօր մասնավոր ավտոտնակները մասամբ մեկուսացրել են գետը քաղաքային միջավայրից: Երևանի հասարակ մետաղական ավտոտնակներից մեկը վերածվել է արվեստի հոյակապ խանութ-սրահի («Օրոր»)❶, որի հեղինակներն են Ալեքսանդր Մերեսկինը և Մարիամ Խաչատուրյանը: Այս հաջող փոխակերպմանը կարող են հաջորդել մյուսները:

Floating. The quintessence of the dérive

Two ideas for a micro-eco-recreational pursuit in the heart of a big city.

Dynamic: rifling along the river equipped with baskets and other supplies for clean-up – a healthful, enjoyable and beneficial (for Getar) undertaking.

Static: floating cabins for meditating, gazing at the stream.

Balustrades, grilles, fences

The banks of Getar are the boundaries of a city within a city – they should be clearly marked by all means.

One should adopt unconventional and creative approaches. The idea of periodically launching art competitions to redesign the grilles in key locations (like the Serpentine Gallery pavilions in London's Kensington Gardens) sounds quite feasible.

Botanical experiment

In the winter Getar's wild plants are not conspicuous but in the summer their dense foliage enshrouds the river.

First, one should carefully prune the overgrown shrubs that block the view and then gradually replace self-sowing annuals with riverside trees and other cultivated plants as well as propagate aquatic flowers (native to Armenia) as an embellishment to the water.

Festival of Getar

Here is an idea for such a festival – hold handmade boat and/or floating lantern contests judged by city dwellers of different ages.

Fish restaurant

A restaurant can be opened replacing the car wash on the bridge over Getar on Kristapor street.

In this dream world

Over the stream
The willow is bent,
It stares in silence
On the running water.

In this dream world
All things are forever

Առաինյա զբոսայգի

Ավտոտնակների շարանի վաղվա (հեռանկարային) այլընտրանքը պիտի դառնա զբոսայգին, որն ընկած կլինի գետի աջ ափին՝ Տիգրան Մեծի պողոտայի երկրորդ նրբանցքից դեպի արևմուտք (Նար-Դոսի և Քրիստափորի փողոցների արանքում):

Կամուրջներ՝ մեծ ու փոքր

Մինիմալիստական ոճով կառուցված ճաղաշարերը վայելուչ են վերնակույյար թաղամասերին ու առանց մեծ ծախսեր պահանջելու կարող են կերպարանափոխել անհյուրընկալ միջավայրը: Այդպես եղավ Սարյանի ու Լեռնի փողոցներից դեպի Կոնդ տանող աստիճաններից մի քանիսը 2021-2022 թթ. վերակառուցելուց հետո:

Գետ տանող կաճաններ

Այսօր գետափը հասանելի չէ թաղամաս այցելողներին (գետին կարող են մոտենալ միայն մի քանի մասնավոր շինությունների դարպասներից):

Հարկավոր է մատչելի արահետներ բացել, գոնե երեք-չորսը: Հնարավորության դեպքում էլ սրանց հարևանությամբ բացօթյա ժամանցի համար փոքրիկ անկյուններ ստեղծել:

Ծանձադուտներ: Քայելը ջրի վրայով

Գետառը ծանձաղ է ու քարքարոտ: Մեծ ու գունավոր ռետինե ճութակոշիկների վարձույթը (սրան գումարած լուսազարդ փողոցները) հնարավորություն կտա մարդկանց շրջելու գետի վրայով՝ համրաքայլ, անշտապ (փողոցում հո չեն), հաճույք ստանալու ջրի հետ հաղորդակցվելուց:

Նավարկում: Դրեյֆի ոգին

Ահավասիկ մեծ քաղաքի սրտում միկրո-էկոզբոսաշրջության երկու օրինակ.

Դինամիկ – գետի վրայով փոքր լաստերով նավարկել (ռաֆթինգ)՝ գինված տեղանքը մաքրելու համար անհրաժեշտ պարագաներով: Սպորտ, հաճույք ու օգուտ (Գետառի մաքրությունը) մի գործողության մեջ:

Ստատիկ – լողացող կիսաբաց խցերում ունկնդրել ջրի քչիչոցը, խորհրդածել:

Բազրիքներ: Ճաղավանդակներ: Ցանկապատեր

Գետառի ափերը քաղաքամեջ քաղաքի սահմաններն են: Դրանք պիտի ամեն կերպ ավելի ակնառու դարձնել:



Future
is
E.M.M.

Գտնել գեղարվեստական/ստեղծագործական ոչ միօրինակ լուծումներ: Գետառի կարևոր հատվածների համար մրցույթի միջոցով արվեստագործ ճաղավանդակներ ընտրելու ու դրանք պարբերաբար փոխելու գաղափարը իրագործելի է թվում (օրինակ կարող են ծառայել Serpentine Gallery-ի տաղավարները Լոնդոնի Քենսինգթոնյան այգիներում):

Բուսաբանական փորձ

Ձմռանը Գետառում տարածված վայրի բույսերն ուշադրություն չեն գրավում, բայց տաք եղանակին դրանց խիտ սաղարթը ծածկում է գետը:

Նախ էտել տերևախիտ ճյուղերն այնպես, որ գետը տեսանելի լինի:

Ապա աստիճանաբար ինքնացան բույսերը փոխարինել մշակովի ծառերով ու թփերով, ինչպես նաև գունազարդել գետը Հայաստանի տարածքում հանդիպող ծաղկավոր ջրային բույսերով:

Գետառի փառատուն

Կազմակերպել ձեռակերտ նավակների և/կամ լողացող լապտերների մրցույթներ: Ժյուրին էլ կազմված լինի մեծ ու փոքր քաղաքացիներից:

Ձկնային ռեստորան

Քրիստափորի փողոցում կամրջին կառուցված ավտովազման կետը կարելի է վերածել ձկնային ռեստորանի:

Երազ աշխարհում

Գետակի վրա
Թեքվել է ուռին
Ու նայում է լուռ
Վազող ջրերին:

...Երազ աշխարհում
Ամեն բան հավետ
Գալիս է, գնում
Ու ցնդում անհետ:

Եվ գլուխը կախ՝
Նա լաց է լինում,
Ջրերը ուրախ
Գալիս են, գնում...
Ավետիք Իսահակյան

Coming and going away,
Fading away, traceless.

And with its head bowed
The willow weeps-
The laughing water keeps
Coming and going away.

Avetik Isahakyan
(Translated by Aram Tolegian)

Finishing the *dérive*

In terms of modern urban planning Yerevan is badly lagging behind the rest of the world. Local and global trends seem like polar opposites.

Everywhere antiquities are cherished and restored, whereas here they are demolished.

Everywhere local traditions are acknowledged and respected, the most modest artifacts of local history are preserved alongside the most remarkable and well known monuments, whereas here they are largely neglected and wiped out.

The world promotes urban diversity utilizing its historical and cultural potential, whereas here it is leveled and nullified.

Elsewhere nations decolonize their history and culture, whereas here the country colonizes itself.

Elsewhere buried rivers are being restored, whereas here they continue to be buried.

But things have changed suddenly. People mainly left the country in recent decades. During that time Getar was mostly deserted. Now, they are coming back.

One may rightly wonder whether this unsightly stream could possibly appeal to hipster programmers. As a matter of fact, they cannot dream of a place which is neglected even by the locals. *But who knows? The historic environment is, by its nature, irrational, it cannot be created from scratch, it is a rather chaotic structure. For instance... programmers like such irrational things. Though they enjoy calculating everything, they are addicted to chaos*, notes Andrey Kochetkov, an urban activist based in Samara. ¹

¹ Kochetkov, Andrey (interview, 2021, March 3). *The city with its own charms can better compete for residents*.

→ <https://volga.news/article/573022.html>.

Ավարտելով դրեյֆը

Քաղաքաշինության տեսանկյունից Երևանը ահավոր հետ է ընկել համաշխարհային ուրբանիստական միտումներից: Այստեղ ամեն ինչ հակառակ է:

Ամենուր հինը փայփայում ու վերականգնում են, այստեղ՝ քանդում:

Ամենուր տեղականը վերհանում ու արժևորում են, պահպանում ոչ միայն ամենագեղեցիկն ու ամենաարժեքավորը, այլև աչքի չընկնող մասունքները: Այստեղ դրանք անտեսվում ու վերացվում են:

Աշխարհում գնահատում են քաղաքային բազմազան միջավայրը, օգուտ քաղում պատմամշակութային ներուժից, այստեղ՝ համահարթեցնում ու զրոյի հավասարեցնում տարբերվողը:

Մյուսներն իրենց պատմությունն ու մշակույթն են գաղութատիրության հետքերից մաքրում, այստեղ քաղաքն ինքն իրեն է գաղութացնում:

Ամեն տեղ ի հայտ են բերում գետնի տակ փակված գետերը, այստեղ՝ շարունակ քողարկում:

Բայց անսպասելի մի բան է կատարվել:

Վերջին տասնամյակում մարդիկ այստեղից հիմնականում հեռանում էին: Այս ընթացքում դատարկվել էր նաև Գետառի մեծ մասը: Այժմ վերադառնում են:

– Չիփսթեր ծրագրավորողներն ինչ կարող են գտնել այս անշուք եզերքում, – իրավամբ կհարցնեք դուք: Ինչպես մարդ կարող է երագել մի վայրի մասին, որը նույնիսկ երևանցիներն են մոռացել: Բայց ո՞վ գիտի... *Պատմական միջավայրը իռացիոնալ բնույթ ունի, ոչ զրոյից է ստեղծվում, ոչ էլ որոշակի կառուցվածք ունի: Այդպիսի իռացիոնալ բաները գրավում են... օրինակ՝ ծրագրավորողներին: Նրանք սիրում են ամեն ինչ չափել, բայց իրականում իրենց քառսն է դուր գալիս, – նկատում է քաղաքային ժառանգության պաշտպանությամբ զբաղվող սամարաբնակ Անդրեյ Կոչետկովը¹:*

Գետառի կերպարանափոխմանը կարող են օժանդակել թե՛..., բազմակետ..., թե՛... էլի բազմակետ...

Ես են բանաստեղծությամբ սկսել էմ, այդպես էլ կավարտեմ: Ուկրաինացի բանաստեղծ Բորիս Խերսոնսկու տողերն ուղղված են բոլորիս՝ Գետառի մասին երագն ի կատար ածողներին:

¹ Андрей Кочетков.
Город со своим вкусом может
лучше конкурировать за жителей
(интервью). 03.03.2021

→ <https://volga.news/article/573022.html>.

Nevertheless, Getar's environment can also
be transformed by such agents of change as...
another ellipsis... and another one...

I finish the essay with a poem written by the
Ukrainian poet Boris Khersonsky and addressed to all
of us – the key players in the future transformation of
Getar.

Dear fans of the Odessa sunbathing season,
Did you know that there is a river flowing through the city,
The river of forgetfulness, the unforgettable Lethe?
It runs not into the sea, but into unremembered ages...
It never demands anything, never begs for anything,
It runs into everyday life, into its funny anarchy.
It washes away the roads we swagger along,
It washes away street names and old mansions,
It runs into the place where our luck runs out,
At the incredible speed of an unfinished line.
(Translated by Hovhannes Galstyan)

Dear fans of the Yerevan summer season,
did you know that there is a river flowing
through the city, the river of forgetfulness, the
unforgettable Getar...?

Հարգելի մարդիկ՝ Օդեսայի ամառվա ափերով տարված,
Գիտեի՞ք, որ մի գետ է քաղաքով անցնում,
Մոռացության գետը, Լեթան անմոռաց,
Որ ոչ թե ծովն է թափվում, այլ դարերի ծոցը անհուն...
Ոչինչ չի պահանջում, ոչ էլ խնդրում,
Առօրյա կյանք է լցվում, նրա անլուրջ հոսանքին խոնվում,
Ողողում ճամփան, որով հաղթական ենք քայլում,
Սրբում անունները փողոցների, քշում տները հնամենի,
Գլորվում այնտեղ, որտեղից մենք ենք գլորվում
Անավարտ տողի պրագուխամբ ամենի: ❶
(Թարգմանությունը՝ Հովհ.Գալստյանի)

Հարգելի մարդիկ՝ երևանյան արևի ոսկով
տարված, գիտեի՞ք, որ մի գետ է քաղաքով
անցնում, մոռացության գետը, Գետառն
անմոռաց...

❶

Дорогие любители одесского пляжного лета,
знаете ли, что по городу протекает река,
река забвения, незабвенная Лета,
она впадает не в море, а в канувшие века, ...
она ничего не требует, она ни о чем не просит,
она впадает в обыденность, в ее смешной беспредел.
она смывает дороги, на которых мы побеждаем,
смывает названия улиц, и старые особняки,
она впадает туда, откуда мы выпадаем,
с немислимой скоростью незавершенной строки.


The Visual Memory of the River

Har Toum

Գետի Կերպավորումը

Getar in the industrial district of
Yerevan, 1900-2000's.


Գետաջր Երևանի արդյունաբերական
թաղամասում, 1990-2000-ականներ:





A flood in the Proletarian cinema square
(currently the Charles Aznavour square),
1924.

Ջրհեղել «Պրոլետար» կինոթատրոնի
հրապարակում (այժմ՝ Շառլ Ազնավուրի
հրապարակ), 1924 թ.



Getar and the ropeway of Yerevan,
Koryun street, 1980's.

Գետաքար և Երևանի ճոպանուղին, Կորյունի
փողոց, 1980-ականներ:





A scene from the movie “Hayrik” at the Nalbandyan-Isahakyan crossroad, 1972. YouTube channel of the National Cinema Center of Armenia.

Տեսարան «Հայրիկ» ֆիլմից, Նալբանդյան-Իսահակյան խաչմերուկին, 1972 թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնի յութուբյան ալիք:



One of the Getar bridges, which connects Khanjyan Street with Circular Park.

Գետառի կամուրջներից մեկը, որը կապում է հանջյան փողոցը և Օղակաձև զբոսայգին:



Getar's pedestrian bridge at the
Tumanyan-Khanjian crossroad, Circular
park.

Գետառի հետիոտն կամուրջը Քումանյան-
հանջան խաչմերուկին, Օղակաձև
գրոսալգի:



Վիզուալ նյութերի հեղինակներ և աղբյուրներ Creators of the visual content and sources

Հարություն Թումաղյան
Harutyun Tumaghyan

Կլիմ Գրեչկա
Klim Grechka

Արսեն Աբրահամյան
Arsen Abrahamyan

Կարին Պողոսեան
Garine Boghossian

ՀՀ Ազգային արխիվ
The National Archives of Armenia

Երևան քաղաքի պատմության թանգարան
The History Museum of Armenia

Գետառ. գետի հիշողությունը: Խմբային մենագրություն,
խմբ. Ամիրյան Տ., Գալստյան Հ. CSN Lab, Երևան, 2023, 222
էջ:

Getar: Memory of a River. Collective monograph ed. by
Amiryan T. Galstyan H., CSN Lab, Yerevan, 2023, 222 p.

© CSN Lab

Տպագրված է «Անտենոր» հրատարակչությունում, 2023թ.,
Արովյան, Հայաստան
Printed at Antenor Publishing House, 2023, Abovyan, Armenia

Getar: Memory of a River.
Collective monograph ed. by
Amiryan T. Galstyan H.,
CSN Lab, Yerevan, 2023, 264 p.

This book reveals the significance of the Getar River for the formation of Yerevan's social and urban memory. The river is studied through various methods and disciplines (anthropology, urban studies, environmentalism, etc.). Together with architects, photographers and illustrators, the authors of this book explore Getar's geopoetics and hydro-poetics, as well as create a unique visual image of the river. In addition to rich and authentic visual materials, the publication includes oral stories of Yerevan's inhabitants, in whose memories Getar continues to be a vital part of the city's identity.

Գետառ. գետի հիշողությունը:
Խմբային մենագրություն, խմբ.
Ամիրյան Տ., Գալստյան Հ., CSN
Lab, Երևան, 2023, 264 էջ:

Այս գիրքը բացահայտում է Գետառ գետի կարևոր նշանակությունը Երևան քաղաքի սոցիալական և ուրբանիստական հիշողության ձևավորման գործում: Գետն ուսումնասիրվում է տարբեր մեթոդների և գիտակարգերի միջոցով (մարդաբանություն, ուրբանիզմ, բնապահպանություն և այլն): Համագործակցելով ճարտարապետների, լուսանկարիչների և նկարազարդողների հետ՝ գրքի հեղինակները ի հայտ են բերում Գետառի գեոպոետիկան և հիդրոպոետիկան, ինչպես նաև ստեղծում գետի ուրույն վիզուալ պատկերը: Հարուստ և ինքնատիպ վիզուալ նյութերից զատ հրատարակությունը ներառում է քաղաքացիների հուշերն ու բանավոր պատմությունները, որոնցում Գետառը շարունակում է մնալ քաղաքի ինքնության կարևոր մասը: